

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

1 (11)

2023

*Հանդեսը հրատարակվել է Հովհաննես Թումանյանի մահվան
100-ամյա տարելիցի առիթով՝ ներառելով միայն
թումանյանագիտական նյութեր*

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

***Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը***

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ **Արմեն Ճուղուրյան**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, Հյուսիսային համալսարան

Խմբագրական խորհրդի անդամներ

Լուսինե Տլջյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Հյուսիսային համալսարան

Աստղիկ Աբրահամյան, բանասիրական գիտությունների թեկնածու, Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար

Արթուր Ղամբարյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան

Վալերի Միրզոյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազատ հետազոտող

Պիթեր Կոստա, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սլավոնական լեզուների ամբիոնի վարիչ, Պոցդամի համալսարան, Գերմանիա

Ռադովան Ստոյանովիչ, Էլեկտրական ճարտարագիտության և համակարգչային գիտությունների դոկտոր, Էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Մոնտենեգրոյի համալսարան

Վիտալիյ Կոպնով, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի խորհրդական, Ռուսական պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Գոհար Պետրոսյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ «Միջազգային հանցագործություն և արդարադատություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Նյու-Յուրք Սիթի համալսարան ԱՄՆ

Սերգեյ Զմիյակ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, «Միջազգային տնտեսություն և միջազգային տնտեսագիտական

հարաբերություններ» ամբիոնի վարիչ, Դոնեցկի պետական տեխնիկական համալսարան, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն

Նինո Ապցխաուրի, պատմագիտության դոկտոր, դոցենտ, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան, խորհրդական, Արտաքին գործերի նախարարություն, Վրաստան

Նինո Աբեգաձե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Վիճակագրական տնտեսագիտության ամբիոն, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան

Իլուտա Արբիդանե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռեզեկնեի տեխնոլոգիական ակադեմիա, Լատվիա

© «Հյուսիսային համալսարանի հրատարակչություն», 2023 թ.

ЮСИСАПАЙЛ

(Северное сияние)

НАУЧНЫЙ ЖУРНАЛ СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

1 (11) 2023

Редакционная коллегия

Главный редактор – **Армен Джугурян**, доктор экономических наук, профессор, заведующий кафедрой экономики и менеджмента, Северный университет

Члены редакционной коллегии

Лусине Флджян, доктор филологических наук, профессор, проректор по учебно-исследовательской работе и интернационализации, Северный университет

Асттик Абраамян, кандидат филологических наук, руководитель учебно-практического центра по связям с общественностью и СМИ, Северный университет

Артур Гамбарян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права, Российско-армянский (Славянский) университет

Валерий Мирзоян, доктор философии, профессор, свободный исследователь

Питер Коста – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой славянских языков, Поцдамский университет, Германия

Радован Стоянович, доктор инженерных и компьютерных наук, профессор факультета электрической инженерии, Университет Черногории, Черногорье

Виталий Копнов, доктор технических наук, профессор, советник ректора, Российский государственный профессионально-педагогический университет, Россия

Гоар Петросян, доктор юриспруденции, доцент, директор магистерской программы “Международная преступность и правосудие”, Городской университет Нью-Йорка, Университет, США

Сергей Змияк, доктор экономических наук, доцент, заведующий кафедрой "Мировая экономика и международные экономические отношения", Донской государственный технический университет, Донецкая Народная Республика

Нино Апциаури, доктор исторических наук, доцент, кафедра арменологии, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, советник, Министерство иностранных дел, Грузия

Нино Абездзе, доктор экономических наук, профессор, кафедра экономической статистики, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, Грузия

Илута Арбидане, доктор экономических наук, профессор, кафедра экономики и менеджмента, Резюкненская академия технологий, Латвия

HYUSISAPAYL

(Northern Lights)

SCIENTIFIC JOURNAL OF NORTHERN UNIVERSITY

1 (11) 2023

Editorial Board

Chief Editor` **Armen Tshughuryan**, Doctor of Sciences in Economics, Professor, Head of the Chair on Economic and Management, Northern University

Members of the Editorial Board

Lusine Fljyan, Doctor of Sciences in Philology, Professor, Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University

Astghik Abrahamyan, PhD in Philology, Head of Media and Public Relations Training Centre, Northern University

Artur Ghambaryan, Doctor in Law, Professor, Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian (Slavonic) University

Valeriy Mirzoyan, Doctor of Philosophy, Professor, Freelancer

Peter Kosta, Professor Doctor phil. habil, Head of the Chair of Slavic languages, Potsdam University, Germany **Vitaliy Kopnov**, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Gohar Petrossian, PhD in Law, Associate Professor, Director of International Crime and Justice MA Program, City University of New York, USA

Vitaliy Kopnov, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Radovan Stojanović, Doctor in Electrical Engineering and Computer Sciences, Professor at the Faculty of Electrical Engineering, University of Montenegro, Montenegro

Nino Abezadze, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic Statistics, Ivane Javakhishvili State University, Georgia

Iluta Arbidane, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic and Management, Rēzekne Academy of Technologies, Latvia

Sergey Zmiyak, Doctor of Sciences in Economics, Professor. Head of the Chair on World Economy and International Economic Relations, Donetsk State Technical University. Donetsk People's Republic

Nino Aptsiauri, Doctor of History, Associate Professor, Chair on Armenology, Ivane Javakhishvili State University, Counselor, Ministry of Foreign Affairs, Georgia

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Վալերի Միրզոյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազատ
հետազոտող
valerimirzoyan@yahoo.de

Հանրային կյանքի վերաբերյալ բանաստեղծ փիլիսոփայի հանրա-
բանական և սոցիալ-փիլիսոփայական դիտարկումները համարժեքորեն
հասկանալու համար սկսենք նրա աշխարհայացքի և արժեքային հա-
մակարգի բնութագրումից: Այս առումով հենց սկզբից պիտի նկատենք, որ
եթե աշխարհի գեղարվեստական ընկալման և արտահայտման էության և
ձևերի առումով Հովհաննես Թումանյանի արվեստն անցել է փոփո-
խության և զարգացման որոշակի փուլեր (որոնք հանգամանորեն վեր-
լուծվել են մի շարք գրականագետների աշխատություններում), ապա
անհատի ձևավորման, արժեքային համակարգի կայունացման, կենսա-
փիլիսոփայության հաստատուն հիմքի առումով արդեն 19–21-ամյա
երիտասարդը մեզ ներկայանում է որպես լիովին հասուն, ամբողջական
անձնավորություն՝ կուռ աշխարհայացքով և բարոյական հստակ
դիրքորոշմամբ:

Համոզվենք այդ տարիների նրա նամականիում հրնթացս արված մի
քանի ինքնագնահատականով. «Իմ նամակները իմ գրելու բույսի տրա-
մադրության նկարագիրներն են. ես չեմ կարող կեղծ նամակ գրել»¹: «Թող
ես խաբված լինեմ, բայց ունենամ իմ սեփական և հաստատ հույսս ու հա-
մոզմունքս»²: «Ես տանող չեմ ոչ մի բնություն, ոչ մի բարոյական ճնշում»,
«զլխիս զորագնդեր էլ կանգնացնեն, ո՛չ ոքից վախենալու չեմ»³: «Խու՛ս ձու՛
չեմ, որ կոտորվեմ»⁴:

Իսկ երբ քսաներկուամյա բանաստեղծը ականա հայտնվում է գրա-
կան-քննադատական հոսանքների, տարակարծիք ամսագրերի և տարա-
մետ կուսակցությունների բախումների հորձանքում, քսաներկուամյա
բանաստեղծը մեկեն հստակեցնում է իր սկզբունքային դիրքորոշումը.
«Ես իմ «ես»-ը ո՛չ «Նոր դարի», ո՛չ «Մշակի» և ո՛չ էլ «Մուրճի» և ուրիշի ազ-
դեցությանը չեմ զոհելու երբեք, բայց կհարգեմ և կպաշտեմ մինչև անգամ,
եթե կա մի հանրօգուտ միտք»⁵:

¹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1885–1904), ԵԼԺ, հատ. իններորդ, Եր.: ՀՍՄՀ
ԳԱ հրատ., 1997, էջ 21:

² Անդ, էջ 9:

³ Անդ, էջ 11:

⁴ Անդ, էջ 14:

⁵ Անդ, էջ 89:

Հետագայում առավել ևս, արդեն գրական անուրանալի վաստակի տեր և հսկայական հեղինակություն վայելող Հովհաննես Թումանյանը լիակատար իրավունք ուներ հատկապես իր կենսափիլիսոփայության դիրքերից հակադարձելու իր մի վայ քննադատի անհիմն մեղադրանքը. «Ես պետք է լինեմ պատմությունից վախեցողներից մինը: Ահա ես կանգնած եմ մեջտեղը ու տեղի չեմ տալու ոչ մի քայլ, միշտ իմ խոսքերի ու իմ գործերի տերը»⁶:

Երիտասարդ բանաստեղծի կերպարը լրիվ կլինի, եթե հավելենք, որ արդեն այդ շրջանի զավեշտախառն ինքնագնահատականների մեջ ցայտուն է արտահայտված յուրօրինակ, ուրույն թումանյանական հումորը: «Այն էլ գիտես, – խոստովանում է, – ընկերոջը, որ ես ինձանից խելոքների հետ եմ ընկնում. ասած ա է, թե քոսոտ է՞՞ր պարզ աղբրի ակնիցը կխմի»: «Սրանք ինձ ասում են, հավատացնում են, որ ես շատ բանջարեղ (հանճարեղ) բանաստեղծ եմ»⁷: Կամ՝ «Իմ չունեցած պատվին չգիտեմ ինչու ես դիպչում»⁸, «և ես ուշքի եկա. ասենք խելք չունեմ, որ ասեմ խելքի եկա»⁹, «շատ կարճ ժամանակ ունեցանք իրար հետ խոսելու երկու տիեզերափչակ բանաստեղծներս»¹⁰ և այլն:

Միով բանիվ՝ կասկածից վեր է երիտասարդ Թումանյանի ի սկզբանե արտահայտված սթափ, անկողմնակալ, հավասարակշռված մոտեցումը ինչպես սեփական ինքնագնահատականի, այնպես էլ հանրային կյանքի և գրական երևույթների ընդհանրական գնահատման հարցում:

Իրոք, նման մոտեցումն ականհայտ է արդեն 1887 թվականին արված ինքնակենսագրական իր գրառումներում, ավելի ստույգ՝ իր յուրօրինակ «նախապատմության» շարադրանքի փորձի մեջ, երբ նա ի մի է բերում Թումանյան տոհմի պատմությանն առնչվող զանազան դրվագներ: Մասնավորապես, որպես Լոռու ազնվական տոհմերից մեկը, ավանդաբար՝ «Մամիկոնյան ցեղից», այս մարդկանց, ըստ բանաստեղծի, բնորոշ են «իշխանական ոգին», ավանդապահությունը, պատվասիրությունը, մարտական անկոտրում ոգին («պատերազմասիրությունը»), կենսասիրությունը («ուրախասիրությունը»), կրոնասիրությունը, բայց ունեն նաև բացասական, հիմնականում ձեռքբերովի հատկություններ: Թումանյանը չի վարանում նշելու նույնիսկ իրենց տոհմի «բարոյական անկման» ցավալի հանգամանքը և վերլուծում է դրա գլխավոր պատճառները¹¹:

⁶ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ավելի վատ // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 34:

⁷ **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1885–1904), էջ 16:

⁸ Անդ, էջ 22:

⁹ Անդ, էջ 37:

¹⁰ Անդ, էջ 70:

¹¹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Գործք հարանց (իմ գիտեցածը) // ԵԼԺ, հատ. ութերորդ, 1999, էջ 17–20:

Արդեն իսկ եղած կենսափորձը հիմք է տալիս երիտասարդ բանաստեղծին ըմբռնելու այն ճշմարտությունը, որը մեզանից ամեն մեկը վաղ թե ուշ իր հերթին «բացահայտում է», այն է՝ կյանքի բնականոն ընթացքը միալար չէ. ծնունդ և մահ, վերելք և վայրէջք, ոգևորություն և հիասթափություն, ձեռքբերումներ և կորուստներ... Եվ ահա երբ առիթ է լինում սեփական կենսափրկիչ փայտությանն անդրադառնալու, Հովհաննես Թումանյանը դիմում է բնության պատկերներին, հորդորում զրուցակցին սովորել բնության իմաստությունից, խորամուխ լինել նրա առեղծվածների մեջ. սա մի վերաբերմունք է, որը հասնելու է պաշտամունքի և դառնալու է նրա մտածելակերպի անքակտելի տարրը: Նայիր ու տես, գրում է նա ընկերոջը, թե ինչպես և ինչու է տարերքը հուզվում և հանդարտվում. «Ինչի նման կլինեք, եթե ավելոծված օվկիանոսի ալիքները հախուռն հորձանքով գնան միալար և ներկայացնեն մշտական անվերջ ալեկոծում: Դորա համար նրանց սպասում է փփին բարեկամը՝ ժայռը, որ այդ մոլեգնության կամ տանջանքի ժամին ցրվում է նրան ցավերը, մեղմացնում կրքերը և խաղաղություն տալիս»¹²:

Այդ ժայռ-խորհրդանիշը, ըստ իս, շատ բան է բացատրում, պարզում Հովհաննես Թումանյանի հետագա ամբողջ կյանքի և ազգային-հանրային գործունեության գլխավոր առանձնահատկություններից մեկը՝ նրա պատրաստակամությունը գորավիզ լինել բոլոր կարոտյալներին, հարազատի պես տիրություն անել գաղթականներին, հանդարտեցնել ազգամիջյան բախումները և միջկուսակցական պայքարը, իր սուղ միջոցները տրամադրել սկսնակ գրչակիցներին...

Չէ՛ որ ինքն է իսկ խոստովանել¹³.

*Ջուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:*

Այդպես է, իրոք: «Ամենքի հետ» բանաստեղծի և ժողովրդի հոգևոր միասնականության վավերացումն է, իսկ «ամենքի՝ չափ»... Անտարակույս, նրա տառապանքն ավելին է, քան «ամենքի չափ». գերզգայուն, խորագգաց, ապրումակցման բացառիկ ունակությամբ օժտված բանաստեղծը տառապում էր և՛ իր համար, և՛ հարազատների ու ազգակիցների, և՛ համայն մարդկության:

¹² Անդ, էջ 21:

¹³ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Քառյակներ // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. երկրորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 20:

Հիրավի, կրքերը մեղմող և խաղաղություն պարգևող Համագային Ժայռ էր մեծն Թումանյանը... Թեպետ Ժայռն ինքն էլ (իր իսկ խոստովանությամբ) կարոտ մնաց խաղաղ ու հանդարտավետ մի հանգրվանի, հոգսագերծ մի ժամանակաշրջանի, որ կարողանար ազատորեն տրվել ստեղծագործական վայելքին, անկաշկանդ արարեր իր և հարազատ ժողովրդի համար: Ավա՞ղ...

Հովհաննես Թումանյանի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումների հայեցակարգային հիմքը անհատի և հանրության վարքուբարքի փոխադարձ պատճառակցման ըմբռնումն է՝ անհատն է ստեղծում հասարակություն, և վերջինս այնպիսին է, ինչպիսին մարդիկ են, միաժամանակ՝ անհատը ձևավորվում է հանրային որոշակի միջավայրում և կրում դրա առանձնահատկությունների կնիքը: «Ճշմարիտ, որ անհատներն են գործ ստեղծում, կերպարանք տալիս, ձև տալիս, ընթացք տալիս հասարակական կյանքին. մի քանի մարդ՝ և կյանքը դառնում է եռուն, կենդանի գեղեցիկ»¹⁴:

Միևնույն ժամանակ, ինչպես հասուն անհատը, այնպես էլ հասարակությունը զրկված չէ կամքի ազատությունից, ուստի և պատասխանատու է իր արարքների համար՝ լավ կամ վատ, բարի կամ չար. «Բարքի խնդիրը մարդկային առաքինությունների խնդիրն է, հոգու, սրտի, խղճմտանքի մեծ խնդիրն է: Լավ ու վատ բարքիցն են ծնունդ առնում կյանքի մեջ բարիքն ու չարիքը թե առանձին անհատների, թե ազգերի և թե ընդհանուր աշխարհքի համար»¹⁵:

Հետևաբար, ինչպես անհատի, այնպես էլ հանրության կյանքի բնականոն կազմակերպման, նրանց շահերի ներդաշնակման, հավաքականության ներուժն առավելագույնս բացահայտելու և արդյունավետ գործադրելու հիմնական պայմանը ինքնաճանաչումն է: **Ինքը մեծ գրողը, մշտապես խոսել է ինքնաճանաչման և դրա շնորհիվ ինքնակատարելագործման մասին:** «Ամենադժվար բանը, որին ձգտում են մարդիկ՝ ինքն իրեն ճանաչելն է,– ասում է Հովհաննես Թումանյանը:– Ճանաչի՛ր ինքդ քեզ: Եվ մարդը պետք է ճանաչի ինքն իրեն, իր ուժերը, կարգավորի իրեն և իմաստուն կերպով առաջնորդի, ուղղություն տա իրեն.... Մարդը ձգտում պիտի ունենա լավանալու, բարձրանալու: Միշտ պիտի ձգտել դեպի կատարյալը»¹⁶:

Ազգային անինքնաճանաչությանը, սեփական ազգային «եսին» անծանոթ մնալը, ըստ Հովհաննես Թումանյանի, «մեծ ցավ է», «ամոթալի մի դրություն»:

¹⁴ Տե՛ս Հովհ. Թումանյան, Նամակներ (1885–1905), էջ 300:

¹⁵ Տե՛ս Հովհ. Թումանյան, Դոկումենտները // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 127:

¹⁶ Տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 151, 205:

Եվ այդ ցավը պատել է հայությանը. «Չգիտենք մենք ի՛նչ ենք եղել, ի՛նչ ենք արել, ինչո՞ւ և ինչպես, ի՛նչ օրով, ի՛նչ ճանապարհով ենք էստեղ հասել»¹⁷:

Դարձյալ, ըստ փիլիսոփա բանաստեղծի դիրքորոշման՝ արձանագրելն անբավարար է, հարկավոր է գիտակցել այդ ամոթալի վիճակը և դրա անցանկալի հետևանքները. «Էսքան փորձություն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ավեկոծության քմահաճույքին անձնատուր»¹⁸:

Իսկ ինչի՞ է հանգեցնում չիմացությունը՝ թե՛ ամբողջ ազգային հանրության, թե՛ դրա առանձին անդամին: Մեփական պատմությունը, մշակույթը, լեզուն, հարազատ բնօրրանը չճանաչողը հնարավորություն չունի սթափ ինքնագնահատական ձևավորելու, ուստի և նա անխուսափելիորեն երկու ծայրահեղության է հասնում՝ կա՛մ ազգային պարծենկոտության, կա՛մ ազգային ինքնանվաստացման:

Այս վերջին հոգեվիճակը Հովհաննես Թումանյանը հատկապես անողորմ ու տպավորիչ է բնութագրել. «Եվ ի՛նչ զարմանք, որ էս դրության մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն ու դատարկությունը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարհամարհի իր ցեղը, իր անունից կամաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղին վերաբերյալ ամեն ստորություն, և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում սկսած իրենից»¹⁹:

Ինչ դիպուկ բնութագրում է՝ «միջազգային ոչնչություն», մինչդեռ այդպիսիք, սեփական լեզվին և մշակույթին խորթ, հարազատ ազգի պատմությանն ու հոգեբանությանն անծանոթ անձինք միշտ իրենց պճնել-քողարկվել են բարձրագույն «աշխարհաքաղաքացու» (կոսմոպոլիտ) անունով: Թումանյանը առիթը բաց չի թողել նմաններին ձաղկելու, բայց պիտի խոստովանենք, որ անիքնաճանաչության «մեծ ցավը», հարազատ լեզվից և մշակույթից կամովին օտարացումը միշտ ուղեկցել է մեզ և այսօր էլ, Թումանյանից հարյուր տարի էլ անց նույնքան «ամոթալի դրություն» է, ավելին՝ հայոց անկախ, ազգային համերաշխությանը խարսխված պետության կայացման լրջագույն խոչընդոտներից մեկը:

Հովհաննես Թումանյանը մարդ արարածի հոգեկան աշխարհի, բարոյական ըմբռնումների, ընդոծին լավ ու վատ մղումների, դրանց մշտական պայքարի խորագիտակ վերլուծաբանն է:

Իրոք, դուրին է համոզվել, որ Հովհաննես Թումանյանի բազում պատմվածքներ հոգեբանական ավարտուն մանրապատումներ են՝ նրբորեն բացահայտող մարդկային էակի վեհությունը և անկումը, ազնվությունը և նենգությունը, լուսավոր և ստվերոտ կողմերը:

¹⁷ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մեծ ցավը // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 174:

¹⁸ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Հայի ոգին // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 194:

¹⁹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մեծ ցավը, էջ 174–175:

Ահավասիկ, գյուղական պարզ աշխարհում ձևավորված միամիտ երեխան («Գիքորը») մեկեն հայտնվելով քաղաքի խորթ պայմաններում, մարդկային ապականված փոխհարաբերությունների, նախանձի, բամբասանքի, առուծախի մթնոլորտում, երեսպաշտ քաղքենիների միջավայրում անխուսափելիորեն կործանվում է. որքան էլ սրտաճնկիկ պատմություն է սա, ողբերգական ավարտ, բայց միանգամայն ճշմարտապատում հանգուցալուծում է:

Թումանյանական մեղմ հումորով են հագեցած 19-րդ դարի վերջի գյուղական կյանքին բնորոշ հետամնացությունից, անտեղյակությունից, տգիտությունից ծնված վարքագծի որոշ դրսևորումներ՝ համառ ինքնավստահությունը, անվերապահ պահանջկոտությունը, այլոց կարծիքների անվերապահ մերժումը, մանր-մունր խորամանկությունները («Նեստյի քարաբաղնիսը», «Գաբո բիծու շերամապահությունը», «Քեռի Խեչանը», «Իմ ընկեր Նեստն»):

Եվ հատկանշական է, որ Հովհ. Թումանյանի մատուցմամբ՝ այդ հատկությունները մարմնավորող կերպարները մեզ չեն զայրացնում, այլ ավելի շատ վշտացնում են, ավստասանքի և թախծի զգացում առաջացնում:

Բայց ահա այդ նույն գյուղական միջավայրում հարուստ ու հղփացած մարդիկ, որ կարծեք ամեն ինչ ունեն, իրենց նախանձի առարկան են դարձնում չարքաշ աշխատանքով ապրուստը վաստակող ուստա Սիմոնին («Աղքատի պատիվը»), թե սա ինչու և պետք է գեղեցկուհի կին ունենա: Անարգում են կնոջը, անպատվում ամուսնուն, ծաղրում, և անգամ վերջինիս դատարան դիմելուց հետո գյուղի մեծահարուստ տերերը իրենց «մեծահոգի» հաշտարարությամբ մեկ անգամ ևս ստորացնում են ազնիվ մարդուն՝ հարկադրելով դրամական փոխհատուցումն ընդունել: Այնքան թանձր է հղփացած հարուստների ձևավորած անբարո մթնոլորտը, այնքան անվերապահ է այդ երևելիների պահանջ-հորդորը, որ զայրացած, բորբոքված, իր պատիվը ոտնահարածների դեմ ըմբոստացած և արդարացի պատիժ պահանջող Սիմոնն ականա համակերպվում է հրապարակային նվաստացման այդ գործողությանը:

Հովհաննես Թումանյանին լավ ծանոթ են ծանր վիճակում գտնվող գյուղացիների մտորումները. ընտանիքի հանապազօրյա հացը հոգալու խնդիրն այնքան անելանելի դրության մեջ է դնում գյուղացի մարդուն, որ նա հուսահատությունից անգամ մոմտում է մի մեծահարուստի կողոպտելու մասին, բայց և անմիջապես ձեռք է քաշում այդ մտքից, երբ փրկության թեթևակի հույս է արթնանում, ու փառք է տալիս Աստծուն, որ հարկադրված չեղավ մեղքի տակ մտնել («Սովի ժամանակից»): Հեղինակը համոզում է ընթերցողին, որ աշխատավոր հայ մարդու հոգեբանությանը, կենսական արժեքներին խորթ են գողությունը, ուրիշի ունեցվածքին տիրանալու ցանկությունը, նույնիսկ ակնհայտորեն ապօրինի հարստացածի ձեռքից որևէ բան խլելը: Միայն ու միայն գերծայրահեղ վիճակում է, որ

նրա մտքի ծայրով անցնում է կողոպուտի միտքը և իսկույն էլ աներևութանում, երբ փոքր-ինչ հույս է երևում:

Արդեն ծանոթ ենք Հովհաննես Թումանյանի հավատո հանգանակին²⁰. այդ եռմիասնության մի բաղադրիչն այն է, որ ինչպես անհատը, այնպես էլ հասարակությունը մշտապես պիտի ձգտեն կատարելության, տեսնեն և ժամանակին իրականացնեն հասունացած բարեփոխումները: Բայց դա ինքնաբերաբար չի կարող լինել. հասարակության ոչ բոլոր անդամներն ունեն հնարավորություն լավագույն գաղափարներն իսկ կյանքի կոչելու:

Տնտեսության, կրթության, մշակույթի, հանրային կյանքի օրախնդիր փոփոխությունների խոչընդոտներից հիմնականը Հովհաննես Թումանյանի հրապարակախոսն անվանել է «վարչական անկարգության վնասակարություն»:

Կառավարաբանության լեզվով՝ սա «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» հինավուրց, բայց անբեկանելի սկզբունքի խախտումն է՝ թումանյանական ստույգ ախտորոշմամբ²¹. «Ընդհանրապես նա, որ գաղափարներ է քարոզում ու ծրագիրներ է մշակում, ոչ գործ ունի ձեռքին, ոչ գործելու իրավունք, իսկ նա, որ գործելու պաշտոն և մտքեր իրագործելու կարողություն ունի, չի ըմբռնում այն գաղափարները, որ կյանքի հառաջադիմությունն են պայմանավորում, չի ընդունում այն ծրագրերը, որ բարեկեցություն են պահանջում: Գործերի վրա նա իր առանձին հասկացողությունն ու հայացքն ունի, որ առաջնորդում և արդարացնում են իրան»²²:

Որքա՞ն ծանոթ իրավիճակ է, որքա՞ն կրկնվող... Եվ պիտի ասել, որ թեպետ բանաստեղծը փիլիսոփայի խոհեմությամբ մեզ հորդորում է հասկանալ, թե «կյանքի բնական ընթացքն է այդ»²³, սակայն իր իսկ դատողությունների ամբողջ պաթոսը ուղղորդել է արգելքները հաղթահարելուն, ազգի արժանավոր անդամներին արժանի տեղ տալուն և գործելու հնարավորություն ընձեռելուն: Հիշենք մեծ մտածողի պատգամը՝ «Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը»²⁴:

Իհարկե, Հովհաննես Թումանյանը հրաշալի հասկանում էր, որ հանրային կյանքում խորքային փոփոխությունների իրականացման համար որոշակի, երբեմն երկարատև ժամանակ է հարկավոր: Եվ այս առումով մեզ դարձյալ շատ ծանոթ պիտի թվա հարյուր տարի առաջ արած նրա մի դիտարկումը. «Վերջին մեծ հեղափոխությունից հետո, մեզանից

²⁰ Տե՛ս Վ. Միրզոյան, Հովհաննես Թումանյանի հավատո հանգանակը // «Հյուսիսափայլ», 2018, թ. 1, էջ 4-11:

²¹ Տե՛ս Վ. Միրզոյան, Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում, Եր.: Մեկնարկ, 2021:

²² Հովհ. Թումանյան, Արգելքներ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 50:

²³ Անդ:

²⁴ Տե՛ս Հովհ. Թումանյան, Դառնացած ժողովուրդ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 225:

շատ միամիտներ կարծեցին, թե միանգամից արդեն ազատվեցինք հին դիպլոմատիայից ու կառավարության հին ռեժիմից. բայց անողորմ ու իմաստուն ժամանակը, որ ամեն բան դրսևորել գիտի, ձեռաց ցույց տվեց երևույթների ներքին բովանդակությունը և միանգամ ընդմիշտ համոզեց ամենքիս, որ էնքան էլ հեշտ չի հին մեղքից ազատվելը»²⁵:

Վարչական անկարգությունը խաթարում է իշխանության և ժողովրդի բնականոն փոխհարաբերությունները: Եթե իշխանավորները իրենց տեղում չեն, հենց բուն վարչական անկարգության հետևանքով են անարժան կերպով հայտնվել իշխանության դեկին, ապա նրանք ոչ թե շիտակ առաջնորդում են ժողովրդին, այլ ձեռնաձուլության են ենթարկում հանուն սեփական դիրքի ամրապնդման:

Քաղաքագետի սթափ հայացքով Հովհաննես Թումանյանն արձանագրում և գնահատում է անցյալում և ներկայում հաճախադեպ այդ իրողության ձեռնաձուլական մեկնաբանության հնարքները. «Եվ երբ հարկավոր են համարում՝ հարայ են գցում, աղաղակով ու աղմուկով հավաքում են մարդկանց, հարբեցնում են մի որևէ սուտով, մի որևէ լոզունգով, ժողովրդից ստեղծում են ամբոխ, ստիպում են գոռալ իրենց թելադրությունով ու տանում են էն տեսակ գործեր, որոնց նա՝ ժողովուրդը, արդար աշխատանքով ապրող մարդը, չէր գնալ երբեք իր ազատ կամքով ու խղճմտանքով... Սրանից հետո՝ իբրև աքսիոմա ասում են. «Ամեն ժողովուրդ արժանի է իր կառավարությանը»: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, սա միանգամայն սխալ է, և ճշմարիտն էն է, որ ոչ մի կառավարություն արժանի չի իր ժողովրդին, եթե միայն ընդունենք էն տարբերությունները, որ ես եմ ընդունում ժողովրդի և ամբոխի մեջ»²⁶:

Ժողովրդի և ամբոխի տարբերակման գաղափարն օգտակար է նաև անհատի և հանրության փոխհարաբերությունները քննարկելիս, մասնավորապես՝ ոչ շարքային, տաղանդավոր անհատի հանրային ընկալումը հասկանալու համար: Սա քաղաքակրթության տխուր էջերից մեկն է՝ ստեղծագործ անհատի և հոգևորի հանդեպ անտարբեր կամ նախահարձակ ամբոխի միջև ողբերգական բախումը. պատմության ընթացքում քանի-քանի հանճարներ են զոհ գնացել շրջապատի ամուլ մարդկանց նախանձին և ատելությանը, որքա՞ն անհարկի զրկանքներ են կրել նրանք, ապրել հիասթափության ծանր պահեր:

²⁵ Տե՛ս Հովհ. Թումանյան, Պատասխան Տիցիան Տաբիձեին // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 377:

²⁶ Անդ, էջ 372–373:

Ժամանակակիցներից չգնահատված բազում հանճարների կենսափիլիսոփայության անգուգական մի ձևակերպում է Հովհաննես Թումանյանի քառյակներից մեկը²⁷.

*Քանի ~ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել:*

Մի կողմից՝ հուր ու լույս (գեղեցիկն ու բարին) սփռող անհատն է, մյուս կողմում՝ անհաղորդ հասարակությունը, լույսը մերժող, հոգևոր ձգտումները մեռցնող, «կյանքի տղմի մեջ գլխովին թաղված»²⁸, կյանքը անասնական գոյության վերածող «մարդուկները» («Չընչի՛ն մարդուկներ, լըրբորեն հանգիստ, // Անսիրտ, փոքրոգի, զրծծի ու կոպիտ»²⁹), նաև ստեղծագործողի կեցության յուրահատկությունն անտեսող հանրային և ազգային հաստատությունները:

Սա, իսկապես, հավիտենական հակադրությունն է միայնակ և հենց այդ պատճառով խոցելի տաղանդի և ինքն իրեն մշտապես իրավացի համարող և լռելյայն վերարտադրվող մեծամասնական զանգվածի միջև:

Այլ կերպ լինել չի էլ կարող: Ամբոխը, իր զանգվածային մտածողությամբ, մակերեսային ընկալմամբ, սպառողական հոգեբանությամբ, առօրյա հոգսերի կենսական կարևորության ուռճացմամբ և հավիտենարժեք լուծումների անտեսմամբ չի կարող չհակադրվել ստեղծագործ անհատին: Ամբոխի կենսափիլիսոփայության դիրքերից «գեղեցիկը և բարին»՝ լինի արվեստի գործ, մարդկային արարք, որևէ իրադարձություն և այլն, արժեք ունեն, եթե նաև որոշակի սպառողական գին ունեն, այլապես անօգտակար են և ունայն:

Ամբոխի կյանքը թաղված է առօրեականության մեջ. այդ մասին շատ պատկերավոր է գրել **Արսեն Տերտեռյանը**. «Առօրեականությունը գործնական է և այն տեսակետից, որ նա ընդհանրացումներ չի սիրում. կեանքի մերկ փաստերը, երեւոյթների թանձրացեալ պատկերը, դէպքերի

²⁷ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Քառյակներ // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. երկրորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 22:

²⁸ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Տապանագիր // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. առաջին, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 92:

²⁹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Տրտունջ // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. առաջին, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 215:

մենութիւնն ու առանձնացումը ընդհանուր կապի վտարումով – ահա՛ նրա սովորական փիլիսոփայութեան նշանաբանը»³⁰:

Եվ ներկայում էլ առանձնապէս բան չի փոխվել, թումանյանական դառն արձանագրությունն այսօր էլ կարող ենք կրկնել՝ անցյալի երևելի գործիչների մեծարման միջոցառումների առթիվ. «Գրականությունը, արվեստը դարձրել են տոն օրերի բուրվառ. հորելյանների ժամանակ կամ որևէ առիթի հանում են, խոսում, բուրվառում ու էլ ետ տանում իր տեղը՝ խորանում և մոռանում»³¹:

Շիտակ մտավորականի հանդեպ ունեւոր խավի կիսաարհամարհական վերաբերմունքը, գրողի նյութական անմխիթար վիճակը, զուտ գրական վաստակով գոյատևելու անհնարինությունը, դեռ մի բան էլ նրա հասցեին հնչող զրպարտությունն ու բամբասանքը շատ դառնություն են պատճառել Հովհաննէս Թումանյանին, ուստի և անխուսափելիորեն արտացոլվել են նրա մի շարք ստեղծագործություններում, նամակներում, հանրաբանական բնույթի եզրահանգումների սոցիալփիլիսոփայական դիտարկումների մեջ:

Ամենից արգահատելին մեզանում տարածված «Գնա՛ մեռի, արի՛ սիրեմ» հոգեբանությունն է, դրանից ածանցյալ՝ «մեծանուն հանգուցյալների» տարելիցների հանդիսությունները, կյանքի օրոք օր ու արև չտեսած, ցամաք հացով ապրող գրողի հետմահու ճոխ մեծարանքը՝ կեղծավոր և նվաստացնող:

Պերճախոս վերնագրված «**Մահից հետո**» հոդվածում (1913 թ.) Հովհաննէս Թումանյանը ուշադրություն է հրավիրում այդ հոգեբանության առավել եղկելի դրսևորման վրա, երբ տաղանդավոր մարդուն հալածողներն են նրա մահվանից հետո հանկարծ կարծեք «դարձի» գալիս, սկսում են փառաբանել նրան՝ սեփական անունն էլ հյուսելով ուրիշի ժառանգությանը և փառքին: Այդպիսիների հասցեին սարկազմով լեցուն դատավճիռն անողոք է և անբեկանելի. «Իջե՛ք մեծ դագաղների վրից ու ձեզ բարձրանալու համար որոնեցեք ուրիշ պատվանդան»³²:

Ընդ որում, Հովհաննէս Թումանյանը հարկ է համարել ոչ թե ընդհանուր ձևով խոսել ուրիշի անունին և փառքին նենգաբար քամավողների մասին, այլ նաև միանգամայն որոշակի մի կերպարի իր տեղը դնել: Սա համարձակվել էր Գաբրիել Սունդուկյանի մահվանից հետո զանազան ստեր մոգոնել. «Եվ ահա, ոչ միայն Սունդուկյանի դագաղն է պետք եկել հիշողություններով վրեն բարձրանալու, այլև նրա անունը իբրև ծիրանի իրենց անցյալ գործունեության վրա առնելու»³³:

³⁰ Տե՛ս Արս. Տերտերեան, Յովհաննէս Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն: Վարչաշապատ, 1911, էջ 27:

³¹ Տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 184:

³² Տե՛ս Հովհ. Թումանյան, Մահից հետո // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 34:

³³ Անդ, էջ 35:

Նույնքան մերժելի է, անխնա ծաղրի արժանի նաև աննշան գործիչների անհարկի փառաբանումը, չնչին վաստակի անգուսպ ուռճացումը, «մուկիկի պես մարդու» համար տիեզերական ողբը («Մուկիկի մահը»), մանավանդ երբ դրան խառնվում է կուսակցական պատկանելիության հանգամանքը:

Արժանավոր մեծերի պատշաճ գնահատման յուրատեսակ չափանմուշ կարող ենք համարել Ծերենցի մահվան 25-րդ տարելիցի առթիվ գրողի գերեզմանի մոտ Հովհաննես Թումանյանի արտասանած խոսքը, մասնավորապես բարձր ոճի հետևյալ նմուշը. «Եվ մենք չենք եկել մեր հանդեսով ու ճառերով նրան բարձրացնելու, այլ եկել ենք նրան հիշելով, նրանով բարձրանալու»³⁴:

Եվ ասվածին անմիջապես հետևում է մասնավորից դեպի ընդհանուրը մտքի անցումը, խոսողի խոհի և հույզի ընդգրկուն ամփոփումը, նախնիների վաստակի արժեքավորումն ու ներկաների երախտագիտությունն ագուցող զարմանալիորեն կուռ մի բանաձև. «Եվ թո՛ղ օրհնված լինի նրանց հիշատակը, որոնք իրենց կենդանության օրով ժողովուրդներին կյանք և շունչ տալուց հետո էլ, չեն դադարում իրենց գործերով ու գերեզմաններով էլ ազնվացնելու և բարձրացնելու մարդկանց ու ժողովուրդներին»³⁵:

Հիրավի, Հովհաննես Թումանյանի գրական-քննադատական գործունեությունը լավագույն օրինակն է գրողների և հանրային գործիչների վաստակի հանդեպ հավասարակշռված մոտեցման, անանձնական վերաբերմունքի և անաչառ գնահատման³⁶:

³⁴ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, <Խոսք Ծերենցի մասին> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 63:

³⁵ Անդ, էջ 63–64:

³⁶ «Թումանյանի՝ որպես գրականության պատմաբանի և քննադատի ամենամեծ առավելություններից մեկն այն է, որ նրա մոտ իսպառ բացակայում է սուրբեկտիվիզմը և, ինչպես ասում են, «գրական նախանձը»: Նա մշտապես, ինչպես երևում է, բարձր է կանգնած անձնականությունից ու գնահատում է թե՛ իրենից առաջ, թե՛ իր ժամանակի հեղինակների ստեղծագործությունները՝ մշտապես ճիշտ, առանց որևէ կողմնակալության... Թումանյանը միշտ էլ, երբ գրում է կյանքից հեռացած հայ գրողների մասին, ընդհանրապես աշխատում է ասել այն, ինչ դրականն է նրանց ստեղծագործության մեջ, բայց թույլ չի տալիս իրեն ընկնել ավելորդությունների մեջ և շռայլել այնպիսի խոսքեր և գնահատականներ, որոնք իրականությանը համապատասխան չեն: Նա ինքը խարազանում է բոլոր նրանց, որոնք վախճանված գրողների կամ գրական գործիչների ու հրապարակախոսների մասին ամեն չափ ու սահմանից դուրս եկած ճոռոմ խոսքեր են ասում նրանց վերագրելով չունեցած արժանիքները» (**Մ. Մկրյան**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր.: Սովետ. գրող, 1980, էջ 325):

Ինքն էլ հենց իր մասին նամակներից մեկում ասում է և, իհարկե, լիակատար իրավունք ունի ասելու. «Ես, գոնե ինձ էսպես է թվում, թե անընդունակ եմ թշնամական վերաբերմունքի և ատելության առհասարակ»³⁷:

Ավելորդ չէ այստեղ հավելել նրան ճանաչողների գնահատականը. «Վրեժխնդրություն, քեն, ատելություն, չարիք և նախանձ՝ կյանքի այս զգացումները անձանթ էին իրեն: Բյուրեղի պես մաքուր և պարզ էր իր սիրտն ու հոգին, ու մանիշակի չափ խոնարհ ու քնքուշ»³⁸:

Առավել ևս հիմնավոր է Հովհաննես Թումանյանի համերաշխությունը «Բաքվի ձայն» թերթի առաջնորդողի հեղինակին, որը տեղին զգաստացնող հորդոր է անում մի հանգուցյալ գործչին հետմահու անպատշաճ կերպով փառաբանողներին: **Մարդուն պետք է գնահատել ըստ իր վաստակի՝** այս հայտնի ճշմարտության ոգով թե՛ առաջնորդողը, թե՛ Հովհ. Թումանյանը դրվատում են դրվատելին, սակայն չեն հանդուրժում անհիմն պանծացումը: «Հանգուցյալը ընդունակությունների կողմից մի անվիճելի տափակությունն էր», հաստատում է Թումանյանը, «անսիրտ ու զուրկ հաճախ, նույնիսկ հասարակ քաղաքացու առաքինություններից», բայց ներբողականներում նա բնութագրվում է որպես «դարավոր կաղնի», «վիթխարի տիտան», «սարերի արծիվ» և այլն:

Այս գրչակների հասցեին նրա զայրույթը սահման չունի. «Ահա թե ինչեր են հնարավոր մեր մեջ: Սա ազգ չի, ժողովուրդ չի – խալխ է, խաժամուժ, խուժան, որ իր լավ թե վատ ցույցերով երբեք լուրջ գնահատող չի և միայն կարող է շփոթել ու շշկլացնել»³⁹:

Եվ, իհարկե, Հովհաննես Թումանյանը լիակատար իրավունք ուներ զայրանալու: Հիշենք, թե տարատեսակ դրամբյանները և մեղրյանները իրենց սին մեղադրանքներով և թունոտ խայթոցներով որքա՞ն են նրա արյունը պղտորել, հարկադրել սրանց հրապարակավ պատասխանելու վրա զուր ժամանակ վատնելու:

Մշտապես ջանալով ամենուր և ամենքի հետ վարվել արդարացի՝ Հովհաննես Թումանյանը մեզ հուշում է այդկերպ վարվելու իր վարքականունի էությունը՝ տարբերակել անհատին իր կատարած դերից՝ խուսափելով միջանձնային ընկալման ամենատարածված այդ սխալից. «Անհատներ կան, որոնք ապրում են և նշանավոր են միայն նրանով, որ մի բարձր պաշտոն ունեն կամ աստիճան: Առեք նրանցից այդ պաշտոնը կամ աստիճանը, կտեսնեք օխտը կորածի մինը: Մարդիկ էլ կան, որ առանց իշխանության էլ, թեկուզ նույնիսկ ձախորդության ու հալածանքի մեջ,

³⁷ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1905–1922), էջ 190–191:

³⁸ Տե՛ս **Զորավար Անդրանիկ**, Վերհիշումներ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կյանքեն // «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 550:

³⁹ Անդ, էջ 191:

միշտ երևում են իրենց ինքնություն կերպարանքով, ուժով ու շնորհքով»⁴⁰: Պիտանի և պարզ խորհուրդ է գնահատվողի դիրքի կամ աստիճանի խաթարող ազդեցությունից խուսափելու, ինչպես նաև առերևույթ հանրայնորեն մերժված անհատին ըստ իրական արժանիքի գնահատելու համար:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ թեպետ Հովհաննես Թումանյանը նույնպես կարևորում է գործը, լիովին ըստ խոսքի և գործի կապի ընդունված կարծիքի, սակայն առանձնացնում է նաև առինքնող մարդու բուն գոյության հանգամանքը, որ կարող է ավելին ազդել հանրության կյանքի վրա, քան ոմանց բազում «գործերը»։ «Մարդիկ կան, որոնց միմիայն սոսկ գոյությունը, ներկայությունն ավելի շատ գործ է տեսնում, քան թե հազարավորների գործը:– Պնդում է բանաստեղծը և ընդհանուր ձևակերպումը որոշակիացնում հայոց երկու հովվապետերի բնութագրմամբ:– Այդպիսի դեմքեր էին վերջերս հայոց ժողովրդի մեջ Խրիմյանն ու Իզմիրլյանը: Խրիմյանը իր անձի հոյակապ մեծությամբ, Իզմիրլյանն իր արտասովոր ազնվությամբ»⁴¹:

Իր ժամանակիցներից շատերին Հովհաննես Թումանյանի տված բնութագրումները կարող են տեղ գտնել գործնական մարդաբանության բառարանում (եթե այդպիսին ստեղծվի):

Ահավասիկ դրանցից երկուսը.

✓ «Ես ճանաչել և ճանաչում եմ շատ համոզված ու հայրենասեր հայ մարդիկ, բայց չեմ տեսել մի հայ, որ էնքան համարձակ հայ լիներ, ինչպես Կոստանդին Խատիսյանն էր: Նա հայությունը կրում էր ինչպես մի սրբազան դրոշակ, բռնած իր գլխից շատ վեր ի տես ամբողջ աշխարհի, և էնպես էր ասում՝ ես հայ եմ, ինչպես անգլիացին կասի՝ ես անգլիացի եմ կամ ֆրանսիացին կասի՝ ֆրանսիացի եմ: Էն գիտակցությամբ, զգացմունքով ու հպարտությամբ, որ անկարելի էր չպատկառել նրա հայությունից.... Մեզ նման մի դիմագուրկ եղած ժողովրդի մեջ, ուր շատերը ամաչում են իրենց հայ լինելուց և ամեն քայլափոխում դեմդ են ելնում անգույն ու անբովանդակ «անազգի» մարդկանց տիպերը, նա մի եզակի մարդ էր, երևույթ էր»⁴²:

✓ «Շատ հազարների մեջ մինը կարող է լինել ազնիվ և անկեղծ: Էս տեսակ հազվագյուտ մարդկանցից մինն էր Սիմոն Զավարյանը: Նա կարող էր սխալվել, բայց դիտավորությամբ չէր խաբիլ երբեք, ճշմարտության հանդեպ աչք փակելու սովորություն չուներ, չգիտեր գնալ բազմության հետևից, չգիտեր ձևանալ էն, ինչ որ չէր և միշտ մնաց անկեղծ, ինքնուրույն ու ինքնատիպ»⁴³: «Միշտ հարգանքով էր դեպի ուրիշների կար-

⁴⁰ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Հայի ոգին // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 193:

⁴¹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ազնիվ մարդը // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 271:

⁴² Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Խոշոր հայը // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 101:

⁴³ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ազնիվ և անկեղծ // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 99:

ծիքները և մտերիմ: Բարձր իմացության և ազնիվ հոգու հետ ուներ շատ քնքուշ սիրտ: Եվ ամբողջը լիքը մի անշեջ կրակով, որ վերջիվերջո էրեց ու սպառեց իրեն: Էսպես է, ով ուզում է լույս տա, պետք է էրվի»⁴⁴:

Ահավասիկ թումանյանական ևս մի ակամա ինքնաբնութագրում, որին արդեն իսկ հանդիպել ենք վերոբերյալ քառյակի մեջ: Իրոք, Հովհաննես Թումանյանի կյանքն ու գործը ամբողջովին տեղավորվում են իր իսկ բանաձևում՝ «Լույս տալով եմ ըսպառվել»: Եվ բնական է, որ նույն այդ մոտեցումն է գործում այլոց գնահատելիս: Իսկ եթե փորձենք փոքր-ինչ բացել այս «լույս տալը», ապա, կարծում եմ, հարկավոր է հավելել Հովհաննես Թումանյանին խորապես բնորոշ մի դիրքորոշում՝ գիտելիքի, քաջության և ազնվության հարաբերակցության հարցում վերջինիս առավելություն տալը. դրա մասին է նրա հստակ հայտարարությունը. «Այո՛, հայ ժողովուրդը տվել է և կտա շատ խելոք մարդիկ, քաջ մարդիկ, տաղանդավոր մարդիկ, բայց անպայման ազնիվ մարդիկ դժար են երևում»⁴⁵:

Այս առումով մենք Հովհաննես Թումանյանի արած մարդաբանական ևս մի տարբերակում ենք հանդիպում գաղթականներին օգնության հասած մի անձնագոհ կամավորականի՝ օրիորդ Սաթենիկի մահվան առնչությամբ գրված հիշատակի խոսքում: Էջմիածնում հազարավոր փախստականներ էին կուտակվել, հատկապես ծանր վիճակում էին երեխաները, որոնց օգնության հասածներից մեկն էլ Սաթենիկն էր՝ դպրոցից արձակուրդ վերցրած վարժուհին: «Չէ՛ որ աշխարհքում մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար, մարդիկ կան, որ ապրում են ուրիշների տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար: Եվ, ավա՛ղ, ամենից քիչը հենց սրանք են աշխարհքում: Սրանցից՝ էս քչերից, էս թանկերից մինն էր մեր օրիորդ Սաթեն»⁴⁶:

Թումանյանական հավատո հանգանակի երեք սյուները՝ բանավոր և գրավոր խոսքի «գեղեցիկ ու բարի» գործածության հրամայականը, կյանքում և արվեստի մեջ ընդհանուրի և մասնավորի հարաբերակցության ճիշտ ընկալումն ու մատուցումը, կատարելության հարատև ձգտումը արտահայտվել են նաև «գրող-հասարակություն» բազմաբարդ փոխհարաբերությունների քննարկման և մեկնաբանման ընթացքում: Դրա մասին մասամբ խոսել ենք, ուստի որոշ կրկնությամբ՝ հակիրճ շարադրենք գրողի և հանրային միջավայրի հարաբերակցության թումանյանական հայեցակարգը:

Մեթոդաբանական առումով դրա հիմքում ընկած է ժողովրդական բանահյուսության և անհատական ստեղծագործության ներքին կապի ըմ-

⁴⁴ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ս. Զավարյանի բնավորության գծերից // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 105:

⁴⁵ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ազնիվ մարդը, էջ 272:

⁴⁶ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Թանկ մարդու հիշատակին // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 179:

բռնումը: Ամեն մի ժողովուրդ, ասում է Հովհաննես Թումանյանը, ունի իրեն հատուկ խոհերը, պատկերացումները, ձգտումները, կրքերը, երգերը և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչով մի ժողովուրդ տարբերվում է մյուսից: «Եվ այդ բոլորը հոսում են լայն տարածության վրա, վայրենի, անկարգ ձևով, ինչպես առվակներ, որ պետք է հավաքվեն մի տեղ, կազմեն մի գետ, որի մեջ ձուլված, խառնված կլինի նրանցից յուրաքանչյուրի համն ու գույնը»⁴⁷:

Ինչ է մեզ հուշում այս համեմատությունը. այդ առվակները **պետք է** միաձուլվեն, քանի որ դրանք իրենց ծագումով և պատկանելությամբ միասնական են, և սակայն դա ինքնաբերաբար չի լինում: Շարունակությունը հենց միավորող սկզբի դերակատարումն է նշում. «Այդ ջրաբաշխը եթե ժողովուրդն ասենք, այդ բոլոր աղբյուրներն ու առվակները եթե նմանեցնենք ժողովրդի երգերին ու բանահյուսություններին, նրանց միացման հովիտը պետք է ընդունենք հանճարը, տաղանդը, որ գալիս է յուր լայն հոգով ընդգրկում, միացնում մասերը, ստեղծում մի ամբողջություն»⁴⁸:

Այստեղ ևս մեկ հուշում կա. տաղանդը չի բավարարվում նյութի սոսկ քանակական ամբողջացմամբ՝ բանաստեղծը էապես է տարբերվում բանահավաքից: Այս որակական պահը Հովհաննես Թումանյանն այնքան գեղեցիկ է ասում, որ ինքնին տաղանդի անգուգական փայլատակում է. «Նա՛ տաղանդը, յուր շնորհքով իրար է անում, ներդաշնակում է, այլև խորհուրդ, թովչություն է տալիս այդ ձայներին, խորություն է տալիս մտքերին, վայելչություն է տալիս ձևերին, շքեղություն է տալիս ոճերին, յուր ոգևորության հնոցում հալում, ձուլում, մշակում, կատարելագործում է՝ միանգամայն կատարելով և մեքենայական, և քրմական պաշտոն»⁴⁹:

Իսկապես, բանաստեղծը կատարում է և՛ մեքենայական աշխատանք, այսինքն՝ համակարգում է, կարգավորում ձեռքի տակ եղած նյութը, և՛ քրմական՝ արարչական, մոգական, նորաստեղծական աշխատանք: Այդուհանդերձ, չմոռանանք նրա ծագումնաբանությունը, այն է՝ «շրջապատն ու կյանքն են տալիս բանաստեղծի տպավորվող հոգուն գույներ, ձայներ, ձևեր, որոնք և կերպարանավորում են նրա ոգևորության զեղմունքը, սնուցանում և բնորոշում են նրա տաղանդը, դառնում են նրա տաղանդի առանձնահատկությունը»⁵⁰:

Սա **«գրող-հասարակություն» ծագումնաբանական կողմն է, բայց կարևոր է նաև հանրաբանական կողմը**: Այս առումով, բնական է, որ ամեն մի գրող ցանկանում է գնահատված լինել, հանրային ճանաչում և հեղինակություն վայելել, և նույնքան բնական է ու հասկանալի, որ այդ

⁴⁷ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները // ԵԼԺ, հատ. ութերորդ, Եր., 1995, էջ 65:

⁴⁸ Անդ, էջ 66:

⁴⁹ Անդ:

⁵⁰ Անդ:

նույն գրողը նաև կարիք ունի հանրային աջակցության, ստեղծագործելու բարվոք պայմանների, նաև՝ արդարամիտ գնահատողների որոշակի միջավայրի:

Արդ, կողմերի փոխադարձ աջակցության և փոխադարձ պահանջ-կոտորության վերաբերյալ Հովհաննես Թումանյանի ձևակերպած և դույզն-ինչ արդիականությունը չկորցրած ճշմարտություններից մի քանիսն այստեղ ամփոփ շարադրենք:

Նախ՝ «եթե գրականությունը ազգի հոգին է և գրողները էդ հոգու ծնունդներն են ու արտահայտիչները»⁵¹, ապա գրողն իսկապես պիտի համապատասխանի իր դերին: Բայց դա, ցավոք, միշտ չէ լինում այդպես: Ավելին, Հովհաննես Թումանյանը իրավունք ուներ դառնությամբ արձանագրելու հակառակը. «Զարմանալի ժողովուրդ ենք մենք: Հայոց բանաստեղծին ավելի ազդում, վշտացնում է այն, թե ինչու են սև ամպեր կուտակվել Մասիսի ձյունափառ գագաթին, և նա շատ քիչ է նկատում կենդանի հայ գյուղացու ճակատի սև ամպերը»⁵²:

Երկրորդ՝ հանրությունը, իր հերթին, համապատասխան վերաբերմունք պիտի ունենա դեպի գրականությունը և գրողները, «ոչինչ չխնայի» գրականություն ունենալու համար⁵³, ուստի և, ամենից առաջ, պիտի հասկանա գրողների նյութական անապահով վիճակը, նրանց չնայի «դուքանչիների աչքով», ըմբռնի վերջապես, որ գրող մարդը «կյանքի բոլոր հոգսերի, ընտանեկան բոլոր պահանջների, անձնական բոլոր կարիքների դեմ միայն մի բան ունի – յուր ձիրքը, յուր տաղանդը»⁵⁴:

Երրորդ՝ անհանդուրժելի է այն վիճակը, երբ սեփական գիրքը տպագրելու համար հեղինակը «հովանավորություն» է մուրում, փառաբանում մեծահարուստ բարերարին, ընկնում պարտքի տակ. «Այս էլ այն հրեշավոր աններդաշնակություններից մեկն է, որոնցով լիքն է մեր կյանքը»⁵⁵:

Չորրորդ՝ պակաս ամոթալի և նսեմացուցիչ չէ այն վիճակը, երբ հանուն վաստակի ապահովման գրողը էժանագին արտադրանք է տալիս,

⁵¹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, <Խոսք պատանի գրասերներին> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 31:

⁵² Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Բորչավուր // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 46:

⁵³ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Գրականության ազգային պաշտպանություն պետք է լինի // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 241:

⁵⁴ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1885–1904) // ԵԼԺ, հատ. իններորդ, Եր., 1997, էջ 183:

⁵⁵ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1885–1904), էջ 205: «Գուցե կարելի էր այստեղ ծիծաղել, բայց սաստիկ ծանր է լինել ոչինչ մարդկանց կոնտրոլի տակ, տանել նրանց մունսաթներն ու ակնարկները, միշտ անհանգիստ լինել նրանցից ու համբերել առանց հույս ունենալու, թե կազատվես դրանցից, ապա հաշտվել այդ վիճակի հետ ու... ծիծաղել» (անդ, էջ 236):

հարմարվում գերիշխող ցածր ճաշակին. «Գրողը հարմարվում է ամբոխի ճաշակին, անում այն, ինչ որ չպետք է անի, այն է տալիս, ինչ որ դուրս է գնում շուկայում»⁵⁶:

Հինգերորդ՝ գրողին հարկավոր է աջակցել, գնահատել, դրվատել, գորակցել նրա կենդանության օրոք, իսկ մահվանից հետո մեծարանքը, մանավանդ ուշացած և ուռճացած, այլ բան չէ, քան գրողին դարձնել «նվաստացումի, բամբասանքի ու անարգանքի առարկա», ուստի և՛ Հովհաննես Թումանյանի զուսպ գայրույթը. «Հայ գրողի մահից հետո էլ մեզ հիշողություններ չեն հարկավոր. մոռացության տվեք նրան, ինչպես մոռացության էիք տալիս մի ժամանակ»⁵⁷:

Վեցերորդ՝ թե՛ գրողի, թե՛ գրողական հանրության համար անպատվաբեր երևույթ է, երբ անտաղանդ մեկին են ումանք հետմահու փառաբանում, կուսակցական-թայֆայական հիմքով մոգոնում չեղած բարեմասնություններ. Հովհաննես Թումանյանը չի խնայում այդ գրչակներին՝ «խաժամուժ, խուժան, որ իր լավ թե վատ ցույցերով երբեք լուրջ գնահատող չի և միայն կարող է շփոթել ու շշկլացնել»⁵⁸:

Յոթերորդ՝ «գրականությունը զարգացնելու ուժեղ միջոցներից մինը անողոք ու անաչառ քննադատությունն է»⁵⁹: Իսկ թե ինչ է «գրական ստեղծագործության քննադատություն» ասվածը, ապա Հովհաննես Թումանյանի ձևակերպումից ավելի սպառնիչ դժվար է սահմանում տալ. «հանգիստ ու խոր սուգումն գրական գործի մեջ, օբյեկտիվ ու աննախապաշար վերաբերմունք, պայծառ ու թափանցող հայացք, որ ինչքան էլ սխալներ տեսնի ու հաշվի, միշտ որոնում է կենսունակն ու ապրողը, որովհետև եղ է նրա վերջնական նպատակը.... Քննադատը ժամանակի գործն է կատարում»⁶⁰:

Ութերորդ՝ գրողը պիտի կարողանա սթափ, անաչառ և հանդուրժողաբար գնահատել մեկ այլ գրողի: Վերստին՝ քննադատությունը պիտի լինի հիմնավոր և բարյացակամ, ապագայի դիրքերից պիտի իմաստավորվի ու գնահատվի գրական վաստակի մնայուն արժեքը և ստեղծագործության անցողիկ թերությունները: Գրական աշխարհում միմյանց դեմ «վրդովմունքով չպիտի դուրս գալ, որ անտեղի, անպետք ու անգոր միջոց է, այլ հիմնավոր խոսքով»⁶¹:

⁵⁶ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Թյուրիմացության պատճառով // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 153:

⁵⁷ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մահից հետո // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 34:

⁵⁸ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1905–1922), էջ 191:

⁵⁹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Անտեղի ու անպետք միջոց // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 27:

⁶⁰ Անդ, էջ 26:

⁶¹ Անդ, էջ 27:

Իններորդ՝ ինքնին հայ ծնվելն ու հայերեն գրելը դեռ անբավարար են. գրողը պիտի ապրի հայ ժողովրդի մեջ, զգա հայ մարդկանց ուրախությունն ու տխրությունը. միայն հայոց հողն ու ջուրը, հայ մարդու հոգին ու շունչը կարող են գրողին, Հովհաննես Թումանյանի բնութագրամբ, «ձեռնադրել հայոց բանաստեղծ», այլապես նա կմնա «հայ բանաստեղծ, ոչ թե հայոց բանաստեղծ»⁶²:

Եվ վերջապես, տասներորդ «գրող-ընթերցող» փոխհարաբերության բնականոն գործառության կարևոր պայմանը հետադարձ կապը. «Գրականության համար պետք է ունենալ ճաշակով, հասկացող, գեղարվեստի պահանջը դնող ու գրական գործը գնահատող հասարակություն»⁶³: Ուրեմն, հայ գրականությունից և հայ գրողներից տեղի-անտեղի դժգոհող և սոսկ օտար հեղինակների գրվածքները անքննադատ փառաբանող (ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ այժմ) քաղքենի հանրությունն ինքը պիտի ունակ լինի սեփական ճաշակը բարձրացնելու, դառնալու բարձրարվեստ գրականության թե՛ պատվիրատուն, թե՛ սպառողն ու գնահատողը:

Արդ, մշակութային արժեքներ ստեղծողները պիտի արժանանան հասարակության և հանրային զանազան հաստատությունների համապատասխան վերաբերմունքին. **«գեղեցիկն ու բարին» երկմիասնությունը պետք է լինի նման լինի երկկողմանի երթևեկության, այլ ոչ թե խուլերի զրույցի:**

Արտացոլելով հայ մարդկանց հաղորդակցական աշխարհը՝ մարդասեր բանաստեղծը դրվատանքի է արժանացնում հայոց ապրելակերպի և մտածելակերպի առավելությունները, բայց և ոչ միայն չի շրջանցում կամ անտեսում թերությունները, այլև իր պարտքն է համարում շփ-շփտակ հայտարարել դրանց մասին և բարեփոխումների կոչել. «Մենք շատ ենք քարացել չկամության ու չարակամության մեջ, շատ ենք ընտելացել ատելության մաղձի դառնությանը ու դարձել ենք ատելի»⁶⁴:

Իսկ հանդուրժողաբար վարվելու նրա բանաձևն այսօր էլ հայերիս (և ոչ միայն հայերիս) ներկա սերնդի համար կարող է ծառայել որպես վարքականոնի բարձրագույն ձևակերպում⁶⁵.

*Ի՜նչքան ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել
Վատը՝ լավ եմ տեսել ես:*

⁶² Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները, էջ 85:

⁶³ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Թյուրքիմացության պատճառով, էջ 153:

⁶⁴ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Մի՞ թե դժվար է» // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 8:

⁶⁵ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Քաղյակներ // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. երկրորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 23:

«Տարել-ներել-սիրել» եռաստիճան այս աստիճանավորումը, որ հի-րավի, բարության և հանդուրժողականության, թերևս, եզակի մի ձևակերպում է, միակ ճանապարհն է «վատը՝ լավ» տեսնելու, բայց մեզանից քանիսի՞ն է հասու մեծ բանաստեղծի և մեծ մարդու այս կենսափիլիսոփայությունը:

Միևնույն ժամանակ, իհարկե, կենսական և ստեղծագործական անսասան սկզբունքների տեր **Հովհաննես Թումանյանի համար, բնականաբար, կային արժեքներ, որոնք չպետք է արհամարհվեն, բարոյական նորմեր, որոնց խախտումն անթույլատրելի էր:** «Շատ էր վրդովվում,– վկայում է Նվարդ Թումանյանը,– երբ տեսնում էր այնպիսի հայերի, որ իրենց հարազատ լեզուն, գրականությունն ու պատմությունը չգիտեն⁶⁶»: Չէր կարողանում համակերպվել հատկապես այն ուսուցիչների գոյությանը, որ «ոչ միայն կանոնավոր գրել չգիտեն, չգիտեն և կարգին հայերեն խոսել ու իրենց միտքը պարզ հայտնել...»⁶⁷:

Չէր կարող չդժգոհել հայոց ոսկեդենիկը ոսնահարող լեզվական իրողությունից, մամուլում հանդիպող անգրագիտությունից և հարկ եղած ժամանակ շիփ-շիտակ չասել, թե «հայոց լեզվի աղճատման ու աղավաղման ամենամեծ պատճառներից մինն էլ հենց ինքը՝ հայ թերթն է»⁶⁸:

Հիրավի զարմանահրաշ է թե՛ Հովհաննես Թումանյանի լեզվագագեղությունը, թե՛ լեզվական օրինաչափությունների իմացությունը: Եվ եթե անգամ համաձայնենք նրա ինքնագնահատման համեստությանը, թե ինքը հարկադրված է մտնում լեզվաբանության ոլորտ, ապա հանրալեզվաբանության առումով Հովհ. Թումանյանի գիտական ներդրումն անվիճելի է: Հանգամանորեն խոսելով լեզվական տեղին և անտեղի փոխառությունների, լեզվասխալների, անհարկի օտարաբանությունների, հաջող և անհաջող թարգմանության մասին, բերելով և վերլուծելով մի շարք օրինակներ, Հովհ. Թումանյանը պահանջում է ընթերցողին լեզվագործածության հարցում լինել առավելագույնս զգուշավոր և պատասխանատու. «Եվ էսպեսով լեզվի հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոխառնելիս թե թարգմանելիս, զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհ»⁶⁹:

⁶⁶ Տե՛ս **Ն. Թումանյան**, Հուշեր և գրույցներ, էջ 142:

⁶⁷ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Հայերեն չգիտեն // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 226:

⁶⁸ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Մեր մամուլն ու իր ընթերցողը // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 248:

⁶⁹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Հայոց գրական լեզվի խնդիրը, էջ 289:

Ամեն հայի, մանավանդ մտավորականի համար Հովհաննես Թումանյանը պարտադիր էր համարում սեփական պատմության իմացությունը, հիշեցնում, թե «անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»⁷⁰:

Առավել խիստ էր նրա վերաբերմունքը գրականության մարդկանց, հրապարակային գործիչների վարքագծի անընդունելի դրսևորումների հանդեպ: Բանաստեղծն ունեցել է առիթ հստակորեն ձևակերպելու **հանդուրժողականության և անհանդուրժողականության միջև սահմանի իր պատկերացումը**. սա ամբողջովին մեջբերենք, քանի որ նշված երևույթի առավել ընդգրկուն և այսօր էլ միանգամայն գործուն չափանիշն է: «Գործիչը եթե պատահմունքով սխալ է արել՝ մենք կլենք և կաշխատենք նույնիսկ զգալ չտալ իրեն, որովհետև սխալական է մարդ արարածը: Գործիչը եթե մի դժբախտ դեպքի պատճառ է դարձել չգիտենալուց, չհասկանալուց, սոցիալությունից՝ մենք նրան կներենք, որովհետև մարդը ամենագետ չի, նա էլ մարդ է ու չի հասկացել: Բայց եթե գործիչը վատություն է անում դիտմամբ, գիտակցաբար և համառում է նրա վրա ու էդպես է իր կյանքի ճամփեն, էլ ոչ լռելու իրավունք ունենք, ոչ ներելու, քանզի էս դեպքում, ս. Գրքի ոճով ասեմ, մեր գործը չի փչանում, այլ աստուծո գործը՝ մարդ արարածի բարոյական պատկերն է փչանում»⁷¹:

1910 թ. տպագրված իր մի հոդվածը Հովհաննես Թումանյանն անվանել է «**Չար վերաբերմունք**». խոսքը կուսակցական մամուլի «տգեղ սովորություն», պառակտիչ, վարկաբեկիչ վարքագծի մասին է, «անաչառ քննադատության» շղարշի տակ օրինավոր մարդկանց և հանրային հաստատություններն անվանարկելը. «Նրա հալածանքից ու հայեցողությանից չեն ազատվել ո՛չ մեր գրականությունն ու գրողները, ինչքան էլ տաղանդավոր լինեին ու անմեղ, ո՛չ մեր հասարակական հիմնարկությունները, ինչքան էլ նրանք լինեին բարեգործական, հրատարակչական կամ կուլտուրական, ո՛չ մեր գործիչները, ինչքան էլ նրանք լինեին մաքուր ու պատկառելի, մի խոսքով ոչ ոք և ոչինչ: Փրկվել են միայն նրանք, որոնք եղել են նրան կուսակից ու համախոհ»⁷²:

Եվ անգամ այս պարագայում դարձյալ հանդիպում ենք թումանյանական «**տանել, ներել ու սիրել**» եռանդամ կարգախոսին, քանի որ նա անգամ չի նախատում այդօրինակ վարվելակերպի հեղինակներին, սոսկ վերստին հորդորում է. «Մենք այժմ չենք ուզում խոսել այն մասին, թե որ-

⁷⁰ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, <Թ. Թորմանյանի դասախոսության առթիվ> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 124:

⁷¹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Հայոց ազգագրական ընկերության քարտուղարի և նրա վարմունքի մասին // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 39-40:

⁷² Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Չար վերաբերմունք // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 252:

տեղից է հոգու այդ դաժանությունը, այդ չկամությունը, այլ կարոտով միայն մի բան կկամենայինք, որ փոխվեին մեր բարքերը վերջապես, որ վերանար այդ ավերիչ վերաբերմունքը, այդ զարշելի, բարբարոսական ադաթը մեր մամուլի միջից, տեղի տալով անաչառ, վայելուչ քննադատությանը, լայն ու պայծառ հայացքին և ազնիվ, բարյացակամ վերաբերմունքին դեպի մեր մարդիկն ու մեր հաստատությունները և, փոխանակ սպանելու, քանդելու, ջլատելու, աշխատեինք ուժ տալ ու կենդանացնել»⁷³:

Մի պահ գնահատենք մեծ գրողի մարդկայնությունը և մանկավարժական նրբանկատությունը: Նեղմիտ կուսակցական պառակտիչներն արժանի են ամենախիստ պարսավանքի, ամենասուր հակահարվածի, բայց նա իր դիտողությունն այլ կերպ է կառուցում. անցանկալի վարվելակերպին հակադրում է ցանկալին, մանավանդ վերստին գործածում է «մենք» դերանունը. հիրավի, մենք միասին (ներառյալ մեղավորները) համատեղ ջանքերով, վայելուչ քննադատությամբ և արժանապատիվ կերպով բարեփոխենք մեր համակեցությունը, դառնանք ավելի հանդուրժող և ներողամիտ միմյանց հանդեպ:

Հայոց համակեցության բարոյական հիմքերի թումանյանական բնութագրումները, որպես կանոն, դառն են, բայց անողորմ ճշմարտություն: Նաև՝ սթափեցնող մի ցնցող այն կեղծ ազգասերների համար (Հովհ. Թումանյանի բնութագրմամբ՝ «կույր, կեղծ, անխելք հայրենասիրության» համար), որոնք հայ ժողովրդի ձախողումների մեջ միայն ու միայն այլոց մեղքն են տեսնում կամ էլ լոկ անբարենպաստ հանգամանքները: «Մենք»-ի շեշտադրումը նաև ենթադրում է սխալների շտկում վերստին մեր համագգային ջանքերով, ոչ թե արտաքին, թեկուզ բարյացակամ, միջամտություններով:

Թումանյանական այս դիրքորոշումն այժմ էլ բացառիկ նշանակություն ունի՝ թե՛ անկախության անցած տարիներին կատարվածի վերլուծության և գնահատման համար, թե՛ ներկայի և ապագայի մարտահրավերներին ազգովի դիմագրավելու, միահամուռ և միակամ աշխատելու համար:

Իսկ ի՞նչ խորհուրդ է տալիս այս պարագայում իմաստուն Թումանյանը. «Ինչպես ամեն բան, էնպես էլ մարդկային բարքի վատությունը մի չափ ու սահման պիտի ունենա, թե չէ բարքերի ապականության մեջ միշտ կարող են խեղդվել ամեն վեհ ու վսեմ հղացումներ ու գեղեցիկ գործեր ու մենք էլ միշտ կմնանք մի ժողովուրդ, որին չի կարելի սիրել: Պետք է կանգ առնել վերջապես ու հաշիվ տեսնել: Դատ մեզ վրա, ինքնաքննադատություն խիստ ու անողորմ»⁷⁴:

Այսկերպ հայոց համակեցության ստույգ ախտորոշումը, ազգային ինքնաճանաչումը նա համարում է «առողջացման առաջին պայմանը». և

⁷³ Անդ, էջ 253:

⁷⁴ Տե՛ս Հովհ. Թումանյան, Դոկումենտները, էջ 132:

դարձյալ նրա դատողություններում իշխում է «մենք»-ի հրամայականը. «Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»⁷⁵:

Հարկավոր է հասկանալ, որ **Հովհաննես Թումանյանի «տանել-ներել-սիրել» հավատամքը ամեն մի հայի վարքականոնի տիպար դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել հանրային բարենպաստ միջավայր:**

Խոսքն այն մասին է, որ այդօրինակ վարվելակերպը լինի ոչ թե առանձին-անհատական, բացառիկ մի երևույթ, այլ հայոց համակեցության ամենաբնորոշ գծերից մեկը, հայագգիների դաստիարակության պարտադիր հիմքը:

Եվ այստեղ վճռորոշ քայլը պետք է լինի, անտարակույս, «վարչական անկարգության վնասակարություն» խնդիրը լուծելը, այլ կերպ ասած՝ հայոց համակեցության բարեշրջումը՝ «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» սկզբունքի ոգով: Այսօրինակ կառավարչական հեղափոխությունը, ինչպես արդեն ասել ենք, պետք է հենվի, անհատի և ազգի ինքնաճանաչման վրա, վերջինիս շնորհիվ ազգային հավաքականության ամեն մի անդամի արժանիքների և վաստակի համարժեք գնահատման և հանրօգուտ գործադրման վրա: Դա է «չարականությունից» և «չկամությունից» ազատվելու ստույգ ճանապարհը:

Հայոց համակեցության կարգավորման հարցում Հովհաննես Թումանյանը հիմնավորել է հանրաբանական բնույթի ևս մի կարևոր դրույթ, որը վերաբերում է հանրային կյանքի կազմակերպման համակարգի և հանրության ամեն մի անհատի վարքագծի փոխհարաբերությանը: Սա, փաստորեն, բանաստեղծ-վերլուծաբանի՝ մեզ արդեն ծանոթ համակարգային մեթոդն է, որն այս անգամ նա օգտագործել է հայ եկեղեցու կառուցվածքի և կառավարման սկզբունքների բարեփոխմանը նվիրված մի շարք հոդվածներում:

Հովհաննես Թումանյանի դավանանքի հիմքն է՝ «կենդանի պահել ժողովրդական սկզբունքը մեր ազգային եկեղեցական վարչության մեջ»⁷⁶: Իսկ նման բան, ըստ հեղինակի, հնարավոր է համակարգի բարեփոխման շնորհիվ, որի պայմաններում և որի թելադրանքով կգործի այս կամ այն հոգևորականը: Հարկավոր է հասկանալ, որ «անձնավորությունը, քանի նա կմնա միանձնյա իշխանության սահմաններում, չէ կարող ոչ մի դեպքում լինել այն, ինչ ժողովրդի և եկեղեցու շահերն են պահանջում»⁷⁷:

Հովհաննես Թումանյանի այս դրույթը, ըստ իս, լիովին տարածելի է մեր խնդրո առարկայի քննարկման համար, այսինքն՝ **հայ հասարակու-**

⁷⁵ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Դառնացած ժողովուրդ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 255:

⁷⁶ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Ընտրելիները // ԵԼԺ, հատ ութերորդ, Եր., 1999, էջ 482:

⁷⁷ Անդ, էջ 484:

թյան մեջ փոխադարձ հանդուրժողականությունը հանրայնորեն տիրապետող վարքականոն դարձնելու հիմնապայմանը ժողովրդավարության ապահովումն է:

Մեկ էլ մեջբերենք մեծ մտածողի բանաձևը. «Մեզ համար առաջին բանն այն է, որ ամեն մի ընդունակություն հպատակվի ժողովրդական վարչության մեծ գաղափարին»⁷⁸:

Հայոց համակեցության հիմնախնդիրների վերաբերյալ Հովհաննես Թումանյանի դատողությունները կուռ հայեցակարգ են, դրանց ազգանպաստ որոնումները կենտրոնական տեղ են գրավում թե՛ բանաստեղծի ամբողջական աշխարհայեցողության և թե՛ գրական ու հասարակական գործունեության շրջանակներում:

Հիմնարար գաղափարը ազգային և անհատական ինքնաճանաչման հիմքով և «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» սկզբունքի ոգով համազգային ինքնակազմակերպումն է:

Հանրային կյանքում չեն կարող չլինել տարատեսակ բարդություններ, բայց դրանք ճակատագրական անխուսափելիություն չեն, այլ ենթակա են մարդկանց կարգավորիչ ազդեցությանը: Իր ստեղծագործություններում հարազատորեն արտացոլելով հայոց կյանքի բոլոր կողմերը՝ և՛ դրական, և՛ բացասական, և՛ հուսադրող, և՛ հուսահատեցնող, Հովհաննես Թումանյանը հանրային հիմնախնդիրների բարենպաստ լուծման լավատեսությունը բխեցնում է հայ ժողովրդի տաղանդից, որի կրող անհատները թեպետ փոքրաթիվ են, սակայն օժտված են բարեփոխիչ հզոր ներուժով: Այդպիսի անհատների նա տեսել է թե՛ հոգևոր ոլորտում, թե՛ քաղաքականության ասպարեզում, թե՛ մանավանդ ստեղծագործողների մեջ:

Զարմանալի չէ, որ այդքան մանրամասն Հովհ. Թումանյանը քննարկել է «գրող-հասարակություն» փոխհարաբերությունը, առաջարկել վերջինիս կարգավորման ուշագրավ և այսօրվան էլ պատշաճ միջոցներ:

Ինչպես այս, այնպես էլ հայոց համակեցության մյուս հիմնարար խնդիրների սոցիալ-փիլիսոփայական իմաստավորման և արդյունավետ կարգավորման լավագույն փորձագետը հենց ինքը՝ Հովհաննես Թումանյանն է, դա՛ է հարկավոր ամենից առաջ գիտակցել նրա հոգևոր ժառանգությունը իմաստավորելիս՝ «հրավիրել» և մասնակից դարձնել անգուցական հանրաբան փիլիսոփային այսօրվա հայության կյանքի իմաստուն և արդարացի կազմակերպմանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում Հովհաննես Թումանյանի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումների վերլուծությունը սկսում է տակավին երիտասարդ բանաստեղծի արժեքային համակարգից, ինչն էլ վճռորոշ դեր է խաղացել հանրային կյանքի երևույթներն իմաստավորելիս: Հովհ. Թումանյանի հայե-

⁷⁸ Անդ:

ցակարգի հիմքը անհատի և հանրության վարվելակերպի փոխադարձ պատճառակցման գաղափարն է՝ մարդիկ իրենք են ստեղծում հասարակություն, հանրային կյանք, իրենց կնիքը թողնում են հաստատությունների վրա, միաժամանակ ամեն ոք ձևավորվում է որոշակի սոցիալական, քաղաքական, մշակութային, բարոյական միջավայրում:

Այս լույսի ներքո են քննարկվում հայոց համակեցության հիմնական խնդիրները, մասնավորապես՝ կազմակերպման և կառավարման սխալները, վաստակավոր անհատների ուշացած գնահատումը, անհարկի փոխադարձ անհանդուրժողականության դրսևորումը, «գրող-հասարակություն» փոխհարաբերությունների բովանդակ կարգավորման անհրաժեշտությունը: Բանաստեղծ փիլիսոփայի կարևոր հարցադրումներից մեկը «ծանիր զքեզ» հինավուրց պատգամի արդիականացումն է՝ անհատի և հանրության ինքնաձանաչումը որպես հիմնական պայման նրանց շահերը բնականոն ներդաշնակելու, ազգային հավաքականության ներուժն առավելագույնս բացահայտելու և արդյունավետ գործադրելու:

Հիմնաբառեր. Հովհաննես Թումանյան, սոցիալ-փիլիսոփայական դիտարկումներ, ազգային ինքնաձանաչում, «վարչական անկարգության վնասակարություն», մարդաբանական գնահատումներ, անհատի վաստակի համարժեք գնահատում, հանդուրժողականություն և անհանդուրժողականություն, «գրող-հասարակություն» փոխհարաբերությունը, «տանել-ներել-սիրել» վարքականոնը

Օգտագործված գրականություն

1. **Հովհ. Թումանյան**, Նամակներ (1885–1904), ԵԼԺ, հատ. իններորդ, Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1997, էջ 21:
2. **Հովհ. Թումանյան**, Ավելի վատ // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1995, էջ 34:
3. **Հովհ. Թումանյան**, Քառյակներ // ԵԼԺ տասը հատորով (վերախմբ. հրատ), հատ. երկրորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 20:
4. **Հովհ. Թումանյան**, Դոկումենտները // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 127:
5. **Ն. Թումանյան**, Հուշեր և զրույցներ, Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 151, 205:
6. **Հովհ. Թումանյան**, Մեծ ցավը // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 174:
7. **Հովհ. Թումանյան**, Հայի ոգին // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ
8. **Վ. Միրզոյան**, Հովհաննես Թումանյանի հավատո հանգանակը // «Հյուսիսփայլ», 2018, թ. 1, էջ 4–11:
9. **Վ. Միրզոյան**, Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում, Եր.: Մեկնարկ, 2021:
10. **Հովհ. Թումանյան**, Արգելքներ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 50:

11. **Հովհ. Թումանյան**, Դառնացած ժողովուրդ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 225:
12. **Հովհ. Թումանյան**, Պատասխան Տիցիան Տաբիձեին // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 377:
13. **Հովհ. Թումանյան**, Տրտունջ // ԵԼԺ տապը հատորով (վերախմբ. հրատ), հատ. առաջին, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2018, էջ 215:
14. **Արս. Տերտերեան**, Յովհաննէս Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն: Վաղարշապատ, 1911, էջ 27:
15. **Ն. Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 184:
16. **Հովհ. Թումանյան**, Մահից հետո // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 34:
17. **Հովհ. Թումանյան**, <Խոսք Ծերենցի մասին> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 63:
18. **Զորավար Անդրանիկ**, Վերհիշումներ բանաստեղծ Հովհաննէս Թումանյանի կյանքին // «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 550:
19. **Հովհ. Թումանյան**, Ազնիվ մարդը // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 271:
20. **Հովհ. Թումանյան**, Խոշոր հայը // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 101:
21. **Հովհ. Թումանյան**, Ազնիվ և անկեղծ // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 99:
22. **Հովհ. Թումանյան**, Ս. Զավարյանի բնավորության գծերից // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 105:
23. **Հովհ. Թումանյան**, Թանկ մարդու հիշատակին // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 179:
24. **Հովհ. Թումանյան**, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները // ԵԼԺ, հատ. ութերորդ, Եր., 1995, էջ 65:
25. **Հովհ. Թումանյան**, <Խոսք պատանի գրասերներին> // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995, էջ 31:

СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЕ НАБЛЮДЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА

Валерий Мирзоян

доктор философских наук, профессор, свободный исследователь

В статье анализ социально-философских наблюдений Ованеса Туманяна начинается с ценностной системы молодого поэта, которая сыграла решающую роль при осмыслении им различных явлений общественной жизни. В основе концепции Туманяна – идея взаимной детерминации личности и общества: люди сами создают общество, сообщают социальным институтам свой собственный характер, вместе с тем каждый человек формируется в определённой социальной, политической, нравственной среде.

С этой точки зрения поэтом обсуждаются основные проблемы общежития, в частности ошибки в организации и управления, запоздалое признание заслуг достойных личностей, неуместное проявление взаимной нетерпимости, необходимость урегулирования всей гаммы взаимоотношений писателя и общества. Один из важных выводов Туманяна – это актуализация древнего завета «познай себя»: именно самопознание личности и общества является основным условием гармоничного сочетания их интересов, наиболее полного раскрытия и эффективного использования совместного потенциала.

Ключевые слова: Ованес Туманян, социально-философские наблюдения, национальное саопознание, «вредность административного беспорядка», антропологические оценки, терпимость и нетерпимость, взаимоотношение «писатель–общество», поведенческий кодекс «терпеть–простить–любить».

SOCIO-PHILOSOPHICAL OBSERVATIONS OF HOVANNES TUMANYAN

Valeri Mirzoyan

SC. D. in Philosophy, Professor, Freelancer

In the article, the analysis of the socio-philosophical observations of Hovhannes Tumanyan begins with the value system of the young poet, which played a decisive role in his understanding of various phenomena of social life. Tumanyan's concept is based on the idea of mutual determination of the individual and society: people themselves create society, communicate their own character to social institutions, at the same time, each person is formed in a certain social, political, moral environment. From this point of view, the poet discusses the main problems of the hostel, in particular, errors in organization and management, belated recognition of the merits of worthy individuals, an inappropriate manifestation of mutual intolerance, the need to resolve the entire gamut of relationships between the writer and society. One of Tumanyan's important conclusions is the actualization of the ancient precept "know thyself": it is the self-knowledge of the individual and society that is the main condition for the harmonious combination of their interests, the most complete disclosure and effective use of joint potential.

Key words: Hovhannes Tumanyan, socio-philosophical observations, national self-knowledge, "harmfulness of administrative disorder", anthropological assessments, tolerance and intolerance, "writer–society" relationship, behavioral code "endure–forgive–love".

Ներկայացվել է՝ 11.02.2023 թ.

Ընդունվել է՝ 09.03.2023 թ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԹՆԱՄՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՑԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԶԵՎՈՒՄՆԵՐԸ

Արմեն Ճուղուրյան

Հյուսիսային համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
Jarmen1@yandex.ru

Սաթեն Ալավերդյան

ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչության խմբագիր
a_satenik@yahoo.com

Փետրվարի 19-ին լրացավ Ամենայն հայոց բանաստեղծ, մեծն Հովհաննես Թումանյանի ծննդյան 154-ամյակը, իսկ աշնանը կբոլորի նրա մահվան 100-ամյա տարելիցը: Մա նշանակում է՝ տարեսկզբից մինչև տարեվերջ 2023-ը կլինի թումանյանական՝ նրա կյանքին, գործունեությանն ու ստեղծագործությանը նվիրված բազմաթիվ անդրադարձներով լի...

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր հանճար սերունդների հիշողության մեջ մնում է հավերժ, և այս առումով Թումանյանը բացառություն չէ. նրա թողած ժառանգությունն այնքան բազմաբովանդակ ու խորքային է, որ, թերևս, դարեր կպահանջվեն դա լիարժեքորեն վերլուծելու և, ինչու չէ, ինչպես հարկն է՝ ընկալելու համար:

«Հեղեղի պես իջավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից՝ բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի ու բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգերով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող բնությունը՝ փռեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծությունը»,⁷⁹ այսպես է մեծ լոռեցուն բնութագրել Ավետիք Իսահակյանը:

Հովհաննես Թումանյանի վաստակը չի սահմանափակվում միայն գրական գոհարների ստեղծմամբ, քանզի անգնահատելի է եղել նրա դերը նաև հասարակական և ազգապահպանական ասպարեզում, ինչի մասին են հավաստում գրողի նամականին և հրապարակախոսությունը: Էությամբ լինելով գործունյա անհատ՝ Թումանյանն անմասն չի մնացել իր շուրջ կատարվող իրադարձություններից ու դարձել է դրանց ակտիվ մասնակիցն ու ուղղորդողը: Եվ ի՞նչն է այստեղ հետաքրքրական, ինչպես բնորոշ է հանճարներին, իր ժամանակին վերաբերող նրա մտքերը, մտորումներն ու եզրահանգումները հարյուրամյակների հեռվից նույնքան արդիական են՝ կամրջելով անցյալն ու ներկան: Հիրավի, միայն հանճարի միտքն է, որ կարողանում է մուտք գործել ապագա և կատարել դարա-

⁷⁹ **Տե՛ս** Մեջբերումներ Թումանյանի մասին, <https://blog.times.am/?p=257204&l=am>

կազմիկ հետևություններ: Այս առնչությամբ դիպուկ է Զապել Եսայանի դիտարկումը.

«Հովհաննես Թումանյանը ճառագայթող մարդ էր: Բանաստեղծ ոչ միայն գրչով, այլև իր անձով, իր կյանքով և կենցաղով: Անսպառ վեհանձնության տպավորություն մը կգործեր, որովհետև անկեղծ ինքզինքը կշոյլեր անհաշիվ: Կյանքի դժվարին ճամբաներու վրա կքալեր ձեռքերը բռնավոր գանձերով և շնորհներով: Հարուստ էր և զեղուն բարոյական ուժերով, գերակշիռ ուժերով, որովհետև նաև իր մեղիչ ուժը սերն էր: Բայց ոչ արդի սերունդը, ոչ գալիք սերունդները չեն մոռանար զինքը: Վերագնահատման ամենախիստ բովերեն Հովհաննես Թումանյանի անձը և երկը դուրս կուգան անեղծ և պայծառ: Անկեղծ իր էության ամենաբարձր արտահայտություններով միշտ պիտի մնա ներկա և թերևս պիտի ըլլա միակ հաստատ օղակը, որ ապագան պիտի կապե անցյալին»⁸⁰

Իրոք, երբ հայտնվում էս Թումանյանի գրական ժառանգության հեղեղատում, ընթերցում հեղինակի հոգվածներն ու նամակները, թվում է՝ դրանք գրվել են ոչ թե հարյուր տարի առաջ, այլ հենց այսօր, ներկայում, քանզի արտացոլում են մերօրյա մտահոգություններն ու տագնապները, հույզերն ու ապրումները:

Որպես վերոնշյալի վառ ապացույց և դասական օրինակ՝ անդրադառնանք Թումանյանի «Դառնացած ժողովուրդ» հոդվածին, որը լույս է տեսել 1910 թվականին: Այստեղ ամփոփված վերլուծական դրույթները, կարծես թե, ամբողջովին վերաբերում են մեր օրերին՝ «ժողովրդական դառնությունից» դուրս գալու «դեղատոմս-առաջարկներով» հանդերձ:

Ոչ ոք չի կարող ժխտել, որ հայ ժողովուրդը ներկայում ոչ պակաս դառնացած է, որքան հարյուր տարի առաջ: Արցախյան 44-օրյա պատերազմի վերքերն առայսօր չեն սպիանում, մարդիկ ընկճախտի մեջ են, և ամենուր զգացվում է ապրված ու վերահաս ողբերգության շունչը: Իհարկե, չենք կարող չնշել նաև, որ դառնության համը մեր ժողովուրդը նշմարում էր անգամ մինչև պատերազմը՝ ձեռք բերված անկախության պահպանման, երկրի զարգացման հեռանկարների, ազգի վերածննդի հետագա խոչընդոտների հաղթահարման առումներով:

Ու, կարծես, այդ մտահոգություններն ազգային հիվանդության պես մի բան են, որ շարունակաբար ուղեկցում են մեզ՝ դարերի խորքից մինչև մեր օրերը: Թվում էր՝ անկախության ձեռքբերումից հետո պիտի իսպառ վերանար թումանյանական բնութագրմամբ՝ «ազգակործան տագնապը», մինչդեռ, ցավալիորեն, գնալով այն ավելի ու ավելի է սրվում:

⁸⁰ *Տե՛ս* Զապել Եսայանը Թումանյանի մասին,

https://sveta-sargsyan.do.am/index/mec'ery'_t'owmanyani_masin/0-538

Ամենայն հայոց բանաստեղծն արդեն իսկ իր կենդանության օրոք կանխորոշել էր մեր ազգին բնորոշ մի շարք տազնապաներ և «հիվանդություններ», որոնք լուրջ մտորումների տեղիք են տալիս մինչ այսօր.

«Մտածումներն են, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Նրանք էն ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիլները կամ ժանտախտի թույնը: Չեք կարող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն, կամ դուք պետք է մարդկային հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվեք, առողջանաք, իհարկե, եթե էնքան արիություն ու հասկացողություն ունիք»⁸¹

Թումանյանի համոզմամբ՝ ազգային զարթոնքին ընդառաջ պետք է թոթափվեին այն ախտերը, որոնց բացիլները քայքայում են ազգային համերաշխությունը, հասարակությունը դարձնում չար և անհանդուրժող: Մինչդեռ միմյանց նկատմամբ չարությունը դեռևս շարունակում է մնալ մեր առօրյա ուղեկիցը, երբ փորձում ենք ազգը ներկայացնել որպես «սպիտակների» ու «սևերի», «նախկինների» ու «ներկաների» համախումբ՝ անգամ այն օրհասական պահերին, երբ երկիրը կանգնած է պետականության կորստի անդունդի եզրին և ազգային միասնությունն անհրաժեշտ է օղուջրի պես: Սակայն, միևնույն է, նույնիսկ կործանարար անդունդի եզրով քայլելիս հայ ազգը միախմբման և ամբողջական համերաշխության չի հանգում, քանի որ հասարակությունը «հիվանդ» է, և այդ հիվանդությունը, թումանյանական բնութագրմամբ, ախտորոշվում է որպես «համատարած չարություն»: Եվ հարյուրամյակի խորքից որքան պետք է հեռուն ճառագայթեր Թումանյանի հանճարեղ միտքը, որ կարողանար բացահայտել ու ախտորոշել մեր ազգին բնորոշ քայքայիչ այս հիվանդությունը.

«Էն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում: Էսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիլներ կան իմ կրծքում»⁸²

Բոլորիս հայտնի առողջապահական գործելաոճն է թելադրում, որ մարդու բուժումը կախված է ոչ միայն բժշկից, այլև հիվանդից, երբ վերջինս, քաջ գիտակցելով իր վիճակի ողջ ծանրությունը, սկսում է, իր հերթին, պայքարել հիվանդության դեմ: Այս դեպքում վրա հասած հիվանդությունը սկսում է նահանջել մարդու օրգանիզմից, քանի որ հանդիպում է վերջինիս դիմադրությանն ու անհանդուրժողականությանը: Սակայն,

⁸¹ *Տե՛ս* Հովհաննես Թումանյան, Դառնացած ժողովուրդ, <https://www.usanogh.am/glxavor/hovhannes-tumanyan-damcac-joxovurd/>

⁸² *Տե՛ս* նույն տեղում:

միշտ չէ, որ հիվանդության գոյության փաստն ընդունվում է որպես անհերքելի, և մարդիկ, փորձելով արհեստականորեն խույս տալ այդ իրողությունից, ավելի են ծանրացնում իրենց վիճակը: Նույնը կատարվում է նաև հասարակության մեջ ներթափանցած «հիվանդության» պարագայում չընդունելով կամ ձևացնելով, որ չենք էլ նկատում դրա ախտանիշները, կարող ենք անմտորեն սայթաքել ազգակործան անդունդի եզրից և սրընթաց ներքև գահավիժել...

Հասարակությունը «յուրայինների» և «ոչամերոնքականների» բաժանելը, անձերի նկատմամբ ձևավորված չարության ախտը կոծկելը պարզապես անհաջող փորձեր են այդ հիվանդության առկայության մասին բարձրաձայնումը լռեցնելու նպատակով: Ու որքան դիպուկ և այժմեական է Թումանյանի հետևյալ խոսքը.

«Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հոչակում հիվանդ: Ամեն միևնույն ինքը չար չի, կեղծավոր չի, հայհոյող չի, ստախոս չի, թալֆայական չի, էդ ամենը իրենից դուրս ուրիշներն են: Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ ականջ դնել: Ճշմարիտը էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով»⁸³

Հետևելով Թումանյանի մտքերի ընթացքին՝ մեզ համար պետք է հասկանալի դառնա, որ չարության տարածումն ու ազգի տարանջատված լինելը չափազանց վտանգավոր երևույթներ են, որոնց անտեսումն ու միտումնավոր շրջանցումն էլ ավելի «կախտահարեն» հասարակությունը՝ դարձնելով նրան անտարբեր ու անխտրական:

«Դառնացած ժողովուրդ» հոդվածում Թումանյանն օրինակներ է բերում հասարակության տարբեր շերտերի վարքագծային դրսևորումներից, կարծես թե, փորձելով ապացուցել իր համոզմունքն առ այն, որ չարության քայքայիչ նախանշանն անում է իր սև գործը հասարակության բոլոր շերտերում՝ մտավորականից մինչև ռանչպար, հոգևորականից մինչև վաճառական...

Ըստ Թումանյանի՝ չարությունը, չկամությունը և նախանձը քայքայիչ ազդեցություն են թողնում գյուղացի ռանչպարների վրա, երբ նրանք չեն հանդուրժում մեկը մյուսի ագրարային ձեռքբերումները: Դրանով իսկ առաջ է քաշվում այն թեզը, որ հիվանդ հասարակությունը պետք է ուժ գտնի իր մեջ՝ թոթափելու տարածված հիվանդության բացիլներն ամբողջապես և բռնելու առողջացման ճանապարհը՝ վերջնականապես... Նույնը վերաբերում է վաճառականներին, որոնք, ճիշտ է, չարքաշ աշխատանքով չեն ապրում, բայց, միևնույն է, տանել չեն կարողանում գործընկերոջ ձեռներեցական հաջողությունները.

⁸³ Տե՛ս նույն տեղում:

«Գյուղացի ռանձալար մարդիկ են, հարևան, միասին մեծացած, իրար հետ օխտը բերը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազմանում, մյուսը նախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ արնով է ընկնում:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսելիս քունը կորցնում է ու ենքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հաջողության վրա է դարդ անում, ու, տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնասելու»⁸⁴

Հատկանշական է, որ մեծ գրողը ոչ մի առաջընթաց չի ակնկալում հասարակական այս չկամությունից՝ դա համարելով չարիք և ազգակործան գործոն: Անիմաստ չարակամությունը, անառողջ հանրային մրցակցությունը հասարակական տարբեր շերտերի միջև հաճախ հանգեցնում են ոչ միայն հանրային «իմունիտետի» կորստի, այլև ինքնաթուլացման, որից շահում են «պղտոր ջրում ձուկ որսացող» արտաքին խաղացողները:

«Քաղաքացի թե գյուղացի՝ երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տնում է երկար տարիներ և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել կամ հենց երկուսն էլ փշանում են»:

Թումանյանի՝ այս համատեքստում անխնա քննադատությունից չի խուսափում նույնիսկ մտավորականությունը, որի գործելաձևը նույնքան պախարակելի է, որքան հասարակության մյուս շերտերինը: Գրողի դիտարկմամբ՝ ազգային, հասարակական, գրական գործիչները տանել չեն կարողանում մեկը մյուսի հոչակն ու հաջողությունը, իսկ ուսուցիչները:

«Դասերից ավելի շատ է՝ն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ չնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ճգնում են պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել սասպարեզից ու սպանել բարոյապես... ո՛չ մի մեղմություն, ո՛չ մի ներողամտություն, ո՛չ մի սահման չարությանը»:

Իսկապես, ինչո՞ւ մենք՝ հայերս, որ ունենք ստեղծարար միտք և մրցակցային առավելություններ, շատ ու շատ հատկանիշներով գերազանցում ենք այլ ազգերին, այնուամենայնիվ, կուրորեն գերի ենք դառնում չարակամությանը, միմյանց հաջողությունը չարժեքավորելու մտայնությամբ:

Թումանյանն ունի նաև այս հարցի պատասխանը: Նրա դատողություններում ուրվագծվում է ազգի մեջ չարակամության ձևավորման պատճառահետևանքային փոխկապակցության շղթան, որը համառո-

⁸⁴ *Տե՛ս* նույն տեղում:

տակի կարելի է նկարագրել հետևյալ կերպ. դարեր շարունակ բարբարոս ժողովուրդների տիրապետության տակ գտնվող ազգը դժվարությամբ է վերածվում բարի կամքի դեսպանի, քանզի «գոյատևման իմունիտետի» ձևավորման կարևորագույն գործոն է համարում չարակամությունը՝ որպես ինքնապաշտպանության միջոց...

Քննելով հայ հասարակության ներկայիս վարքագիծը, անշուշտ, կարելի է համաձայնել մեծ գրողի վերոնշյալ համոզմունքի հետ: Մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը ստիպում է, որ մենք մշտապես գրտնվենք հարձակողական վարքագիծ ցուցաբերող պետությունների «աքցանում», որը շարունակաբար սեղմվում է մեր սահմանների երկայնքով, մեր երազանքների «թռիչքուղու» շուրջ և ստիպում, որ գոյատևման բնագոյը միշտ արթուն մնա, ինչից էլ ծնվում է չարությունը: Ավելին, չարության և չկամության մթնոլորտը շարունակում է դառնացնել մեր իրականությունը, որը շատ դիպուկ կերպով է մեկնաբանում Թումանյանը՝ գուգահեռներ տանելով բնության և հանրության վարքագծային երևույթների միջև.

«Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնանում ու դաժանանում է և՛ մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան»⁸⁵

Հիմնվելով ազգային գոյատևման և ինքնամաքման վերլուծությունների վրա՝ Թումանյանը հորդորում է չապրել սին պատրանքներով, կոչ է անում արթնամտության, որը չափազանց թիրախային է ու արդիական նաև մեր օրերի համար: Գիտակցելով ազգի առջև ծառացած մարտահրավերները, անշուշտ, չպետք է մնալ թմբի մեջ, շարունակել լինել կարճամիտ, բավարարվել զուտ ակնթարթային հաջողություններով... Թումանյանը հորդորում է չոգևորվել մակերեսային առաջընթացով, որը հիմնագուրկ է և, երկար կյանք չունենալով, դատապարտված է կասեցման, քանի որ չի վայլում առողջ հասարակության աջակցությունը.

«Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ «հառաջդիմություն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «գրականություն», և՛ «դպրոց», և՛ «բարեգործություն», բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու

⁸⁵ Տե՛ս նույն տեղում:

բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թանկ ու համակրելի»։⁸⁶

Հենց այս նկատառումներից էլ դառնացած՝ մեծանուն գրողն ազգի փրկության ելքը տեսնում «ներսից» և ոչ թե «դրսից»։ Եվ ինչո՞ւ պիտի այսօր էլ մեր պետականության ամրապնդման ուղին մերթնդներթ կապենք Արևմուտքի, հետո՝ Արևելքի կամ Հյուսիսի հետ, առանց հասկանալու, որ, առաջին հերթին, այն պետք է որոնենք հենց մեր ներսում։ Այս առումով, մեծանուն գրողն ընդգծում է, որ անհրաժեշտ է ունենալ ազգային իմաստություն, հոգու արիություն և աչքերը բնավ չփակել ազգին վրա հասած ծանր հիվանդության դիմաց, որ շարունակաբար դառնացնում է մեր հոգին։ Որքա՞ն մարգարեկան է Թումանյանի հորդորը հայ ազգի վրա ծանրացած ընկճախտի մշուշը ցրելու առումով.

«...մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը։ Ապա թե՛ էդ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը։ Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»։⁸⁷

Ազգային արթնամտության վերլուծական շղթայում Թումանյանը չի շրջանցում ազգի նկատմամբ պատասխանատվության ինստիտուտի անգործության խնդիրը, ինչը հատկանշական է նաև մեր օրերին։ Շուրջ երեսուն տարի՝ անկախությունից ի վեր, մեր անհաջողությունների մեղավորներին ենք փնտրում, բայց այդպես էլ չենք գտնում, իսկ թե գտնում ենք՝ ազգովի չենք էլ պատժում գլխավոր մեղավորներին։

Անկախության կերտման ճանապարհին մեր առջև ծառացան առաջընթացը խոչընդոտող բազմաթիվ խութեր, ունեցանք տնտեսական ու մարդկային հսկայական կորուստներ, քաղաքական հիասթափություններ, ազգային երազանքների փլուզումներ, որոնք փորձեցինք կա՛մ ինչ-որ կերպ հաղթահարել, կա՛մ էլ անտեսել՝ առանց գտնելու և ազգովի պատժելու մեղավորներին՝ որպես պատմության դաս հրամցնելով հետագա սերունդներին։

Ընթերցելով մեծ լոռեցու՝ Ավետիք Իսահակյանին հասցեագրված նամակներից մեկը, ևս մեկ անգամ համոզվում ենք՝ թումանյանական ժամանակներից մինչ օրս, ցավոք, գրեթե ոչինչ չի փոխվել.

«Մենք թե՛ դրսից, եւ թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը։ Գլխավորապես մենք։ Մենք եւ՛ն ասում, եւ սրա մեջն է ճշմարտությունը։ Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը գողեր ու ավազակներ, մի մասը ապիկար թշվառականներ, եւ չերեւաց մի բազմություն, զոնե

⁸⁶ Տե՛ս նույն տեղում։

⁸⁷ Տե՛ս նույն տեղում։

մի խմբակ, որ վերածնվող երկրի շունչը ու բարոյական կարողությունը հայտնաբերեր: Էսքան աղետների ու պարտությունների մեջ ոչ մի մեղավոր չերեաց, ոչ ոք ոչ պատասխանի կանչվեց, ոչ պատասխան տվեց: Եվ շարունակվում է. այժմ էլ նույն մարդիկը, նույն ճանապարհներով...»⁸⁸

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հովհաննես Թումանյանի նամակներին և մասնավորապես՝ «Դառնացած ժողովուրդ» հոդվածին, որտեղ մեծանուն գրողն իր ողջ խորաթափանցությամբ մեկնաբանում է մեր ազգային նկարագիրը՝ արթնակոչեր անելով ողջ հայ ժողովրդին: Թումանյանը քննության է ենթարկում հայ ազգի դառնությունների և անհաջողությունների պատճառահետևանքային շղթան, որի շատ տարրեր, ցավոք, արդիական են նաև մեր օրերում:

Հետաքրքրական է, որ Ամենայն հայոց բանաստեղծն ազգային շարունակական անհաջողությունների հիմնավոր պատճառ է համարում ներազգային չարակամությունը՝ դա որակելով որպես հետևանք դարեր շարունակ հարևան ազգերի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառված բիրտ ուժի ու բռնաճնշումների: Թումանյանը հայ ազգին ուղեկցող դառնությունների և անհաջողությունների հաղթահարման, ինչպես նաև առկա հիմնախնդիրների լուծման ուղին տեսնում է ոչ թե արտաքին աշխարհից ակնկալվող միջամտության, այլ ինքնամաքման գործընթացի մեջ, որի մեկնարկումը միահամուռ կամք և ազնվություն է պահանջում: Բանաստեղծը հորդորում է չտրվել հիվանդ հասարակարգի հիման վրա ձևավորվող ժամանակավոր և մակերեսային հաջողությունների կարճաժամկետ պատրանքներին, քանի որ դրանք ենթակա են փլուզման: Ըստ Թումանյանի՝ հայ ազգի առաջընթացի կարևորագույն երաշխիքներից է ապավինումն ինքնամաքված հասարակությանը: Թումանյանական արժեհամակարգում կարևորվում է ազգային պատասխանատվության ինստիտուտի իրատեսական գործարկումը, որը, ակնհայտորեն, բացակայում է նաև մեր օրերում:

Հիմնաբառեր. Հովհաննես Թումանյան, ազգային հոգսեր, ազգային չարակամություն, ինքնամաքում, ազգային շահեր

Օգտագործված գրականություն

1. Մեջբերումներ Թումանյանի մասին, <https://blog.times.am/?p=257204&l=am>
2. Զապել Եսայանը Թումանյանի մասին, https://sveta-sargsyan.do.am/index/mec'ery'_t'owmanyani_masin/0-538
3. Հովհաննես Թումանյան, Դառնացած ժողովուրդ, <https://www.usanogh.am/glxavor/hovhannes-tumanyan-darnacac-joxovurd/>

⁸⁸ Տե՛ս նույն տեղում:

ТУМАНЯНОВСКОЕ ФОРМУЛИРОВАНИЕ НАЦИОНАЛЬНОГО ЗДРАВОМЫСЛИЯ

Армен Джугурян

Профессор Северного университета, доктор экономических наук

Сатен Алавердян

Редактор издательства "Тнтесает" АГЭУ

В статье анализируется общественные тревоги Ованеса Туманяна. В публикации «Озлобленный народ» писатель со всей проницательностью интерпретирует армянский национальный профиль, давая тревожный сигнал всему народу. Туманян рассматривает причинно-следственную цепь упадка и несостоятельности поведения армянской нации, многие элементы которой, к сожалению, актуальны и сегодня.

Интересно, что причиной непрекращающихся национальных неудач поэт считает внутреннюю злобу, описывая ее как следствие жестокой силы и угнетения, веками применявшихся к армянскому народу соседними народами. Путь преодоления неудач сопутствующие армянскому народу, а также решения существующих проблем Туманян видит не во вмешательстве, ожидаемом от внешнего мира, а в процессе самоочищения, инициация которого требует единой воли и честности. Поэт призывает не поддаваться сиюминутным иллюзиям временных и поверхностных успехов, формирующихся на почве больного общества, ибо они подвержены краху. По словам Туманяна, одной из важнейших гарантий прогресса армянского народа является опора на самоочищение общества. В системе ценностей Туманяна важна реалистичная реализация института национальной ответственности, чего явно не хватает и сегодня.

Ключевые слова: Ованес Туманян, национальные заботы, национальная злоба, самоочищение, национальные интересы.

TUMANYAN'S FORMULATION OF NATIONAL SANITY

Armen Tshuguryan

Professor at Northern University, Doctor of Economics

Saten Alaverdyan

Editor of ASUE "Tntesaget" Publishing House

The article analyzes the public concerns of Hovhannes Tumanyan. In the publication “Embittered People”, the writer provides in-depth interpretation of Armenian national profile with, giving an alarming signal to the whole nation. Tumanyan considers the causal chain of the decline and failure of Armenian nation's behavior, most of its elements unfortunately being still relevant.

Interestingly, the poet considers internal malice to be the cause of ongoing national failures, describing it as a result of brutal force and oppression applied towards the Armenian people by neighboring nations for centuries. Tumanyan sees the way of overcoming the failures that accompany Armenian people, as well as addressing the existing problems, not in the intervention expected from the outer world, but in the process of self-purification, initiation of which requires common will and honesty. The poet urges not to give way to momentary illusions of temporary and superficial successes that are formed on the soil of a sick society, because they are apt to collapse. According to Tumanyan, one of the most important guarantees for the progress of the Armenian people is the reliance on the self-purification of the society. In Tumanyan's value system, the realistic implementation of the institution of national responsibility is important, which is clearly lacking even today.

Key words: Hovhannes Tumanyan, national concerns, national malice, self-purification, national interests.

Ներկայացվել է՝ 19.01.2023 թ.

Ընդունվել է՝ 08.02.2023 թ.

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Անահիտ Մուկուչյան

Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի դասախոս
anahitmukuchyan@mail.ru

19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին թերևս անհնար է գտնել հայոց պատմության վճռորոշ ու դարակազմիկ մի դրվագ, որն առնչված չլինի Հովհաննես Թումանյանի կյանքի ու գործունեության հետ: Մեծն Լոռեցու կյանքն ասես զուգահեռ իրականության մեջ կրկնում է մեր պատմության կորուստները, դավերը, շինծու մեղադրանքները, բայց և այս ամենի հետ Թումանյանը մնում է մարդ ու մեծ հումանիստ: Ազգամիջյան բախումները, ցեղասպանությունը, զավակների կորուստը, ձերբակալությունները չկարողացան չարացնել Թումանյանին, և նա քաջ գիտակցում էր, որ ժողովուրդների հիշողությունը, պատմական վկայությունների ու իրադարձությունների հիշողությունից բացի, նաև սրտի և արյան հիշողություն է, որն անցնում է դարից դար, հազարամյակից հազարամյակ:⁸⁹ Ու ազգերը պիտի կողք կողքի ապրեն ու արարեն, և յուրաքանչյուր, անգամ աննշան էթնիկ բախում կարող է խեղաթուրել հարևան ժողովուրդների հնարավոր խաղաղ գոյակցությունը: Թումանյանն ասում է. «Վերջապես, մենք՝ բանաստեղծներս, ավելի իրավունք ունենք մեր հաշտության ձայնը բարձրացնելու, երբ ժողովրդի արյունն է հոսում, քան իշխանությունները, որովհետև մենք ենք ժողովրդի կոչված ներկայացուցիչները, մե՞նք ենք, որ վշտանում ենք նրա տառապանքով և խնդում նրա ուրախությամբ»⁹⁰:

Բայց և Թումանյանը դեմ էր խեղճությանը. «Ամեն մի ժողովուրդ, ինչքան էլ նա ոռայա լինի (որ հոտ կնշանակի),... չեն կարող տանել թե՛ իրենց և թե՛ իրենց հարազատների տանջանքն ու անպատվությունը... Մարդկային կարողությունն ու համբերությունը, ինչքան էլ մեծ լինի, մի սահման ունի»⁹¹:

Պատմությունը դաժան ուսուցիչ է եղել մեր ժողովրդի համար, որովհետև իր շրջապատույտում տեղի ունեցող ողբերգություններից մենք մինչ այսօր դասեր չենք քաղել, բայց քանի դեռ կանք, պիտի պայքարենք, որովհետև ժամանակն ու պատմությունը թույլերին չեն ներում, իսկ Թու-

⁸⁹ Տե՛ս **Հրաչիկ Բայրամյան**, Հովհաննես Թումանյանը հայ-վրացական բարեկամության ջատագով,
http://www.armin.am/images/menus/2892/Hrachik_Bayramyan.pdf

⁹⁰ Տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 628

⁹¹ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Ահա թե ինչու,
<http://toumanian.am/arm/tumanyan/creations/aha-te-inchu>

մանյանը առաջ էր քաշում ուժեղ ու արժանապատիվ պետություն ունենալու իր բանաձևը:

Հոդվածի նպատակն է ևս մեկ անգամ հիշեցնել ազգամիջյան խընդիրների լուծման թումանյանական պարզ դեղատոմսերը, որոնք ամփոփված են պոետի հոդվածներում, հասարաքաղաքական կյանքը լավագույնս բնորոշող ստեղծագործություններում, ինչպես նաև ժամանակակիցների հուշերում:

Հովհաննես Թումանյանն իր կարճ, բայց և բովանդակ կյանքով ապացուցեց, որ մտավորականը չի կարող ապրել ազգային խնդիրներից և ազգային կյանքից զատված և անհաղորդ մնալ տարածաշրջանին և առավել ևս իր ժողովրդին բաժին հասած ողբերգություններին: Հասարաքաղաքական կյանքի բարեփոխումները հեղափոխական ճանապարհներով, առավել ևս մարդկային կյանքերի գնով իրագործելու ուղին խորթ էր Թումանյանի խաղաղասեր, հաշտարար և մարդուն ամեն ինչից վեր դասող էությանը: Ոչ մի կուսակցության չի հաջողվել բանաստեղծին «սեփականաշնորհել», թեև փորձեր արվել են բոլորի կողմից:

Հայ ժողովրդի բնավորության յուրահատուկ, լավագույն հատկանիշներն իր ներսում բյուրեղացրած, հարազատ ժողովրդի էությունը, աշխարհայացքը, աշխարհագրագումը լավագույնս ճանաչած ու իր գրական հերոսների կերպարներով ներկայացրած ամենահայ հանճար Հովհաննես Թումանյանը սիրված ու հարգված, անառարկելի հեղինակություն ու հանճարեղ էր ամենուրեք, նույնիսկ ազգամիջյան բախումների ամենաթեժ պահին: Ուստի պատահական չէ, որ ռուսական կայսրության կողմից հրահրված հայ-թաթարական բախումների ժամանակ նա կազմակերպեց ինքնապաշտպանական ջոկատ, բայց և սկսեց բանակցությունները թուրք մտավորականների և հոգևորականների հետ՝ ստանձնելով հաշտարարի դերը: Մարդասիրությունն իր արյան մեջ էր, իր տան, հայրենի հող ու ջրի մեջ էր: Նրա մեջ ամբողջացել էր մարդասեր հոր ու ըմբոստ մոր տեսակը: «Շատ է պատահել, որ, մայրս տանից դուրս է գնացել թե չէ, հայրս ինձ կանգնեցրել է դռանը, որ հսկեմ, ինքը ցորենը լցրել, տվել մի որևէ պակասավոր գյուղացու կամ սարից իջած թուրքի շալակը»:⁹² Բայց թումանյանական տեսակը լավագույնս բնորոշում է «Ահմադ» ստեղծագործությունը, որը իրենց պապական օջախում ծառայող թուրքի մասին էր, որին տրվող հրաժեշտը ամենատպալորիչ դրվագներից մեկն է. «Իհարկե, անունը լսողը կասեր թուրք է, բայց հենց ներս մտներ, հերիք էր, իսկույն կիմանար, որ տան սիրելի տղան է: . . . Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան, մեր աղ ու հացն էլ քեզ հալալ լինի, քո մոր կաթնի պես: Մեզ մտիցդ գցես ոչ: Թե աջողություն ունենաս՝ իմացրու, որ հարեհաս լինենք:

⁹² Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Ինքնակենսագրություն, <http://toumanian.am/upload/j488650923.pdf>

Դե, գնա, քեզ մատաղ, աստված բարի ճամփա տա . . »⁹³: Այս պարզ ու անմիջական ստեղծագործությունը ցույց է տալիս, որ Թումանյանը փորձում էր ազգերի համերաշխության համար պայքարել հենց հասարակ մարդկանց միջոցով: «Թումանյանին սարսափեցնում էր մարդու մեջ եղած գազանի արթնացումը և մարդու վայրենացումը»⁹⁴: Նկատի ունենալով 1905 թ. փետրվարն ու մարտը՝ նա գրում է. «Մենք այդ մի երկու ամսում դարեր ապրեցինք, Չինգիզ խանի ու Լենկ Թեմուրի դարերը: Նրանց անօրինությունները տեսանք 20-րդ դարում»⁹⁵: Իրավամբ, Թումանյանը չէր կարող անտարբեր մնալ, երբ, իր իսկ խոստովանությամբ, «...այսքան տգեղ, այսքան լիրբ, այսքան անիրավ, հրեշական կոիվ, ինչ-որ թուրք-հայկական է – դժվար թե եղած լինի: Գուցե նախապատմական ժամանակներում, երբ մարդիկ իրար ուտում էին»⁹⁶: Ռուս զինվորների անտարբեր ներկայությամբ երկու դարավոր հարևանները հոշոտում էին միմյանց, ավերում, սպանում, թալանում, ու թվում էր՝ այս ամենին վերջ չկա:

Հատկանշական է պատմական Բորչալու⁹⁷ գավառում Թումանյանի գործունեությունը, որովհետև թուրքերի ամենամեծ կուտակումը հենց այնտեղ էր: Այն սահմանակից էր Գանձակի նահանգի Ղազախ գավառին, ուր հայ-թուրքական ընդհարումները մեծածավալ էին: Ու թեև հայերը մեծամասնություն էին կազմում, սակայն դա չկասեցրեց թուրքական կողոպուտներն ու ավերումները: Հայրենի գավառի մասին խոսելիս Թումանյանը փաստում էր, որ հայերից հետո երկրորդ խոսքը պատկանում է թուրքերին թե՛ բազմության և թե՛ կատարած դերի պատճառով: «Թարաքյամա թուրքերը, որ ամառ ժամանակ տաք դաշտերից հեռանում, սարերն են բարձրանում, հարևան հայերին հանգիստ չեն թողնում գողություններով: Սրանց հետ քյալլա տալ գիտեն Բորչալվի հայերը. լոռեցիք դսեղեցիք, լորուտեցիք, շուլավերցիք, աղքորփեցիք: Գազան թուրքերը կատու են դառնում Լոռու ձորերով անցնելիս: Այս ձորերումն էլ անպակաս են եղել հայ իգիթներն ու ավազակները, որոնց ահը դեռ չի անցել»⁹⁸: Անկախ

⁹³ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Ահմադը,

<http://toumanian.am/upload/w979165246.pdf>

⁹⁴ Տե՛ս **Սուսաննա Հովհաննիսյան**, Դրվագներ Հովհաննես Թումանյանի

ազգային-հասարակական գործունեությունից (1905-1906 թթ.),

<https://arar.sci.am/dlibra/publication/192983/edition/175337/content>

⁹⁵ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 1999, էջ 7:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում:

⁹⁷ Բորչալուի գավառը հյուսիսից սահմանակցում էր **Թիֆլիսի** և **Գորիի**, արևմուտքից՝ **Ախալքալաքի** գավառներին: Հարավ-արևմուտքում **Երևանի**, իսկ հարավ-արևելքում՝ **Ելիզավետպոլի** նահանգներն էին: Թիֆլիսի ինը նահանգներից ամենաանհանգիստը Բորչալուի գավառն էր

⁹⁸ **Հովհաննես Թումանյան**, Բորչալուում (ճանապարհորդական նկատողություններ), <http://toumanian.am/upload/c651430850.pdf>

մշտապես տեղի ունեցող բախումներից և կենցաղային բնույթի հարձակումներից՝ գյուղացիների միջև հիմնականում ատելություն չկար, բայց իրավիճակը սրվեց, երբ բախումը իշխանության թողտվության պայմաններում վերաճեց ազգամիջյան անգութ կոտորածի: «Հայի պատմական ինքնապաշտպանությանը դիմելով հանդերձ, աշխատում էի իմ հայրենիքում հաշտություն ու խաղաղություն հաստատել հայ ու թուրքի մեջ, առանց խտրելու, թե որին է էս սարսափածն երեխան կամ էս դալկացած կինը...»⁹⁹: Թումանյանը փորձում էր ժողովրդին հիշեցնել իրենց խաղաղ գոյակցության տարիները: «Չեք կարող երևակայել, թե քանի-քանի մարդկանց կյանք կարողացանք ազատել և խաղաղությունը պահել մեր ձորերում... թե մեր, թե նրանց ժողովրդի մեջ սաստիկ մեծ է խաղաղության ցանկությունը: Երկու կողմից էլ խուլիզան մարդիկ են խառնում: Եվ այնպես հեշտ են խառնում, որ զարմանում է մարդ: Եթե դժար մի բան կա՝ դրա առաջն առնելն է»¹⁰⁰: Թումանյանը սրտի ցավով է նկարագրում երկկողմ ռճրագործությունները՝ չարդարացնելով ոչ մի հանցանք, ափսոսում է թափված անմեղ արյան համար, բայց և փորձում է բացատրել, որ լցվել է հայերի, հատկապես որոշ «տաքզլուխ ու կարճատես ջահելների» համբերության բաժակը, սակայն «դոնախի կարգն ու ադաթը» իմացող լոռեցիները՝ զայրացած ու վշտացած, պատրաստ են պատժել նույնիսկ մեղավոր հայերին: «Մենք չենք կարող մեր տներում թալան պահել, իսկ մեր սրտերում՝ թշնամություն: ... որովհետև, եթե ուժեղ ենք անիրավություն է, եթե թույլ ենք՝ հիմարություն է»¹⁰¹: «Այս ի՞նչ եք անում, անմիտներ, ի՞նչ եք արել մեկ-մեկու, ի՞նչ եք ուզում մեկդ մյուսից: Մի՞թե մեղք չեն ձեր կանայք ու երեխաները, մի թե ափսոս չի ձեր արդար աշխատանքը, որ փչացնում եք: Մի՞թե ամոթ չի ձեր տղամարդկությանը, մի թե հարամ չի այն աղ ու հացը, որ կերել եք միասին: Մենք եկել ենք հարյուր ձիավորով և շատ հարյուրներ էլ պատրաստ են մեր սարերում, բայց նրանք ձեզ համար չեն, այլ նրանց համար, ով կհարձակվի իր հարևանի վրա, հայ լինի, թե թուրք, մեկ է: Ղազախի մուսուլման եղբայրներ, դուք Լոռու սահմաններում ինչ որ թողել եք ու փախել, իմացած եղեք, որ մենք պահում-պահպանում ենք ինչպես «ամանաթ»: Միամիտ սրտով, եղբոր նման էլի եկեք, և եթե մեզանից մեկը ձեզ նեղություն տա՝ մենք կտեսնենք նրանց դատաստանը, ինչպես որ տեսել ենք շատ անգամ: Մուսուլման եղբայրներ, դուք պիտի հավատաք մեր խոսքին՝ նախ այն պատճառով, որ ձեզ հետ լոռեցիք են խոսում, իսկ լոռեցիք քաջ կովից չեն վախենում, երկրորդ՝ ինքներդ լավ

⁹⁹ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը, <http://www.tumanyan.am/upload/x712408976.pdf>

¹⁰⁰ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, *Լոռուց*, <http://toumanian.am/arm/tumanyan/creations/lorunts>

¹⁰¹ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, *Լոռեցիների անունից*, <http://toumanian.am/upload/z939905054.pdf>

գիտեք, որ մենք ձեզ համար այնպիսի հարևան ու բարեկամ ենք եղել, որ ձեզ մեր հայերից չենք ջոկել»¹⁰²: Ցավոք, թուրք-թաթարների մեջ Թումանյանի պես հումանիստները քիչ էին, և ջարդերը շարունակվում էին, իսկ Ամենայն հայոց բանաստեղծին՝ նույնիսկ իր ազգակիցներն էին մեղադրում: Թումանյանի դերը հայ-թաթարական հաշտության մեջ և նրա խաղաղասիրական կոչերը դարձան պատճառ, որ Մեծն լոռեցուն շինծու մեղադրանքներ ներկայացնեն և ձերբակալեն, բայց դա էլ չընկճեց, և նա շարունակեց հաշտություն քարոզել: Թումանյանին չփոխեցին անգամ Եղեռնի ահասարսուռ տեսարանները, ու նա շարունակեց հաշտություն քարոզել այս անգամ էլ հայ-վրացական ազգամիջյան պատերազմների ժամանակ: Եվ էլի Թումանյանին լսեցին, ընդունեցին ու հարգեցին թե՛ հայերը, թե՛ վրացիները: Եվ, ինչպես խոստովանում է Իրակլի Աբաշիձեն, Սայաթ-Նովայից հետո հայ և վրաց, նաև անդրկովկասյան ժողովուրդները իսկապես չեն ունեցել այնպիսի մի ընդհանուր բանաստեղծ, ինչպիսին Հովհաննես Թումանյանն է: Միևնույն ժամանակ, եթե Սայաթ-Նովան, ի փառս այս ժողովուրդների, չբավարարվեց մեկ լեզվով և միանգամից երգեց երեք լեզուներով, ապա Հովհաննես Թումանյանը մեկ լեզվում՝ իր մայրենի՝ հայոց լեզվում, գտավ այն ներքին կախարդական ուժը, որով կարողացավ սիրո բարձր հիմն ասել մեր ժողովուրդներին իրենց ճակատագրի, անցյալի ու ապագայի մասին¹⁰³: Եղբայրասպան արյունահեղությունը կանխելու համար Թումանյանը ակտիվ համագործակցում է Անդրանիկ Օզանյանի հետ, և համատեղ ջանքերով կարողանում են հասնել հաջողության¹⁰⁴: Այդ ընթացքում Թումանյանը ակտիվ նամակագրական կապ էր պահպանում նաև վրացի գործընկեր մտավորականների հետ: Մասնավորապես «Պատասխան Տիգրան Տաբիձեին» հայտնի բաց նամակն է ուշագրավ. «Մի Լ. Տոլստոյն ասում է. «Պետությունների սահմանները պիտի որոշվեն ոչ թե սրով ու արյունով, այլ ազգերի իմաստուն համաձայնություններով»: Կամ մի Կիկերոն ասում է. «Աշխարհի բոլոր վեճերը վճռվում են կա՛մ բանականությունով, կա՛մ ուժով: Առաջին միջոցը հատուկ է մարդուն, երկրորդը՝ անասունին, կենդանուն»: Իսկ մի Բիսմարկ հայտարարում է, թե «Մեծ խնդիրները կարող են վճռվել ոչ թե ճառերով ու ձայնատվությամբ, այլ սրով ու արյունով»: Եվ աշխարհքը կառավարում են դիպլոմատներն ու իշխողները, ոչ թե փիլիսոփաներն ու բանաստեղծ-

¹⁰²Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, Լոռեցիների կոչը:

<http://toumanian.am/upload/k599949572.pdf>

¹⁰³Տե՛ս Թումանյանը և Վրաստանը, Նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 258 էջ:

¹⁰⁴Տե՛ս **Աշոտ Մելքոնյան**, Հովհաննես Թումանյանը և հայոց պատմության հարցերը, Հովհաննես Թումանյան - 150 (Հոբելյանական Գիտաժողովի Նյութերի ժողովածու), Երեվան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, 2020:

ները: Այո՛, իմ թանկագին բարեկամ. շատ չնչին բացառությամբ աշխարհիքների կառավարիչները կյանքի խնդիրները վճռելիս գերադասում են էն միջոցը, որ հատուկ է անասունին, այսինքն՝ ուժը: Կառավարելու ուրիշ եղանակ դեռ չեն գտել ու չեն հասկանում և դեռ հպարտանում ու պարծենում են դրանով»¹⁰⁵: Թումանյանն իր փորձով ապացուցում է, որ թշնամությունը, որ ստեղծված է ժողովուրդների մեջ, արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական և շատ ավելի ուժեղ են, քան ընդունված է կարծել: Իսկ Գ. Ռոբաքիձեն ավելի հստակ է ներկայացնում Թումանյանի դերակատարումը. «Կարելի է վճռականորեն ասել. հայերին և վրացիներին համաձայնեցնող հաշտեցնողը, բառիս լավագույն իմաստով, եղավ Հովհաննեսը՝ քաղցր ու ասպետական...: Ճշմարիտի արարումով ու քարոզով, խավարի դեմ լույսն առառ դարձնելու պայքարով Թումանյանը՝ քերթողների մեջ ամենակատարյալը, կապող օղակ է ժողովուրդների միջև»¹⁰⁶:

Եվ իրավամբ մեր այսօրվա իրականության մեջ օդ ու ջրի պես անհրաժեշտ է թումանյանական տեսլականը՝ ուժեղ և գիտակից հասարակություն, ազգային դիմագիծ ու գործելակերպ ունեցող իշխանություն, պատմության դասերը չմոռանալով հանդերձ՝ արժանապատիվ գոյակցություն հարևան ազգերի միջև՝ հանուն լուսավոր ապագայի:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հովհաննես Թումանյանի հասարաքաղաքական գործունեությանը հայոց պատմության բարդ շրջափուլերից մեկում, երբ մոլեգնում էին հայ-թաթարական, հայ-վրացական ազգամիջյան բախումները: Մեծն պոետը պայքարում էր թե՛ ըմբոստ հայերի, թե՛ անօրեն գործող հակառակորդների դեմ: Արժանապատիվ խաղաղության էր ձգտում մեծն պոետը և արժևորում մարդու կյանքը՝ անկախ կրոնից, սեռից, կուսակցական և/կամ գաղափարական պատկանելությունից: Թումանյանի սթափ վերլուծություններն ու եզրակացություններն ավելի քան արդիական են այսօր՝ նրա մահից հարյուր տարի անց, երբ հայ ժողովուրդը դեռ չի հաղթահարել հայ-ադրբեջանական պատերազմի դաժան հետևանքները, երբ շրջափակման մեջ լինելիության պայքար է մղում հայկական Արցախը, երբ հասարակության անտարբերության քողի տակ անգամ բացարձակ արժեքը՝ անկախությունն է կասկածի տակ հայտնվում: Մեզ հանդիպած այս բոլոր խնդիրների լուծումները Թումանյանը տվել է դեռևս դարեր առաջ՝ սեր, հանդուրժողականություն, անկեղծություն, արդար պայքար, արժանապատիվ գոյակցություն, ազգերի բարեկամություն, մարդասիրություն, կրթության զարգացում, բայց և ուժեղ պետության ստեղծում:

¹⁰⁵ Տե՛ս Թումանյանը և Վրաստանը, նշվ աշխ, էջ 45:

¹⁰⁶ Տե՛ս Նույն տեղում, էջ 15:

Հիմնաբառեր. Հովհաննես Թումանյան, ազգամիջյան բախումներ, կոտորած, ազգերի բարեկամություն, մարդասիրություն

Օգտագործված գրականության ցանկ

1. **Բայրամյան Հրաչիկ**, Հովհաննես Թումանյանը հայ-վրացական բարեկամության ջատագով,
[Http://Www.Armin.Am/Images/Menus/2892/Hrachik_Bayramyan.Pdf](http://Www.Armin.Am/Images/Menus/2892/Hrachik_Bayramyan.Pdf)
2. Թումանյան Հովհաննես, Սհա թե ինչու, [Http://Toumanian.Am/](http://Toumanian.Am/)
3. **Հովհաննես Թումանյան**, Ահմադը,
<http://toumanian.am/upload/w979165246.pdf>
4. Թումանյան Հովհաննես, Բորչավուր (ճանապարհորդական նկատողություններ), [Http://Toumanian.Am/Upload/C651430850.Pdf](http://Toumanian.Am/Upload/C651430850.Pdf)
5. Թումանյան Հովհաննես, Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը, [Http://Www.Tumanyan.Am/Upload/X712408976.Pdf](http://Www.Tumanyan.Am/Upload/X712408976.Pdf)
6. Թումանյան Հովհաննես, Երկերի Լիակատար Ժողովածու, Հ. 10, Երևան, 1999:
7. Թումանյանը և Վրաստանը, Նյութերի Ժողովածու, Երևան, Եպի Հրատ., 2019:
8. Մելքոնյան Աշոտ, Հովհաննես Թումանյանը և հայոց պատմության հարցերը, Հովհաննես Թումանյան - 150 (Հոբելյանական Գիտաժողովի Նյութերի Ժողովածու), Երեկվան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, 2020:
9. Հովհաննիսյան Սուսաննա, Դրվագներ Հովհաննես Թումանյանի ազգային-հասարակական գործունեությունից (1905-1906 թթ.),
[Https://Arar.Sci.Am/Dlibra/Publication/192983/Edition/175337/Content](https://Arar.Sci.Am/Dlibra/Publication/192983/Edition/175337/Content)

ЭТНИЧЕСКИЕ КОНФЛИКТЫ И ОГАНЕС ТУМАНЯН

Анаит Мукучян

Преподаватель Алавердского отделения Северного Университета

В статье говорится об общественно-политической деятельности Ованеса Туманяна в один из сложных периодов армянской истории, когда бушевали армяно-татарские, армяно-грузинские этнические конфликты. Великий поэт боролся как с мятежными армянами, так и с незаконными противниками. Великий поэт стремился к достойному миру и ценил человеческую жизнь, независимо от вероисповедания, пола, партийной и/или мировоззренческой принадлежности. Трезвые анализы и выводы Туманяна более чем актуальны сегодня, спустя столет лет после его смерти, когда армянский народ еще не преодолел жестокие последствия армяно-азербайджанской войны, когда армянский Арцах борется за выживание в условиях осады, когда даже абсолютная ценность независимости находится под прикрытием общест-

венного равнодушия, находится под подозрением. Туманян дал решения всех этих проблем, с которыми мы сталкиваемся столетия назад: любовь, терпимость, искренность, честная борьба, достойное сосуществование, дружба народов, человечность, развитие образования, а также создание сильного государства. Этот простой, но действенный туманянки формат оказал положительное влияние в не менее эпических эпизодах, имевших место в нашем регионе около века назад, в инспирированных армяно-татарскими столкновениях, во всем осуществляемом турками Геноциде армян, а также в Армяно-грузинские войны.

Ключевые слова: Оганес Туманян, этнические столкновения, резня, мирное сосуществование, дружба народов, гуманизм.

THE ETHNIC CONFLICTS AND HOVHANNES TUMANYAN

Anahit Mukuchyan

Lecturer of Alaverdi Department of Northern University

The article refers to the public political activities of Hovhannes Tumanyan in one of the difficult periods of Armenian history, when the Armenian-Tatar, Armenian-Georgian ethnic conflicts were raging. The great poet fought both against rebellious Armenians and lawless opponents. The great poet sought a dignified peace and valued human life, regardless of religion, gender, party and/or ideological affiliation. Tumanyan's sober analyzes and conclusions are more than relevant today, a hundred years after his death, when the Armenian people have not yet overcome the cruel consequences of the Armenian-Azerbaijani war, when Armenian Artsakh is fighting for survival under siege, when even the absolute value of independence is under the cover of public indifference. is under suspicion. Tumanyan gave the solutions to all these problems we face centuries ago: love, tolerance, sincerity, fair struggle, dignified coexistence, friendship of nations, humanity, development of education, but also creation of a strong state. This simple but effective Tumanyan format has had a positive impact in no less epic episodes that took place in our region about a century ago, in the Armenian-Tatar instigated clashes, throughout the Armenian Genocide carried out by the Turks, as well as in the Armenian-Georgian wars.

Keywords: Hovhannes Tumanyan, ethnic conflicts, massacre, peaceful coexistence, friendship of nations, humanism.

Ներկայացվել է՝ 21.02.2023 թ.

Ընդունվել է՝ 04.03.2023 թ.

ԷԿՐԱՆԻ ԹՈՒՄԱՆՑԱՆԸ

Աստղիկ Աբրահամյան

Հյուսիսային համալսարանի լրագրության և հասարակայնության հետ
կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար
astghik.abrahamyan8@gmail.com

Լուիզա Մկրտչյան

Հյուսիսային համալսարանի լրագրության ֆակուլտետի 5-րդ
կուրսի ուսանողուհի

«Նրան կկարդան երկար տարիներ: Ապագա սերունդները նրան կսիրեն շատ ժամանակ»: - Ալեքսանդր Մյասնիկյանն իրավացի էր: Թումանյանը եղել է և շարունակում է մնալ սերունդների սիրելին ու ժամանակակիցը: Նրա ստեղծագործությունները թեև հատել են դարի սահմանագիծը, սակայն տպավորություն է, որ դրանք հենց նոր են գրվել: Որպես «մի ժողովրդի ազնիվ կենսագիր»¹⁰⁷ Թումանյանն այսօր էլ, ասես մի բարձր կետում նստած, հետևում ու ուրվագծում է մեր իրականությունը՝ իր բյուրեղացված խոհափիլիսոփայության պրիզմայով անցկացնելով հավերժական ու համամարդկային երևույթներն ու խնդիրները:

Թումանյանի ստեղծագործությունները ծնունդ են տվել արվեստի բազմաթիվ այլ ստեղծագործությունների, որոնցից շատերն արժանացել են ակնդիրների և ունկնդիրների սիրուն այնպես, ինչպես դրանց հիմքում ընկած բնագրերը: Թումանյանի պատմվածքների, հեքիաթների, պոեմների ու բանաստեղծությունների հիման վրա նկարահանվել են բազմաթիվ ֆիլմեր, մուլտֆիլմեր, բեմադրվել ներկայացումներ, ստեղծվել օպերաներ, գրվել երգեր: Եվ եթե նույնիսկ գտնվեն մարդիկ, ովքեր չեն կարդացել Ամենայն հայոց բանաստեղծին, հաստատ նրա հեքիաթներն ու պատմվածքները ավագներից լսել ու փոխանցել են իրենց փոքրերին և, իհարկե, անգիր գիտեն Թումանյանի էկրանավորված ստեղծագործությունների բոլոր դրվագները: Դրանցից մեկը «Գիքորը» պատմվածքն է, որն առաջին անգամ էկրանավորվեց 1934 թ.-ին: Սև-սպիտակ համր ֆիլմ էր, որի ռեժիսորը Ամասի Մարտիրոսյանն էր: Ֆիլմի տևողությունը 63 րոպե էր: Սակայն «Գիքորը» չէր կարող մնալ համր ու «Էստի համեցեք» չկանչել, և 1982 թ.-ին նկարահանվեց 80 րոպե տևողությամբ երկրորդ ֆիլմը, որը և՛ ձայն ունեւ, և՛ գույն, ավելի ճիշտ՝ գույներ. միմյանց հակադրվող հակասական աշխարհների գույներ, գյուղացի Համբոյի՝ աշխարհից կտրված աշխարհի ու բազազ Արտեմի անիրավ աշխարհի գույները:

¹⁰⁷Տե՛ս Սևակ Պ. «Անլուրի գանգակատուն», <http://sevak.am/lpoem/zangakatun/>

Թումանյանի անմահ պատմվածքից ծնունդ առած՝ հայ կինոյի ամենամնայուն և ամենաազդեցիկ գոհարներից մեկի սցենարի հեղինակը և գեղարվեստական ղեկավարը Հենրիկ Մալյանն է, բեմադրող ռեժիսորը՝ Մերգեյ Իսրայելյանը:

«Գյուղացի Համբոյենց տունը կռիվ էր ընկել:

- Ուզում չեմ... իմ քորփա երեխին էդ անիրավ աշխարհը գցիլ մի...»¹⁰⁸

Նանի լացակումած ձայնն է, իսկ կադրում Համբոն է. ասես՝ համբերանքի չիբուխն է ծխում՝ փորձելով ծխի հետ կուլ տալ իրեն բաժին հասած կյանքի դառնությունը:

Մոր ու հոր վեճի ընթացքում Գիքորը «դավին անտեղյակ, ցավին անտարբեր» խաղում է գյուղի երեխաների հետ, հաց ու պանիր «թոցնում» տանից ու ընկերների հետ քարերին նստած վայելում խեղճ, բայց անհոգ մանկության վերջին պատառները: Այս երկու՝ զուգահեռ իրականությունների հակադրությունն է՝ ավելի է ընդգծում մոր բողոքի ու «քորփա երեխին անիրավ աշխարհից» ետ պահելու անգոր ճիգերի արդարացիությունը, բայց անբեկանելի է հոր՝ որդուն մարդ դարձնելու որոշումը: Ինչպես է նանը Գիքորի ճանապարհի համար ուտելիք դնում, ինչպես է Գիքորը հրաժեշտ տալիս իրենց Ծաղիկ կովին, քույր-եղբայրներին, ինչպես է վազում՝ հորից հետ ու առաջ ընկնելով ու հայացքով փնտրելով ետևում մնացած մանկությունը... Ֆիլմում հնչում է Տիգրան Մանսուրյանի ստեղծագործությունը, որն ասես ծորացող տխրություն լինի, իսկ երբ այդ տխրության հնչյուններին խառնվում է «էդ ու՛լ ես գնում, հե՛յ, Գիքու՛լ»-ը դրամատիզմը հասնում է գագաթնակետին:

Ֆիլմի յուրաքանչյուր դրվագ հազեցած է հուզականությամբ: Թումանյանի հանճարին վայել տաղանդով ֆիլմի ստեղծագործական աստղաբույլը՝ ստեղծել է այնպիսի միջավայր, որտեղ ամեն ինչ ավելի քան իրական է՝ կերպարները, տրամադրությունը, կոլորիտը, նույնիսկ՝ մտորումներն ու հեռվում մնացած կարտոնները:

Ահա Համբոյի ծանոթներից մեկի տանն են. գիշերելու են այստեղ: Համբոն ու տանտերը խոսում են դեսից-դենից, իսկ Գիքորը հայացքով հետևում է տանտիրոջ աղջկա անցուդարձին:

«Դեղին սամովարը թշնամ էր տախտի ծերին: Մի ջահել աղջիկ շրթնակշրթնակացնելով բաժակները լվանում ու թեյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին: Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանիի համար մի էն տեսակ շոր դարկի»:¹⁰⁹

¹⁰⁸ Տե՛ս գեղարվեստական ֆիլմ՝ «Գիքորը»

<https://www.youtube.com/watch?v=dqKE4Bl2ZY4>

¹⁰⁹ Տե՛ս Թումանյան Հ., Ընտրանի, Երևան, Հայագիտակ, Գիր 2016 էջ 301:

Սա՝ պատմվածքում: Ֆիլմում Գիքորը բարձրաձայնում է միտքը՝ հոր ականջին շնչալով՝ հենց քաղաքումը փող աշխատեմ, մեր Զանիի համար մի էս տեսակ շոր կդրկեմ:

Ու Համբոն՝ որդուն քաղաք բերելու որոշման ճշմարիտ լինելը հաստատելու համար ու երևի թե ավելի շատ ինքն իրեն դրանում համոզելու համար անմիջապես Գիքորի խոսքը բարձրաձայնում է տանտիրոջ մոտ: Դե, տանտերն էլ գովում է Համբոյին, որ.

«չարչարվում է որդուն մարդ շինի...»:

Հետաքրքիր է նաև հոր և որդու քաղաք մտնելու դրվագը:

Պատմվածքում Համբոյի և Գիքորի քաղաք մտնելու պահը հակիրճ է. «Մյուս օրը քաղաք մտան: Գնացին ծերունի թավաչու մոտ: Առավոտը բազարն իջան»:¹¹⁰

Ֆիլմում պատկերը միանգամայն այլ է: Այստեղ Թիֆլիսն է, ուր եկեղեցու դողոնջները խլանում են կինոտոների պարից: Այո, ֆիլմում պատահական ոչինչ չկա: Գեղարվեստական բոլոր հնարանքներն օգտագործված են հատուկ շեշտադրումների ու ենթատեքստերն ընդգծելու նպատակով:

-Բա, Գիքոր ջան, սրան Թիֆլիս կասեն...

Խճճված փողոցներ, խճճված մշակույթներ, խճճված մարդկային հարաբերություններ, խճճված ուրախություններ ու տխրություններ, ու մի մաքուր, միամիտ Գիքոր՝ խճճված այս քառսի մեջ: Եվ պատահական չէ հոր ու որդու՝ ամբոխի մեջ միմյանց կորցնելու դրվագը: Այն ասես Գիքորին այս նոր աշխարհում կորցնելու նախանշանն է:

Գյուղ ու քաղաք, սրանք երկու զուգահեռ իրականություններ են, որտեղ Թումանյանը փորձել է ցույց տալ բնությանը ձուլված միամիտ գեղջուկի և քաղաքի հնոցում թրծված ճարպիկ մարդու կորուստներն ու ձեռքբերումները: Թե՛ ֆիլմում, և թե՛ պատմվածքում բազմաթիվ են նման օրինակները, բայց ամենատիպիկը, թերևս, բազազ Արտեմի երկու աշակերտների՝ Վասոյի ու Գիքորի զուգահեռներն են: Վասոն բազազ Արտեմի լավագույն, օրինակելի աշակերտն է. նա ճարպիկ է և իր ճարպկությամբ կարողանում էր հիամարեցնել նույնիսկ իրեն՝ «խագեհինին»: Ֆիլմում դա արտահայտվում է Վասոյի՝ փողերը հաշվելու ու տարբեր գրպաններում տեղավորելու տեսարանում: Փուչ աշխարհ... իսկ Արտեմը Համբոյին ասում էր՝ ձեռքը որ արդար է, մարդ կդառնա...¹¹¹

Ֆիլմի ամենակլորիտային տեսարաններից մեկն էլ լոտոյի տեսարանն է: Թիֆլիսի բարձրաշխարհիկ հասարակության ներկայացուցիչները հյուր են եկել Նատոյին: Հյուրընկալության դրվագն սկսվում է Գի-

¹¹⁰ Տե՛ս Թումանյան Հ. Ընտրանի, Երևան, Հայագիտակ, Գիր 2016 էջ 301:

¹¹¹ Տե՛ս գեղարվեստական ֆիլմ՝ «Գիքորը»

<https://www.youtube.com/watch?v=dqKE4Bl2ZY4>

քորի «էդ ո՞վ էք, է՛յ»-ով ու ավարտվում դարձյալ Գիքորի՝ «ով սուտ ասի, գետինը մտնի» -ով: Ու այս պարզ ու անմիջական էությունը պետք է հարմարվեր մի միջավայրում, ուր կեղծ ծիծաղում են, կեղծ համբուրում, կեղծ հաճոյախոսում ու անկեղծ հրճվանքով բամբասում:

Ֆիլմի և պատմվածքի դրվագներն այնքան կենդանի և օրգանական են, որ դրանք երբեմն նույնանում են, երբեմն դառնում միմյանց տրամաբանական շարունակությունը: Ֆիլմի սկզբում ներկայացված տեսարանը, որն ընթացքում կրկնվում է որպես հեռավոր երազ, պատմվածքում ներկայացված է այսպես. «Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանա: Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու, կամ թե չէ՝ փեշն էր դնում, գնում հանդը: Երբ ուզում էր՝ մի ծառի տակի կամ աղբրի վրա նստում էր ուտում»:

Իսկ շարունակությունը ֆիլմի ընթրիքի տեսարանն է, երբ քաղցից նվաղած Գիքորը դռների արանքից հետևում է բազազի ընտանիքի խրրախճանքին կամ Վասոյի խղճի փշրանքները արցունքների հետ կուլ տալիս վերմակի տակ:

«Եվ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու անգույն, մեծ-մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով, նայեց ներքև: Ափից մոտիկ պտտում էր մի կանաչ նավակ»: Պատմվածքը շարունակվում է ֆիլմի կադրով. ներքևում՝ ձկնորսներն են: «Երկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան էր ձգում, մյուսը նավն էր կառավարում»:¹¹² Տեսարանը ներկայացված է ճիշտ բնագրի նկարագրությամբ:

- Էս մինն իմ բախտից...
- Էս մինն էլ մեր Ջաննի բախտիցը...
- Էս մինն էլ Գալոյի բախտիցը...¹¹³

Գիքորի դատարկ բախտի դատարկ ուռկանը ընկղմվում է Քուռի պղտոր հոսանքի մեջ ու դատարկ դուրս գալիս: Գիքորը լուռ հետևում է. ինքը լուռ է, աչքերն ու դիմախաղը անասելի խոստն: Միայն Թումանյանի ծննդավայրում մեծացած, Դսեղի հանդուշոյի շնչով սնված երեխան կարող էր մարմնավորել Գիքորի կերպարը՝ լինելով այսքան բնական ու իրական՝ առանց խաղի, առանց ձևացնելու: Ալբերտ Դուրլինյանին հիրավի հաջողվել է մարմին ու շունչ տալ Գիքորին: Ու երևի թե ճշմարիտ է, որ լուռեցի յուրաքանչյուր երեխայի մեջ մի քիչ Գիքոր կա:

¹¹² Տե՛ս Թումանյան Զ., Ընտրանի, Երևան, Հայագիտակ, Գիր 2016 էջ 306:

¹¹³ Տե՛ս գեղարվեստական ֆիլմ՝ «Գիքորը»

<https://www.youtube.com/watch?v=dqKE4Bl2ZY4>

Գիքորը ձկնորսներով տարվել, ուշացրել էր հացը: Ու աշխարհի բարիքներից պայթելու չափ կշտացած բազազը հարձակվում է սովից ոտքերը մի կերպ քարշ տվող Գիքորի վրա՝ բա որ սովից մեռնեի...

Տիլմի դրամատիզմը գազաթնակետին է հասնում Գիքորի հիվանդության տեսարանով:

-Ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում, դե՛ղի... Ես մեր տունն եմ գնում... Ես իմ նանին եմ ուզում...

Նա գառանցում էր, ու գառանցանքի մեջ տանը թողած կարոտներն էին՝ Միկի՛չ, Ջանի՛, ապի՛, նանի ...

Թիֆլիսից մի բան էր միայն մտքում պահել՝ Է՛ստի համեցե՛ք...

Հիվանդանոցում Համբոն ծնկած հավաքում է Գիքորի գրպանից ընկած կապոցի պարունակությունը՝ մի բուռ փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց: Էն էլ երևի, քորոջ Ջանիի համար էր հավաքել ու պահել...

«Գիքորը» ֆիլմը հայ դասական գրականության գոհարների էկրանավորման փայլուն օրինակներից է, որն, ասես սերտաճած է բնագրին, որտեղ յուրաքանչյուր տեսարան հագեցած է թումանյանի ստեղծած մտապատկերների վերարտադրությամբ:

Թումանյանի հանճարի դրսևորումներից մեկն էլ անձնական ծանր հոգեվիճակները իր հոգու մի հեռավոր անկյունում թաքցնելու ու այնտեղից միայն լույսը դուրս բերելու, մարդկանց առաջ սփռելու զարմանալի կարողությունն է: Այն դրսևորվել է ոչ միայն գրողի հասարակական կյանքում, աշխատանքում կամ ընկերների հետ շփումներում, այլև տարբեր ժանրերի ստեղծագործություններում: Թերևս դժվար է պատկերացնել, որ «Գիքորը» պատմվածքի հեղինակը կարող է մշակել նաև այնպիսի հեքիաթ, ինչպիսին «Անբան Հուռին» է: Մակայն, երբ գործ ունես հանճարի հետ, ամեն ինչ հնարավոր է:

«Անբան Հուռին» հեքիաթի հիման վրա, 2017 թվականին նկարահանվեց մուլտֆիլմ, որի սցենարի հեղինակը և բեմադրող ռեժիսորը Արթուր Միքայելյանն է: Մուլտֆիլմում հեքիաթասացը բզեզն է, որն իր ընկերներին պատմում է Հուռիի պատմությունը:¹¹⁴ Ի տարբերություն բնագրի, որտեղ միայն Հուռի մոր գովքն է «լիդրը գզող, լիդրը մանող, հա՛մ խճճող, հա՛մ խճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները՝ ոսկի»¹¹⁵ աղջկա մասին, մուլտֆիլմում պատկերավոր կերպով ներկայացված են նաև հարևանների ռեպլիկները, ընդ որում՝ թե՛ խոսքով, և թե՛ ժեստերի լեզվով:

¹¹⁴ Տե՛ս մուլտ-մյուզիքլ «Անբան Հուռին», https://www.youtube.com/watch?v=moul6i_6d2o&t=910s

¹¹⁵ Տե՛ս Թումանյան Հ. Անբան Հուռին Երկերի ժողովածու, Հ 3, «Հայաստան» 1969, էջ 201:

**Մազը ձեռքիդ՝ գովա-գովա,
Մենք չգիտե՞նք աղջիկդ ով ա:**

Մուլտֆիլմի ստեղծագործական թիմին հաջողվել է ստեղծել գունեղ ու տպավորիչ կերպարներ, ընդ որում՝ ոչ միայն մարդկային. Բզեզները, Ճնճղուկները, գորտերը, մեղուն նույնքան վառ ու տպավորիչ են, որքան մարդ- հերոսները: Իսկ անբան աղջկան փուչ գովքով ամուսնացնող մոր կերպարը հայկական մուլտֆիլմերի ամենահաջողված կերպարներից է:

Իսկ Հուռի՞ն: Հուռին ի՞նչ...

**Մաստակ պիտի, որ ծամեմ,
Կրտերը տիտիկ անեմ,
Անցնողին մըտիկ անեմ.
Ուտեմ, խմեմ,
Մըթնի, քընեմ:¹¹⁶**

Հուռիի քունը խախտում են մուլֆիլմի Ճնճղուկները՝

**Շուտով լուսինը տե ս, դուրս կգա,
Մարդդ էլ սոված ետ տուն կգա:**

Հուռին, որ աշխարհին իր մաստակի ու քնի հետ չի փոխի, ստիպված է ոտքերը քարշ տալ դեպի գետը, որ տանի, կորցնի վաճառական ամուսնու թողած գլխացավանք- բամբակը:

**Սև սիրտ ունեմ, սպիտակ բամբակ,
Տանենք, թափենք սև քարի տակ:**

Բայց անբանների համար միշտ էլ սև քարի տակից դեղին ոսկի է դուրս գալիս... Ի դեպ, մուլֆիլմի մի դրվագում Հուռին գետի մեջ բամբակ է լվանում, բայց, իհարկե, ամուսնու երագում:

Մուլտֆիլմի հարուստ գունային ներկայնակի հեղինակները բեմադրող նկարիչներն են՝ Գայանե Բաբայանն ու Իգոր Պատրիկը: Նրանց ստեղծած վառ կերպարները նոր պատկերային մտածողություն են հաղորդում Թումանյանի հեքիաթին:

Մուլտֆիլմը մյուզիքլ է. կոմպոզիտոր Գեղայր Խլդաթյանին հաջողվել է ստեղծել հեքիաթին համահունչ տրամադրություն՝ երգերով խոսեցնելով հերոսներին: Թումանյանը «Անբան Հուռին» մշակելիս՝ այնքան մեղեդայնություն է դրել խոսքի մեջ, որ կոմպոզիտորը կարողացել է մուլտֆիլմին համահունչ երաժշտություն գրել:

Թումանյանի ստեղծագործություններում կարմիր թելով անցնում է միամիտ ու ճարպիկ, իրենց որակական հատկանիշների հետևանքով կամ շնորհիվ կյանքի լուսանցքում մնացած կամ, հակառակը, բարձունքների հասած կերպարների հակադրությունը: Հուռիի մայրը, ով իր անբան աղջկան գովելով ամուսնացնում է վաճառականի հետ, իսկ հետո օգ-

¹¹⁶ Տե՛ս Թումանյան Հ., Անբան Հուռին Երկերի ժողովածու, Հ 3, «Հայաստան» 1969, էջ 201:

տվելով տղայի միամտությունից՝ բզեզին իր մորաքույրը դարձնելով անում այնպես, որ Հուռին այլևս երբեք չաշխատի, մեր ժամանակների ամենատիպական կերպարներից է:

«Անբան Հուռին» մեր օրերի «PR և մարքեթինգ» կոչված երևույթի լավագույն օրինակներից է, որի դասական բանաձևը Թումանյանը տվել է դեռ 1911 թվականին: Եվ սա, իհարկե, առանձին ուսումնասիրության նյութ է:

Թումանյանի բազմաժանր ստեղծագործությունները հազեցած են էկրանային մտածողությամբ: Նրա ստեղծած հրաշալի տեսարանները և ընթերցողի մտապատկերում ուրվագծվող կենդանի կերպարներն իրենց պատկերավորության շնորհիվ հնարավորություն են տալիս ստեղծել տեսողական արվեստի բացառիկ գործեր՝ ֆիլմեր, մուլտֆիլմեր, թատերական և երաժշտական ներկայացումներ, կտավներ, որոնք դառնում են Թումանյանի հարուստ ստեղծագործական ժառանգության մարմնավորումը և որոնց միջոցով աշխարհը տեսնում ու լսում է Թումանյանի հանձարին: Թումանյանի ստեղծագործություններն էկրանավորվել են դեռ անցյալ դարասկզբից: 1930 թ. նկարահանվել են «Անուշ», 1934 թ.-ին՝ «Գիքոր» համր ֆիլմերը: 1962 թ.-ից մեկը մյուսի ետևից նկարահանվել են «Տերն ու ծառան», «Ախթամար», «Աղքատի պատիվը», «Չախչախ թագավորը», «Սուտիկ որսկանը», «Սովի ժամանակից», «Գիքոր», «Մի կաթիլ մեղրը» ֆիլմերը:

Ի դեպ, «Մի կաթիլ մեղրը» համալրել է նաև Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանված մուլտֆիլմերի շարքը:

«Շունն ու կատուն», «Փարվանա», «Սուտիկ որսկանը», «Չախորդ Փանոսը», «Կիկոսի մահը», «Քաջ Նազարը», «Անբան Հուռին» մուլտֆիլմերն այսօր էլ փոքրիկների համար դեպի Թումանյանի անհուն աշխարհը տանող ճանապարհի սկիզբն են:

Թումանյանի գլուխգործոցներից երկուսի՝ «Անուշ» և «Թմկաբերդի առումը» պոեմների հիման վրա ստեղծվել են նաև օպերային արվեստի գլուխգործոցներ՝ Արմեն Տիգրանյանի «Անուշ» և Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերաները:

Ի վերջո, Ամենայն հայոց բանաստեղծի խոսքերով գրված տասնյակ երգեր այսօր էլ ապահովում են Ամենայն համյոց թամադա Հովհաննես Թումանյանի ներկայությունը հայ օջախների խնջույքներին:

Եվ պատահական չէ, որ մարգարե կամ պարզապես խիստ իրատես Թումանյանը համոզված էր, որ ինքն ամենուր է՝ անկախ ժամանակից ու տարածությունից: «Ես միշտ ձեզ հետ եմ, ձեր մեջ եմ»... Եվ այս օրն էլ ասվածի լավագույն ապացույցն է:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական աշխարհը իր հայրենի եզերքի նման գունեղ է ու պատկերավոր: Եվ հենց դրա շնորհիվ է, որ հմուտ, հանճարեղ լոռեցու ստեղծագործությունները ոչ միայն հատել են դարի սահմանագիծն ու շարունակելու են երթը՝ դարերում, այլև ծնունդ են տվել արվեստի բազմաթիվ այլ ստեղծագործությունների, որոնցից շատերն արժանացել են ակնդիրների և ունկնդիրների սիրուն այնպես, ինչպես դրանց հիմքում ընկած բնագրերը:

Թումանյանի բազմաժանր ստեղծագործությունները հազեցած են էկրանային մտածողությամբ: Նրա ստեղծած հրաշալի տեսարանները և ընթերցողի մտապատկերում ուրվագծվող կենդանի կերպարներն իրենց պատկերավորության շնորհիվ հնարավորություն են տալիս ստեղծել տեսողական արվեստի բացառիկ գործեր՝ ֆիլմեր, մուլտֆիլմեր, թատերական և երաժշտական ներկայացումներ, կտավներ, որոնք դառնում են Թումանյանի հարուստ ստեղծագործական ժառանգության մարմնավորումը և որոնց միջոցով աշխարհը տեսնում ու լսում է Թումանյանի հանճարին:

Հիմնաբառեր. ֆիլմ, մուլտֆիլմ, մյուզիքլ, պատմվածք, հեքիաթ, էկրանավորում, մտապատկեր, կերպար, էկրանային մտածողություն

Օգտագործված գրականություն

1. Թումանյան Հ. Երկերի ժողովածու, Հ 3, «Հայաստան» 1969:
2. Թումանյան Հ. Ընտրանի, Երևան, Հայագիտակ, Գիր 2016
3. Գեղարվեստական ֆիլմ՝ «Գիքորը»:
4. Մուլտ-մյուզիքլ «Անբան Հուռին»:
5. Սևակ Պ., «Անլռելի զանգակատուն»:

ТУМАНЯН С ЭКРАНА

Абрамян Астхик

Մկրտչյան Լուիզա

Творческий мир Ованнеса Туманяна такой же красочный и живописный, как и его родная земля. И именно благодаря этому творчество талантливого, гениального писателя из Лори не только пересек рубеж века и будет продолжать свой путь на протяжении веков, но и породило множество других произведений искусства, многие из которых стали любимыми так же, как и оригиналы, на которых они основаны. Созданные им прекрасные сцены и живописные образы, изображаемые в воображении читателя, благодаря своему воображению позволяют создать исключительные произведения

визуального искусства - фильмы, мультфильмы, театральные и музыкальные представления, картины, которые становятся воплощением богатого творческого наследия и через которые мир видит и слышит гения Туманяна.

Ключевые слова: Фильм, мультфильм, мюзикл, рассказ, сказка, экранизация, образ, персонаж, герой, экранное мышление.

TUMANYAN FROM THE SCREEN

Abrahamyan Astxhik

Mkrtchyan Luiza

Hovhannes Tumanyan's creative world is as colorful and picturesque as his native land. And it is precisely because of the works of the skilled genius from Lori who has not only crossed the line of the century and will continue marching through the centuries, but also gave birth to various other works of art, many of which have won the love of viewers and listeners as much as the originals that are their basis. Tumanyan's multi-genre works are saturated with screen thinking. The wonderful scenes created by him and the living characters sketched in the reader's imagination, due to their imagery, enable the creation of exceptional works of visual art: films, cartoons, theatrical and musical performances, canvases, that become the embodiment of Tumanyan's rich creative heritage and through which the world sees and hears the genius Tumanyan.

Keywords: film, cartoon, musical, story, fairy tale, screen adaptation, idea, character, hero, screen thinking.

Ներկայացվել է՝ 18.02.2023 թ.

Ընդունվել է՝ 15.03.2023 թ.

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ «ՀՈԳՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ՈՐՈՆՈՒՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Անի Եղիազարյան

Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրեն, բանասիրական
գիտությունների թեկնածու
aniyeghiazaryant@gmail.com

Չափազանց բարդ ու բազմաշերտ է Հովհ. Թումանյանի ստեղծագործական աշխարհը, այդ աշխարհի հատկապես այն եզրերը, որոնցով նրա մտածողությունը շփվում է աշխարհայացքային ու կենսափիլիսոփայական խորհրդավոր ոլորտների հետ, ուր բանաստեղծը որոնում է հոգու ներդաշնակություն, հայտնաբերում է սեփական ինքնության ամբողջականությունը, ասելիքի բովանդակությունն ու կերպը: Ստեղծագործական կյանքի տարբեր հանգրվաններում այդ որոնումները հայ մեծ բանաստեղծի հայացքը վերջիվերջո ուղղեցին դեպի Արևելք՝ լույսի այն մեծ ակունքը, որտեղից սկիզբ են առնում մարդկային ստեղծագործ մտքի և իմաստության կենսատու ցոլքերը:

Արևելքը Թումանյանի համար հոգեպես հարազատ էր ու մտերիմ: Մանրակրկիտ ու տևական ուսումնասիրությունները, Արևելքի պատմությանը և մշակույթին վերաբերող գրքերի ընթերցումը հնարավորություն են տվել մեծ գրողին բազմաթիվ զուգահեռներ տեսնել իր երկրի և արևելյան հին ու մեծ մշակութային ազգերի պատմության միջև, հասկանալու, որ իր ազգի ողբերգությունը արևելյան շատ ժողովուրդների ողբերգությունն էր: Պատահական չէ, որ դասերը՝ Նվարդին, և ոչ միայն նրան, խորհուրդ էր տալիս կարդալ, ծանոթանալ և լավ իմանալ Արևելքի և Կովկասի պատմությունը. «Բայց լավ կանես, երբ որ պատմությունը սիրում ես – զբաղվես առանձնապես Արևելքով ու Կովկասով, և շատ է կարևոր, և շատ կհավանես: Դռան մոտի երկու-երեք պահարանում էլ շատ բան կա – սկսիր հենց Ռագոզինայի գրքերից – Индия, Мидия, Ассирия և այլն... Ես էլ անցյալ օրերը կարդում էի Битнер-ի գիրքը (թարգմանություն Անդերսոնից կարծեմ) «История погибших цивилизаций Востока», էդ ուղղությամբ բաներ կարդա երեխաների, մեծերի համար ու նրանց բացատրի»¹: Եվ այս նախկը Թումանյանը գրում է Պետերբուրգում բանտարկված շրջանում:

Տասական թվականներին Թումանյանի հետաքրքրությունը Արևելքի հանդեպ էլ ավելի է խորանում: Նա սկսում է ուսումնասիրել Արևելքի հին ազգերի պատմությունը, նրանց փիլիսոփայությունը, գրականությունն ու բանահյուսությունը, թարգմանում արևելքի մի շարք գրողների: Եվ սա այն համոզմունքով, որ անգամ ընկերների հետ զրուցելիս ցավով նկատում էր, թե՞ Արևելքի ենք, բայց Արևելքը չենք ճանաչում, ամոթ է: Չենք ճանաչում

¹ Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ.10, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., Եր., 1999թ., էջ142:

ընդհանրապես մեր հարևաններին, ծանոթ չենք նրանց գրականությանը: Դարերով ապրում ենք իրար կողքի, հարևանություն ենք անում իրար հետ, բայց չենք իմանում ինչ է նրանց միտքը, նրանց արվեստը...»²:

Նրա անձնական հարուստ գրադարանում սկսում են ավելանալ այդ թեմային վերաբերող գրքերը՝ հնդկական և չինական պատմություն, ճապոնական մշակույթ, հնդկական վեդաներ և ուսումնասիրություններ յոգայի մասին, պարսիկ և արաբ գրողների երկեր, մեծ թվով թարգմանություններ Թագորի և Սաադիի, Խաքանու և Օմար Խայամի գործերից, ինչպես նաև բազմաթիվ արաբական, հնդկական, ճապոնական, չինական հեքիաթներ: Ուշագրավ է, որ գրքերից շատերի էջերին կարելի է հանդիպել բանաստեղծի՝ մատիտով արված գրառումների, որոնք տարբեր բնույթի են և առանձին ուսումնասիրության առարկա կարող են լինել:

Թումանյանի համար Արևելքը փիլիսոփայության, իմաստության և պոեզիայի ներդաշնակությունն է: Տարբեր տարիներին գրված հոդվածներում նա զանազան ելակետերից է անդրադարձել արևելյան մշակույթին, գեղանկարչության և երաժշտության գեղեցկությանը, ինչպես նաև համաշխարհային մշակույթի վրա նրա թողած ազդեցությանը: «Արևելքից Արևմուտք» հոդվածում Թումանյանը, անդրադառնալով Գարեգին վարդապետ Հովսեփյանի՝ «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ» ուսումնասիրությանը, համաձայնում է նրա առաջ քաշած այն տեսակետի հետ, թե թյուր է այն իշխող կարծիքը, որ քրիստոնեական արվեստը, իր սկիզբն առնելով հռոմեականից, Արևմուտքից է եկել Արևելք և հայկական քրիստոնեական արվեստն էլ այդ մշակույթի ազդեցությունն է կրում. «Շարունակ այն կարծիքն է եղել իշխողը, թե քրիստոնեական արվեստը իր սկիզբն առնելով հռոմեական կատակոմբներից, Արևմուտքից է եկել դեպի Արևելք և հայկական քրիստոնեական արվեստն էլ ազդված է նրանից բյուզանդականի միջոցով: Հայր Հովսեփյանը գալիս է ապացուցանելու, որ հակառակն է եղած, Արևելքից է գնացել դեպի Արևմուտք, ցույց է տալիս արվեստի ու մանրանկարչության մի ընդհանուր հայրենիք, առաջավոր Ասիայի երկրներում, Պարսկաստանի գլխավորությամբ, որոնց շարքում Հայաստանը գրավում է ուրույն ու պատվավոր մի տեղ»³: Նա բարձր էր գնահատում նաև արևելյան երաժշտությունը. մանկության տարիներից հիշում էր հոր երգած բայաթներն ու Քյոռոզլու, Քյարամի երգերը: Հայրական այդ երգերի մեջ մի մեծ ու անհայտ թախիժ կար. «Նա մի մշտական անբաժան վիշտ ուներ իրան հետ, որ, չնայելով նրա դյուրամատչելի և զվարթ բնավորությանը, նրան դարձնում էր պատկառելի, վեհ և հաճախ ահավոր: Նա այդ վիշտը ոչ ոքի չհայտնեց, ոչ ոք էլ չիմացավ: Սակայն ժամեր էին լինում, երբ ինձ թվում էր, որ այդ վիշտը ավելի մեծանում էր, նկատելի էր դառնում, և ես բռնում էի նրան, կարծես թե հասկանում էի, թեև մույթն ու անորոշ –

²Տե՛ս Թումանյան Ն., «Հուշեր և զրույցներ», «Լույս» հրատ., Եր., 1987թ., էջ 208:

³Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ հ. 6, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., Եր., 1994 թ., էջ 334:

գուցե իմ արյունով՝ նրա հոգու և զգացմունքի այն մասով, որ նա տվել էր ինձ... Ածում էր արևելյան թախծալի, հառաչող, խո՜ր հառաչող եղանակներ ու երգում խոր ընկած, կոտրված ձայնով: Տխուր բոցով այրվող աչքերը նայում էին հեռո՜ւ, հեռո՜ւ... և հառաչող առաձգական ձայնը գնում էր նրա ետևից... Իմ հոգին էլ նրան էր հետևում, և ինձ թվում էր, թե հասկանում էի նրա վիշտը... Նա ինձ էր կտակում իր այն վիշտը...»⁴:

Հովհ. Թումանյանի նախագահությամբ գործող Հայ գրողների կովկասյան ընկերության կազմակերպած գրական-երաժշտական երեկոներին հաճախ էր հնչում արևելյան, հատկապես՝ պարսկական երաժշտություն: Ինչպես փաստում է ժամանակի մամուլը՝ հերթական երեկոյթներից մեկին հրավիրված են եղել նաև պարսից հյուպատոս Սայադ-ուլ-Մուլքը և փոխհյուպատոս Միրզա Թաղի-խանը⁵: Թումանյանն իր խոսքում նշել է. «Եկող սեզոնին էլ մյուս երկրների հետ, նորից կվերադառնանք Պարսկաստան, որ Էնքան հարուստ է, և որի ազդեցությունը շատ է մեծ մեր կյանքի, լեզվի, պատմության, գրականության ու ամեն տեսակի ստեղծագործությունների վրա»⁶: Միրում էր լսել արևելյան երգեր՝ արևելյան գործիքների նվագակցությամբ՝ թառ, քյամանչա..., իսկ կատարողներից բարձր էր գնահատում հիասքանչ քամանչահար Սաշա Օգանեզաշվիլուն: Թումանյանը գրում է. «Էն ժամանակ, երբ Արևելքից ու Պարսկաստանից ենք խոսում, Ֆիրդուսու, Հաֆիզի, Սաադիի, Օմար Խայամի, Նիզամիի և նման հսկաների վրա ենք զորույց անում, մեր առջև հայտնվում է Ս. Օգանեզաշվիլին իր մելամաղձոտ քյամանչով, արևելյան մաքուր ու հարազատ երաժշտությունով, եթերային նվագով և մի վեհ ու վսեմ ներդաշնակությամբ իրար են խառնվում, իրար լրացնում ու իրար բաց անում Չարգյահն ու Ֆիրդուսին, Հաֆիզն ու Ռաստը, Մահուրին ու Օմար Խայամը... Գերազանցորեն շքեղ ու շռայլ մի հոգեկան վայելք ամեն մի արևելցու համար»⁷: Երաժշտության հոգեբուժիչ ու կախարդիչ ազդեցությունը Թումանյանն այնուհետև պիտի խտացներ իր երազների թռչունի՝ Հազարան բլբուլի կերպարի մեջ՝ որպես մարդուն կրկին մարդ դարձնող հիմնական ելքի ուղենիշ. «Պատահեց, ասում է, որ մի ժամանակ գազան դարձավ քնքույշ ու բանական մարդը: Ինչ արին-չարին՝ հնար չեղավ գազանը նորից մարդ դարձնելու: Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգը – երաժշտությունն է»⁸:

Եվ այս ամենին էլ ավելի հասու լինելու համար Թումանյանը սկսեց լրջորեն ոչ միայն ուսումնասիրել Արևելքի պատմությունն ու գրականությունը, այլև կատարել մի շարք թարգմանություններ, որոնք այնքան բնորոշ էին գրողի և մտածողի իր տեսակին:

⁴ Ինճիկյան Ա., «Հովհաննես Թումանյան», ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969 թ., էջ 44:

⁵ «Հորիզոն», 1914 թ., N112:

⁶Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ հ. 7, ՀՀ ԳԱ «Գիտություն» հր., Եր., 1995 թ., էջ 141:

⁷Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ հ. 7, էջ 141:

⁸Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ հ. 10, էջ 165:

Թարգմանական որոնումը Թումանյանի ստեղծագործական աշխատանքի բաղկացուցիչ մասն էր, նրա աշխարհագրագրության և գեղարվեստական սկզբունքների դրսևորման հիմնական ոլորտներից մեկը: Թարգմանական գործը և ընտրված նյութերը երբեք կտրված չեն եղել նրա բանաստեղծական մտածողության ընդհանուր տիրույթից: Թարգմանությունների մեջ Թումանյանը դրսևորեց հանճարի իր փառահեղ նվաճումները՝ մի պարզ գիտակցությամբ, որ լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության: Ինչպես իրավացիորեն նշել է Արսեն Տերտերյանը. «Շատ քիչ հայ բանաստեղծների է հաջողվել թարգմանել օտար գրականությունից այնպիսի երգեր, որոնք հարազատ լինեին նրանց ստեղծագործությանը, այսինքն՝ թարգմանական տողերը նրանց գրչի տակից դուրս ելնեին իբրև ինքնուրույն, ինքնաբուխ և սեփական ստեղծագործություն: Հովհ. Թումանյանը պատկանում է բախտավոր բացառությունների թվին: Այն բոլոր թարգմանությունները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպությամբ՝ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու հույզերին»⁹: Թումանյանի ինքնուրույն և թարգմանական գործերի մեջ ոգու և գաղափարի առումով որևէ անհամատեղելիության չենք հանդիպում, դրանք միմյանց լրացնող մի ընդհանուր շղթա են, որտեղ թարգմանական երկերը, կրելով թարգմանչի անհատական կենսափորձի և հուզաշխարհի կնիքը, միաժամանակ չեն դադարում արտահայտել բնագրային նյութի կարևոր շեշտադրումները և հեղինակային նկարագրի էական հատկանիշները: Արևելքի գրողների ստեղծագործությունների թարգմանություններում նույնպես Թումանյանը պահպանել է նրանց գեղագիտական սկզբունքները, նրանց մտածողությունը կյանքի, մարդու դերի, նշանակության վերաբերյալ: «Միշտ պահանջելի է, որ թարգմանիչը հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին»¹⁰, – գրում է Թումանյանը: Ավելին՝ նրա գրական ժառանգության այս հատվածի հիմնավոր քննությունը հիմք է տալիս փաստելու, որ դրանք ուղղակիորեն արձագանքում են պատմական անցուդարձի այդօրյա իրադարձություններին: Հասարակական գործիչ Թումանյանը համաշխարհային, այս դեպքում՝ Արևելքի մեծերի ձայնն էր միացնում իր կոչերին՝ ուղղված միջազգային հանրությանը և առհասարակ՝ մարդուն: Տիեզերական հոգուն վիճակված էր ականատեսը լինելու մարդկության մեծագույն ոճրագործությանը, անցնել դրա միջով ու պայքարել դրա դեմ: Ի վերսուտ բանաստեղծ կոչված, բայց իրականության հորձանուտում հայտնված Թումանյանի համար հաճախ անհասկանալի էր աստվածային առատության և մարդկային ճղճիմ հոգու այդչափ անհամատեղելիությունը, որը մեր օրերում էլ ավելի ցայտուն է դառնում՝ Թումանյանի մտահոգությանն ու բողոքին հաղորդելով

⁹Տե՛ս **Տերտերյան Ա.**, «Հովհ. Թումանյան. Հայրենի եզերքի քնարերգուն», «Արարատ» հրատ., Վաղարշապատ, 1911թ., էջ 8:

¹⁰Տե՛ս **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ հ. 6, էջ 124:

միանգամայն արդիական հնչողություն: Գուցե մեծ գրողն ինքն էլ շատ հարցերում կուզենար արդեն ժամանակավրեպ դառնալ իր արծարծած խնդիրներով, բայց նրա յուրաքանչյուր միտք հնչում է նոր ու հրատապ հարցմունքի ուժգնությամբ ու ցավով: Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Հախվերդյանը. «Թումանյանի ստեղծագործության մեջ չկա մի բան, որ մենակ լինի, բարձրանա տափարակ տեղում, չունենա իր ազդակները կյանքում և արվեստում»¹¹:

Հայտնի է, որ Թումանյանի թարգմանական գործունեության համար հիմնական միջնորդ լեզուն եղել է ռուսերենը: Բայց շատ դեպքերում, չբավարարվելով ռուսերեն տեքստով, հեղինակը ուրիշների օգնությամբ կամ բառարանների միջոցով բնագիր նյութից կատարել է տողացի թարգմանություններ: Ավելին՝ 1890-ականների սկզբներին որոշել էր անգլերեն դասեր վերցնել Թիֆլիսի անգլիական փոխհյուպատոս Մուրտազից: «Թե որքան առաջադիմեց նա այդ ասպարեզում – չգիտեմ, – գրում է Գևորգ Ասատուրը իր հուշերում, – բայց գիտեմ, որ նա անգլերեն էր սովորում, որպեսզի կարողանար «Շիլլոնի կալանավորը» անմիջապես բնագրից թարգմանել»¹²: Այդուհանդերձ, լեզվագագառության բնատուր տաղանդը գրողին հնարավորություն էր տալիս ճիշտ ընկալելու թարգմանության համար ընտրված նյութի ներքին էությունն ու կարևոր արժեքների համակարգը:

Արևելյան ժանրերից Թումանյանի համար չափազանց հոգեհարազատ էր արևելյան բանաստեղծության հին տեսակներից մեկը՝ ռուբային: Միջնադարյան քառյակը Մերձավոր և Միջին Արևելքում տարածված բանաստեղծական մյուս տեսակների նման ընդհանուր արևելյան ծագում ունի և տարածքային այդ շրջանի գրեթե բոլոր ժողովուրդների մշակութային ժառանգության անկապտելի մասն է:

Միջնադարում բանաստեղծության այս տեսակը իր բարձրակետին հասավ պարսից գրականության մեջ: Բացի հոչակավոր քառյակագիրներ Օմար Խայամից և Բաբա Թահերից՝ քառյակագրության են դիմել նաև պարսից գրականության այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Ռուդաքին, Խաքանին, Սաադին, Ռումին, Հաֆեզը, Ջամին:

Հայ գրականության մեջ քիչ չեն և միջնադարյան շրջանի օրինակները: Նոր գրական հայերենով տասնիններորդ դարի երկրորդ կեսին նշանավոր դարձան Խ. Աբովյանի քառյակները, որոնք հեղինակը «բայաթի» է անվանել: «Քառյակագրությամբ հրապուրվեց նաև հաջորդ գրական սերունդը: Եվ այդ շարքում փայլեց Հովհ. Թումանյանը, որը քառյակը բարձրացրեց դա-

¹¹ Տե՛ս **Հախվերդյան Լ.**, «Թումանյանի աշխարհը», «Հայաստան» հրատ., Եր., 1966, էջ 478:

¹² Տե՛ս **Թումանյանը ժամանակակիցների հուշերում** /այսուհետ՝ ԹԺՀ/, Հայկական ԳԱԱ հրատ., Եր., 1969, էջ 352:

սականության բարձրագույն մակարդակի վրա»¹³, – գրում է Ռ. Իշխանյանը: Թումանյանի քառյակներին վերաբերող ուսումնասիրություններ ունեն նաև հայ անվանի թումանյանագետ-գրականագետներ Հր. Թամրազյանը, Մ. Մկրյանը, Լ. Հախվերդյանը, Էդ. Ջրբաշյանը: Նրանցից յուրաքանչյուրը Թումանյանի գրական ժառանգության այս շերտին անդրադարձել է իր դիտանկյունից բարձրացնելով այնտեղ հնչած այս կամ այն խնդիրն ու տալով դրանց ընդհանրական բնութագիրը Թումանյան գրողի ստեղծագործական և անձնական կենսագրության համապատկերում: Հիմնվելով արդեն եղած հարուստ գրականագիտական վերլուծությունների վրա՝ մեր ուսումնասիրության մեջ փորձում ենք քառյակները դիտարկել հիմնականում արևելյան փիլիսոփայության տիրույթում՝ որպես այդ մշակույթի, մասամբ և միջնադարյան հայ գրականության ավանդների ամբողջական խտացում: Թումանյանի հայացքը դեպի Արևելք, իսկ 1910-ական թվականների երկրորդ կեսից հետո հատկապես դեպի քառյակների աշխարհ, սովորական քմահաճույք չէր, «այլ իր մտածմունքի և կենցաղի միջև ներդաշնակություն հաստատելու այն սերը, որով առհասարակ հայտնի էր Թումանյանը»¹⁴: Եթե սա կենցաղավարությանն դրսևորման ինքնատիպ ձև էր, ապա մտածմունքն էլ արևելյան հին իմաստունների կենսափիլիսոփայությանն յուրօրինակ արտահայտությունն էր. «Լավ է ասում Օմար Խայամը՝ ենթադրիր, թե մեռած ես արդեն, էս օրերդ գտած համարիր, քեզ համար ապրիր, օրդ վայելիր... Ի՞նչ ենք մենք, ի՞նչ է մեր կյանքը էս օվկիանոսում՝ մի հյուլե անցնող...»¹⁵: Թումանյանը համակրանքով է վերաբերվում արևելյան երգիչների հայեցողական, փիլիսոփայական մտածողությանը, այլ բան է, որ նա այդպես չտնօրինեց իր կյանքը, մինչև վերջ նույն մաքառողն ու պայքարողը մնաց: Բանաստեղծին հրապուրեցին արևելյան, ավելի ստույգ՝ պարսկական բանաստեղծության հանճարները, ամենից շատ Օմար Խայամը՝ և՛ մտածողությամբ, և՛ արտահայտության կերպով: Մակայն թումանյանագիտության մեջ վաղուց հստակեցված է, որ Թումանյանի քառյակների ստեղծման հիմքերից սա գուցե և առաջինն է, բայց ոչ միակը:

Քառյակը հենց այն եզակի ձևն էր, որ կարող էր համակարգել և կյանքի վերջին տարիներին բյուրեղացնել բանաստեղծի մտածմունքները, հատկապես այն պարագայում, որ ստեղծագործական ցանկացած փուլում էլ բանաստեղծական խոսքի կարևորագույն ձևը՝ խտացումը, նրա հիմնական ձգտումն էր: Ներկայացնել ավելի շատ պատկերացումներ, փոխանցել ավելի մեծ խոհեր, քան բառեր կան տողի մեջ, երբ բառը ուղղակի բառա-

¹³Տե՛ս Իշխանյան Ռ., «Թումանյանի քառյակների լեզվական և տաղաչափական առանձնահատկությունները», Պատմա-Բանասիրական հանդես, առանձնատիպ N2 (73), Եր. 1976, էջ 10:

¹⁴Տե՛ս Հախվերդյան Լ. «Թումանյանի աշխարհը», էջ 483:

¹⁵ Տե՛ս Թումանյան Ն., «Հուշեր և զրույցներ», էջ 83:

րանային նշանակությունից բացի ներառում է այլևայլ գուգորդումներ, իր իսկ խոսքերով՝ երբ «բառը մի աշխարհ է»:

«Եթե բանաստեղծական պատկերն այնքան ավելի կատարյալ է, որքան քիչ բառեր են գործի դրված նրա ստեղծման համար, ապա քառյակը հենց այդ արվեստի արտահայտությունն է: Թումանյանը նոր բովանդակություն, իր օրերի բովանդակությունը տվեց հնօրյա քառյակին՝ պահելով նրա դասական մաքուր ձևը»¹⁶, – իրավացիորեն նկատում է Լ. Հախվերդյանը: Եվ այդ ձևի մեջ նա դրեց իր հոգու ողջ գեղեցկությունն ու գեղագետի նուրբ ճաշակը՝ առատ նյութ տալով գրաքննադատին: «Քառյակները հրատարակելիս մի զգացում կար մեջս, մի ցանկություն՝ քննադատ լինել, որովհետև լավ քննադատի համար հոգեբանական և գեղարվեստական խորասուզումներ, վերլուծություններ անելու շատ ավելի բան քառյակներն են տալիս՝ քան որևէ մեծ գործ: Քառյակները շատ վտանգավոր բաներ են բանաստեղծի համար, բայց մանավանդ քննադատի»¹⁷, – գրում է բանաստեղծը:

Թումանյանն առանձնակի և հատուկ վերաբերմունք ուներ հայ և օտար ժողովուրդների բանահյուսական նյութերի և հատկապես հեքիաթների հանդեպ: 1900-ական թթ. առաջին տասնամյակում նա այդ հետաքրքրությունների մղումով էլ թարգմանեց տարբեր երկրների ազգային հեքիաթներ՝ գերմանական, իռլանդական, իտալական, արաբական, ճապոնական, հնդկական, ռուսական և այլն¹⁸:

Եվ այդ ամենով հանդերձ՝ Թումանյանը գտնում էր, որ ամեն մի սյուժե էլ կարող էս հանդիպել այլ ազգերի հեքիաթների մեջ, և ոչ միայն հեքիաթների, էականը և ազգային դիմագիծ ստեղծողը փոքր, բայց կարևոր շեշտադրումներն են, որ յուրաքանչյուր ժողովուրդ դնում է իր բանահյուսական նյութի վրա: «Ինչպես էս կամ էն դարձվածքը, էնպես էլ ամբողջ պատմությունները անց են կենում աշխարհից աշխարհ և ամեն աշխարհքում, ամեն արևի տակ, ամեն ժողովրդի բերանում առնում են մի ուրույն երանգ, համ ու հոտ: Եվ շատ անգամ նուրբ առանձնահատկություններն են, որ որոշում են մի ժողովրդի ստեղծագործությունը մյուսից, ոչ թե գործի ամբողջությունը: Հաճախ կհիասթափվեն էն մարդիկը, որոնք ուզում են անպատճառ էս կամ էն ժողովրդական ստեղծագործության – էպոսի, հեքիաթի, առակի և նման գործերի սկիզբն ու ծնունդը կապել բացառապես իրենց պապերի ու հայրենիքի հետ»¹⁹: Եվ այդ հեքիաթները յուրաքանչյուր

¹⁶ Տե՛ս Լ. Հախվերդյան Լ. «Թումանյանի աշխարհը», էջ 484:

¹⁷ Տե՛ս Թումանյան Լ., «Հուշեր և զրույցներ», էջ 222:

¹⁸ Բացի ժամանակի պարբերական մամուլում («Հասկեր» մանկական ամսագիր, «Լուսաբեր» դասագիրք) և առանձին գրքույկներով հրատարակելուց, Թումանյանը անհրաժեշտ համարեց այդ հեքիաթները հավաքել մի քանի ժողովածուներում. «Գրիմ եղբայրների հեքիաթները» (երեք պրակով, 1914-1915), «Ռուսական հեքիաթներ» (1916), «Օտար հեքիաթներ» (երկու պրակով, 1916):

¹⁹ Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 6, էջ 211-212:

ժողովրդի դարավոր կյանքի անցած ճանապարհի խտացումներն են, որոնք բերանացի, սերունդից սերունդ են փոխանցվել, կրել հետագա ժամանակների ազդեցությունները, ձևափոխվել ու նոր երանգներ ստացել: Եվ անցումների այդ հաջորդական շերտերի խտացմամբ՝ դրանք իրենց մեջ կրում են մարդկային մտածողության վաղնջական ձևերը, աստվածային ու մարդեղեն ոլորտների սահմանների փոխներթափանցման պատկերները, բնության տարբեր տարրերի ու երևույթների բազմաձև ու բազմագույն դրսևորումները: Թումանյանը հեքիաթների միջոցով մատաղ սերնդին ոչ միայն հաղորդակից էր դարձնում համաշխարհային մշակույթի գանձարանին, այլև մատնանշում մարդկային երջանկության գաղտնիքների բացահայտման զանազան ճանապարհներ: Ինչպես հայկական ժողովրդական հեքիաթների ընտրության, այնպես էլ այլ ժողովուրդների²⁰ մեր դեպքում արևելյան հեքիաթների թարգմանության կամ փոխադրության հարցում, Հովհ. Թումանյանը ձգտում էր մտքի փոխանցման ամենասեղմ ու հակիրճ պատմելաձևին: Եվ դա ակնառու է դառնում հատկապես համաշխարհային հեքիաթագրության ճանաչված վարպետների մշակումների հետ զուգահեռներ անցկացնելու ժամանակ: Թերևս հենց դա է պատճառը, որ Թումանյանը օտար հեքիաթներին մոտենում է ոչ իբրև լոկ թարգմանիչ, այլ հմուտ հեքիաթագիր, որն առանց վարանելու ասեղնագործի նրբությամբ կատարում է փոփոխություններ՝ հավելումներ կամ սեղմումներ: Հեքիաթագրության արվեստի տիրապետման բարձրակետին կանգնած՝ նա կարող էր գնահատել համաշխարհային հեքիաթագիրներին և առաջարկել հեքիաթի մշակման իր մոդելը: Եվ միայն տարիներ անց՝ 1922-ին, իր այս խոհերի մասին Թումանյանը գրում է Պ. Մակինյանին, հիմնավորում, որ «Գրիմները հազիվ մի քանի հեքիաթ ունեն մշակած..., մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղավաղած ու փչացրած», իսկ «ռուսները ... խոստովանում են, որ Պուշկինից հետո, կամ ավելի ճիշտ «Ոսկե ձկնիկից» հետո – նրանք՝ մինչ էսօր չեն կարողացել մի հեքիաթ մշակեն իրենց էնքան առատ ու լավ հեքիաթներից»²⁰:

Այսպիսով՝ հետևելով մեծ որոնողի խոհերի ընթացքին՝ տեսանելի է դառնում կենսափիլիսոփայության այն եզրերը, որոնք մղել են գրողին ստեղծագործելու ժանրերի բազմաձևության մեջ՝ հեղինակային գործերին զուգահեռելով թարգմանական բացառիկ գոհարներ: Վերջիններս իրենց բարձրարժեքությամբ և բովանդակային զուգահեռումներով ներդաշնակվում են Թումանյանի մտածողի ողջ գրական ժառանգությանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ստեղծագործական կյանքի տարբեր հանգրվաններում Հովհաննես Թումանյանի որոնումները հայ մեծ բանաստեղծի հայացքը վերջիվերջո ուղղեցին դեպի Արևելք՝ լույսի այն մեծ ակունքը, որտեղից սկիզբ են առ-

²⁰ Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 10, էջ 421:

նում մարդկային ստեղծագործ մտքի և իմաստության կենսատու ցուրերը: Արևելքը Թումանյանի համար հոգեպես հարազատ էր ու մտերիմ: Մանրակրկիտ ու տևական ուսումնասիրությունները, Արևելքի պատմությանը և մշակույթին վերաբերող գրքերի ընթերցումը հնարավորություն են տվել մեծ գրողին բազմաթիվ զուգահեռներ տեսնել իր երկրի և արևելյան հին ու մեծ մշակութային ազգերի պատմության միջև: Եվ այս ամենին էլ ավելի հասու լինելու համար Թումանյանը սկսեց լրջորեն ոչ միայն ուսումնասիրել Արևելքի պատմությունն ու գրականությունը, այլև կատարել մի շարք թարգմանություններ, որոնք այնքան բնորոշ էին գրողի և մտածողի իր տեսակին: Այսպիսով՝ հետևելով մեծ որոնողի խոհերի ընթացքին՝ տեսանելի է դառնում կենսափիլիսոփայության այն եզրերը, որոնք մղել են գրողին ստեղծագործելու ժանրերի բազմաձևության մեջ՝ հեղինակային գործերին զուգահեռելով թարգմանական բացառիկ գոհարներ: Վերջիններս իրենց բարձրարժեքությամբ և բովանդակային զուգահեռումներով ներդաշնակվում են Թումանյանի մտածողի ողջ գրական ժառանգությանը:

Հիմնաբառեր. Արևելք, պոեզիա, փիլիսոփայություն, Թումանյան, քառյակ, մտածողություն, թարգմանություն, հեքիաթ, երաժշտություն

Օգտագործված գրականություն

1. Թումանյան Հովհ., ԵԼԺ հ. 6, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., Եր., 1994 թ., էջ 334:
2. Թումանյան Հովհ., ԵԼԺ հ. 7, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 1995 թ., էջ 141:
3. Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ.10, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., Եր., 1999 թ., էջ142:
4. Թումանյան Ն., «Հուշեր և զրույցներ», «Լույս» հրատ., Եր., 1987թ., էջ 208:
5. Ինճիկյան Ա., «Հովհաննես Թումանյան», ՍՍՀ ԳԱ հր., Եր., 1969 թ., էջ 44:
6. Տերտերյան Ա., «Հովհ. Թումանյան. Հայրենի եզերքի քնարերգուն», «Արարատ» հրատ., Վաղարշապատ, 1911թ., էջ 8:
7. Հախվերդյան Լ., «Թումանյանի աշխարհը», «Հայաստան» հրատ., Եր., 1966, էջ 478:
8. «Հորիզոն», 1914 թ., N112:

Ани Егиазарян

Директор музея Ованеса Туманяна, кандидат филологических наук

ПУТЬ ТУМАНЯНА В ПОИСКАХ “ОТЕЧЕСТВА СВОЕЙ ДУШИ”

Поиски Ованеса Туманяна на разных веках его творческой жизни в конечном итоге устремили взор великого армянского поэта на Восток, великий источник света, из которого берут начало искры человеческой творческой мысли и мудрости. Восток был близок Туманяну духовно. Детальное и многолетнее изучение истории Востока и чтение книг,

связанных с культурой, позволило великому писателю увидеть множество параллелей между историей своей страны и историей древних и великих культурных народов Востока. И чтобы еще больше добиться всего этого, Туманян стал серьезно заниматься не только историей и литературой Востока, но и сделать ряд переводов, столь характерных для его типа писателя и мыслителя. Таким образом, следуя за ходом мыслей великого искателя, становятся видны грани философии, что подтолкнуло писателя к творчеству в самых разных жанрах, совмещаая героические произведения с исключительными жемчужинами перевода. Последние при их высокой ценности и содержательных различиях составляют часть всего литературного наследия туманянского мыслителя.

Ключевые слова: Восток, поэзия, философия, Туманян, четверостишие, мышление, перевод, сказка, музыка

TOUMANIAN'S WAY IN SEARCH OF THE "THE HOMELAND OF HIS SOUL"

Ani Yeghiazaryan

Director of the Hovhannes Toumanian Museum, PhD in Philology

Hovhannes Toumanian's search at different milestones of his creative life ultimately directed the gaze of the great Armenian poet towards the East, the great source of light from which the life-giving sparks of human creative thought and wisdom originate. The East was close to Toumanian spiritually. Detailed and long-term studies, the history of the East and the reading of books related to culture enabled the great writer to see many parallels between the history of his country and the history of the ancient and great cultural nations of the East. And in order to achieve all this even more, Toumanian began seriously not only to study the history and literature of the East, but also to make a number of translations, which were so characteristic of his type of writer and thinker. Thus, following the course of the thoughts of the great searcher, the edges of biophilosophy become visible, which pushed the writer to create in a variety of genres, paralleling the heroic works with exceptional gems of translation. The latter, with their high value and substantive differences, are part of the entire literary heritage of the Tomanian thinker.

Keywords: East, poetry, philosophy, Toumanian, quatrain, thinking, translation, fairy tale, music

Ներկայացվել է՝ 22.02.2023 թ.

Ընդունվել է՝ 15.02.2023 թ.

ԳՐԱԿԱՆ-ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՉ

Միլվա Հովհաննիսյան

Երևանի Հյուսիսային համալսարան,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
silva_hovhannisjan_2017@mail.ru

Ճշմարիտ արվեստագետի շուրջ խորհրդածությունները մըշտապես մնում են անավարտ: Անընդհատ թվում է, թե դեռ չճանաչված գաղտնիքներ կան, չպարզաբանված գաղափարներ, և ամեն սերունդ կարիք ունի բացահայտել դրանք իր ձգտումների, իր որոնումների, իր կենսափորձի շրջանակում: Եվ այս առումով Թումանյանը, իր եզակիությամբ, «ներկա է բոլոր ժամանակներում»:

-Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում այլ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության,- գրում է Ե. Չարենցը՝ «հանճարեղ լոռեցուն» տեսնելով Հոմերի, Գյոթեի, աշխարհի մյուս մեծերի շարքում՝ որպես հավասարի...:

- Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և բանաստեղծությամբ արտահայտված՝ մեծ վարպետի ձեռքով,- գրում է Վալերի Բրյուսովը: «Նրա կախարդական գրիչը ուր դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն, թե վիպերգություն: Նա եղավ մեզ համար այն, ինչ որ եղավ Պուշկինը ռուսների համար, Միցկևիչը՝ լեհերի համար,- թումանյանական արվեստը այսպես է բնորոշել Ավետիք Իսահակյանը: Ստ. Ջորյանը Թումանյանին անվանել է «համազգային բանաստեղծ»՝ նկատելով, որ հեշտ և միաժամանակ դժվար է ըմբռնել Թումանյան-բանաստեղծի ստեղծագործական առեղծվածները, պոետական գյուտերը: Այդ առումով, իր մտահոգությունն է հայտնել նաև Թումանյանն ինքը՝ «...Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել, ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք»:²¹ Վ.Տերյանի բնորոշմամբ Թումանյանը հայ ժողովրդի հոգու իմաստուն և վսեմ թարգմանն է: «Ամենն հայը» - այսպես է կոչել Թումանյանին Արշակ Չոպանյանը: Իսկ ահա Հր. Մաթևոսյանը ուղղակի հայտարարում է՝ «Թումանյանով մենք կանք, առանց Թումանյան մենք չկանք...»:

Այս և մի շարք այլ բնորոշումներում ընդհանրությունն այն է, որ մշտապես ընդգծվում է համաշխարհային և ազգային բոլոր մեծերի հետ Թումանյան-բանաստեղծի, գրողի հոգևոր հարազատությունն ու կապը: Սակայն, ինչպես հաճախ իրենց ժամանակից առաջ անցած անհատները, Թումանյանը ևս միանգամից և միանշանակ չի ընդունվել՝ ենթարկվել է անհարկի

²¹ Տե՛ս Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969 «Լույս» հր. էջ 219:

քննադատության և մեղադրանքների: Իրողությունն այն է, որ Թումանյանը նոր խոսք, «մտքի և ձևի թռիչքներ», խոհա-փիլիսոփայական նոր մոտեցում էր բերել գրական աշխարհ, միջդեռ ամեն նոր միշտ էլ դժվար է միանգամից ընկալել և գնահատել: Դժվար է, «...քանի որ գեղարվեստական մտածողության արմատական փոփոխությունը զգալու և ըմբռնելու համար անհրաժեշտ են սերունդների հոգեկան որոնումները, առընչություններն ու գեղագիտական հասունացումը», - նկատում է Հր. Թամրազյանը:²²

Բանաստեղծի մեծությունը, թերևս, առավել պատկերավոր կարող է բնորոշել հեղինակի «Կույրերի կարծիքը» արևելյան առակի փոխադրության գաղափարական ուղերձը:²³

Եվ ինչպես ցանկացած մեծության, Թումանյանի ստեղծագործական աշխարհը ևս դժվար է բացահայտել, տեսնել ամբողջությամբ՝ խորքում մշտապես կմնան թաքնված շերտեր, որոնք նորանոր մեկնությունների կարիք կունենան:

«Անդունդներ չափող» իր մտքի, ստեղծագործական թռիչքների անկրկնելիությունը գիտակցել է նաև ինքը՝ Թումանյանը:

Ես հազար աչքով բաներ եմ տեսնում,

Որ թաքնված են լուրջան ետև,

²² Տես՝ Հր. Թամրազյան, Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Երևան, «Նաիրի» 1995, էջ 133:

²³ Տես՝ «Կույրերի կարծիքը», Հովհ. Թումանյան քառյակներ, բալլադներ, թարգմանություններ, հատ. 2-րդ, Հայաստանի ԳԱ հրատ., Երևան-1991, էջ 303:

...Հավելենք, որ «Քաջ նազար» հեքիաթի նախընտրությունը ամեննին էլ պատահական չէր, և Թումանյան-հեքիաթագիրը չէր կարող այն շրջանցել: Հարազատ մնալով հեքիաթի սյուժետային պատումին Թումանյանը հավելում է նաև ժողորդական բանահյուսության տարրեր: Իրողությունն այն է, որ քաջնազարությունը որպես երևույթ, անվախճան զավեշտալի կատակերգություն, դուրս է աշխարհագրական միջավայրից, ժամանակի ու տարածության սահմաններից: Թումանյանը խնդիր ուներ, թերևս. մեկ անգամ ևս հիշեցնել, որ նազար-հերոսը ոչ միայն ունի իր պատմական նախատիպը, այլև իր անվերջ վերադարձով, մշտապես մեր կողքին է: Հիշեցնել, որ՝ քաջնազարության մշտական կեցության պայմանը իրականի և թվացյալի ընկալման շփոթն է, երևութականը էական ճանաչելու ամբոխային մտածողությունը և իհարկե, քաջնազարությանը նպաստող միջավայրը, որը կարող է բախտախնդիրներին „արքայական,, կոչման արժանացնել:

Այս առումով Նազարը մենք ենք, բոլորս և յուրաքանչյուրս՝ առանձին-առանձին: Մենք ենք մեր վախկոտությամբ զորացնում չարը, սգիտությունը, թույլ ուժը, փոքր մեծությունը և նազարներ օծում:

Հազար ականջով ձայներ են լսում,
Որ դեռ սրտերում շշուկ են թեթև:

Ապա խոսքը ուղղելով իր քննադատներին բանաստեղծը գրում է.

-Ես իմ ողջ էությանմ ապրում եմ մարդկային կյանքից ավելի մեծ կյանքով, հենց էնպես, ինձ համար, և անընդունակ եմ որևէ վանդակի մեջ փակվելու, էն տեսակ երգեր երգելու,որ ձեզ դուր գամ:

Թումանյանը ստեղծագործում էր ինքն իր հետ, իր ընթերցողի հետ պարզ և անկեղծ զրուցելով: Եվ դուր էր գալիս ընթերցողին հենց այն պատճառով, քանի որ չէր ջանում դուր գալ: Թումանյանն իր կախարդական գրքչով առօրեականը, սովորականը, երբեմն հպանցիկ դրվագն անգամ դարձնում էր գեղարվեստի նյութ, ներկայացնում որպես գեղարվեստական իրականություն: /Մի կաթիլ մեղրը.../ Ինչպես նկատում է Հր. Թամրազյանը Թումանյանի ամենատեսաչափը բացահայտում է Մեծ աշխարհի և իր «փոքրիկ հերոսների» աշխարհի կապը:

Թումանյանը բազմաժանր ստեղծագործող է, սակայն գրական բոլոր ժանրերից կարևորվում էր առանձնապես հեքիաթը և քառյակը: Հեքիաթը «ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են», քառյակը՝ սեղմ խոսքի մեջ իր բովանդակային խորությամբ: «Համոզված էր, որ ինքը մի հեքիաթ է մշակել միայն, և դա «Քաջ Նազարն» է: Երազանքը, նույնիսկ մահվան մահճում «Հազարան բլբուլ» հեքիաթի մշակումն ավարտելն էր, և նա համոզված էր, որ դա լինելու էր իր լավագույն մշակումը: Դա պայմանավորված էր ոչ միայն նրանով, որ այդ հեքիաթը երկար տարիներ զբաղեցրել էր իր միտքը, և արդեն իր մտահոգումն իրագործելու պահը հասունացել էր, այլև այն պատճառով, որ բանաստեղծը համոզված էր, թե հայկական այդ հեքիաթը կարող է մրցել աշխարհի լավագույն հեքիաթների հետ»: Հոր գնահատականի մասին է վկայում Նվարդ Թումանյանը:²⁴

Թումանյանը անմրցելի է իր հեքիաթներում, պոեմներում, արձակ, թե պոետական այլևայլ ստեղծագործություններում, սակայն «...Բնականաբար Թումանյանի քառյակների մեջ նախ պետք որոնել նրա անհատականության արտացոլումը և հոգու կենսագրությունը» - գրում է Հր. Թամրազյանը: «Թումանյանի ամեն քառյակ մի ուրույն աշխարհ է, մի առեղծվածի վրա բացված պատուհան»:²⁵ Այդ է հաստատում նաև բանաստեղծի դուստրը՝ մեջբերելով հոր դիտողությունը. «Քառյակները հրատարակելիս մի ցանկություն կար մեջս, մի ցանկություն՝ քննադատ լինել, որովհետև լավ քննադատի համար հոգեբանական և գեղարվեստական խորասուզումներ, վերլուծություններ անելու համար շատ ավելի քառյակներն են տալիս՝ քան

²⁴ Տե՛ս **Ժենյա Քալանթարյան**, Ժամանակի միջով, Ժամանակի հետ, Երևան, ԵՊՀ, 2021, էջ 47-48:

²⁵ Տե՛ս **Հր. Թամրազյան**, Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Երևան, «Նաիրի» 1995, էջ 474:

որևէ մեծ գործ»։ Ասենք, որ Թումանյանը առաջինը հենց ինքն էր իր քննադատն ու խստապահանջ ընթերցողը։ Թումանյանին մտահոգում էր այն, որ չի հայտնվում մի կարգին քննադատ, որը կարողանա «բանաստեղծությունը տարբերել ոտանավորից»։ «Մեր գրականության մեջ թյուրիմացություններ շատ կան, - ասում էր նա, - Մի լավ քննադատի մեծ կարիք ունենք, որ ամեն մեկին իր տեղը ցույց տա, ամեն մեկին իր տեղը դնի»։²⁶

Եվ այս առումով այսօր էլ արդիական է Թումանյանի մտահոգությունը, քանի որ գրել՝ դեռ չի նշանակում ստեղծագործել։ Այսօր էլ շատերն են գրում, բայց քչերին է հաջողվում ստեղծագործել։

Ինչպես նկատել են մի շարք թումանյանագետներ, քառյակները ոչ միայն թումանյանի ստեղծագործական մտորումների ամփոփ պատկերներն են, այլև հայ ոգու, հայ մտքի, լինելիության ուժի կենսագիրն ու հուշագիրը։ Ամեն մարդ չի կարող հասկանալ քառյակը՝ գրում է նաև բանաստեղծը՝ այն մտքի հասունություն, իմաստության արդյունք է։ Գեղարվեստի գնահատման իր իսկ բնորոշմանը համահունչ «աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ» իր քառյակներում Թումանյանը ազգային միջոցով միաժամանակ խորհրդածում է աշխարհի, կեցության առեղծվածային բնույթի, մարդու անկատար էության շուրջ՝ որում չարի ու բարու, լույսի ու խավարի, արարիչ և ավերիչ ուժերի պայքարը մշտապես մնում են անհաղթահարելի։

Ի՞նչ է որոնում, ի՞նչ է ավանդում, ի՞նչ է ուզում բանաստեղծը։ Իհարկե այն, ինչ երագում է մարդը իր վաղնջական ժամանակներից։ Ուզում է, որպեսզի չարության ու դավի, բռնության ու ցավի մեջ անգամ «հազարան բլբուլի երգով», թե անհունի կանչով մարդը արժանի դառնա իր կոչմանը, իր աստվածակերպ էությանը։

Թումանյանը թե՛ իր քառյակներում, թե՛ այլ գործերում ստեղծագործական նորանոր հնարքներ է փնտրում բարոյապես մաքրագործելու մարդուն, փոխելու խեղված իրականությունը, վերափոխելու աշխարհը, որտեղ դեռևս գերակշռում է չարը։ Դեռևս «Մարդը մարդուն գալ է» Թ. Հոբսի օգնությամբ ասած՝ դեռևս շարունակվում է «Բոլորի պատերազմը բոլորի դեմ»։

Հ՛եյ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կանքդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ,
Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցի ր, ուրախ անցի ր երկու օրվա էս ճամփեդ։

Սակայն առավել խորն է բանաստեղծի վիշտը հայ-մարդու բարոյական անկման, իր ճշմարիտ տեսակի, իր ինքնության կորստի համար։ Ինչու՞ է այդպես։ Եվ Թումանյանը փորձում է մեր կորուստների պատճառները քննել կեցության հաղնդհանուր օրինաչափության, պատճառահետևանքային կապի շրջանակում։ «Պարզ հասկանալու համար երևույթի

²⁶Տե՛ս Նվարդ Թումանյան, Հուշեր և գրույցներ, էջ 221։

վրա պետք է նայել բնության և պատմության օրենքների բարձրությունից, - գրում է նա,- Էն լայն խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, դառնանում է ու փչանում: Էսպես է բնության օրենքը»:²⁷

Չընչին մարդուկներ, լըրբորեն հանգիստ
Անսիրտ փոքրոգի, գրծծի ու կոպիտ.
Մեռնում են, մարում նրանց հայացքից
Եվ հոգու ձրգտում, և սրտի ժպիտ/Տրտունջ/²⁸

Ուրեմն, ո՞րն է ելքը: Թումանյանը համոզված է, որ «Ճարը դրսից անել չի կարելի» Ելքը ազգային փրկարար իմաստությամբ և հոգու արիությամբ սեփական բարոյական տկարությունը ախտորոշելն ու բժշկելն է:

Սակայն անցյալի դրամատիկ հիշողության, ողբերգականի ծանր ապրումի, «հայոց հառաչանքի», «հայոց վշտի խորը ծովում» անգամ նկատելի է Թումանյան-բանաստեղծի կենսասիրությունը, «լուսավոր թախիծը» և գալիք պայծառ օրերի սպսումն ու հույսը: Բանաստեղծը հավատում է հայ-տեսակի ճշմարիտ հայտնությանը, հայ Ոգու ներուժին, հայ ժողովրդի հավաքական կամքին և ազնվացմանը:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած
Հազա ր-հազա ր լուսապայծառ հոգիներով ճառագած,
«...Հայրենիքիս հետ»:

Բանաստեղծը համոզված է, որ մարդը կարող է կեցության քառսը հաղթահարել, տառապանքից ազատվելու ուղին գտնել միայն հոգևոր վերափոխման, չարը բացասելու, ասելությունը հոգեպես հաղթահարելու, ներելու, սիրելու, կարողությամբ: Քանի որ չարը ծնում է նոր չարություն, քանի որ չարին պատասխանելով չարով, առավել զորացնում ու անպարտելի ենք դարձնում չարի թագավորությունը:

Ինչքան ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես:
Տարել ներել ու սիրել,
Վատը լավ եմ տեսել ես;

²⁷ Տե՛ս, "Դառնացած ժողովուրդ», հոդվածը:

²⁸ Տե՛ս, Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի, „Զանգակ,, -97, ՄՊԸ 2019

Եվ որքան էլ իր նկատմամբ մարդիկ անարդար, որքան էլ վիշտը խոր, միևնույնն է, բանաստեղծի համար օտար է բռնությունը, մարդատյացությունը, նրա զայրույթն անգամ լի է սիրով:

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարավոր.
Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

Չմոռանանք, որ հանճարին է միայն հատուկ ինչպես անհուն վշտի, մեծ սիրո, այլ նաև գերագույն երջանկության ապրումը, լինելիության բերկրանքն ու հոգեկան վայելքը: Գուցե այսպիսի մտորումով է Լեոն Թումանյանին կոչել «Չափազանցված մարդ»: Չվախենանք ասել՝ գերմարդ:

Ո՛նց է ժպտում իմ հոգին
Չարին բարուն, -ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:

Ավելին, բանաստեղծի դիտումով, սերը որպես տիեզերքի բարձրագույն ուժ, որպես «խորին խորհուրդ» օգնում է ուրիշին միանալու երջանիկ ինքնամոռացում ապրել. «Եվ ինչ է սիրո իմաստը վերին, ի՛նչ երջանկության խորհուրդը խորին՝ հալվել միանալ, իրեն մոռանալ»: Մեկ այլ քառյակում Սերը ներկայանում է որպես անցավոր կյանքը իմաստավորող սփոփանք:

Ով՛ իմանա՝ ու՛ր ընկանք,
Քանի օրվա հյուր ընկանք.
Սերն ու սիրտն էլ երբ չկա՝
Կրա՛կ ընկանք, գու՛ր ընկանք:

Վերջապես բանաստեղծը փորձում է որոնել մարդու ամենաբաղձալի երազանքի՝ անմահության խորհուրդը, չարենցյան խոսքով՝ «հավերժի ճանապարհը»: Ուզում է Փարվանա ասպետ-կտրիճների նման գտնել և մարդկանց նվիրել կյանքը իմաստավորող անշեջ հուրը:

Ուզում է, ինչպես մեկ այլ առիթով գրում էր Դոստոևսկին՝ «դիպչել այլ աշխարհներին»: Վերջապես ուզում է ճանաչել էս ու էն աշխարհների խորհուրդը, հասկանալ էս ու էն աշխարհների առեղծվածային կապն ու տարբերությունը:

Մարդը իր երկակի էության՝ երկնային է և երկրային, երկու աշխարհների, երկու բևեռների միջև մշտապես փնտրում է ինքն իրեն: Աստված է այդպես կամեցել՝ մարդուն դարձնելով ոչ միայն ստեղծված, այլև ինքնաս-

տեղծ էակ: Բայց Աստված չգիտի ի՞նչ անի, արդյոք ճիշտ էր մարդուն շնորհել բարին ու չարը ինքնական ընտրելու ազատությունը: Եվ, ինչպես Աստված, բանաստեղծը ինքն է տարակուսած, թե ո՞րն է իր համար առավել նախընտրելի սահմանը:

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան, միտք եմ անում՝ է՞ս, թե էն.
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թե էն.
Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի.
Տանի , թողնի՛, — ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս, թե էն:

Թումանյանը հավատում է, որ այնուհաղերձ, կա մի ուժ, որ «մարդուն խավարից տանում է լույսի աշխարհ..., օգնում է վերափոխվել, ձգտել բարձրը, գեղեցիկը, վեհը, կատարյալը, բացարձակը և հավատալ այլաշխարհիկ /տրասցիդենտալ/ սահմանների գոյությանը»: «Թումանյանի տարբեր ժանրերի գեղարվեստական բոլոր ստեղծագործությունները ունեն մի հիանալի ներքին միասնություն ու ամբողջականություն: Այդ միասնության ամենավառ գծերից մեկը անմահության խորհուրդն է, որը նրան հուզել է սեղծագործական կյանքի ողջ ընթացքում», - գրում է Մկրտիչ Մկրյանը:²⁹

Եվ Թումանյանը իրեն տանջող գոյափիլիսոփայական բոլոր հարցադրումների պատասխանները որոնում է մարդ-Աստված-բնություն եռամիասնության մեջ: Փիլիսոփա-բանաստեղծի ինքնատիպ պանթեիստական հայացքը Աստծուն զգում է ամենուր: Բնությունը, մարդուն ընդունում է որպես Աստվածային արարչագործություն և պատկեր:

Ո՛վ անճառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում,
Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բորբոքում,
Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհում Քեզանով,
Ողջը Քո մեջ՝ անմահ հ, անվեջ՝ Քեզ են երգում Քո ձենով...

Ինչպես գեղարվեստորեն բնորոշում է Հր. Թամրազյանը. «բանաստեղծը ծնվել է տիեզերական սիրո ավազանում»:³⁰ Եվ ահա, քառյակներից մեկում Թումանյանը գրում է, թե իր՝ ծննդոլին, մասնակցում է ողջ բնությունը՝ արևը, սարը, ցողը երկինք-երկիր կապող ծիածանը, իսկ կնքահայրը Աստված է:

Իմ կնունքին երկինքը՝ ծամ, արևը՝ ջահ սրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.

²⁹ Տե՛ս Մկրտիչ Մկրյան, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր, 1981, էջ 118:

³⁰ Տե՛ս Հր. Թամրազյան, Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Երևան, „Նաիրի“, 1995, էջ 480:

Սարը եղավ կնքահայրս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կնքողը Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Եվ քանի որ Աստված ինքն էլ բանաստեղծ է: Ուստի բանաստեղծից միայն կարել էր պոետի կոչում ստանալ և հեշտությամբ կարդալ ամենուր սպառված Նրա անանուն երգերը:

Դու մի անհայտ բանաստեղծ ես՝ չտեսնված մինչև էսօր,
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:
Ես էլ. ասենք, զարմանալի ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

Քառյակները ասես լրացնում են միմյանց: Փոխադարձ հարցրում ու պատասխան են, որոնցում կանխորոշվում է պոետական ասելիքի և անելիքի էվոյուցիան: Այսպես. եթե Արարիչ-Աստվածն աշխարհը ստեղծել է ոչնչից, ապա բանաստեղծ-Թումանյանը ընդամենը փորձում է կարողացածի չափով իրեն վստահված շռալ պարզել, պոետական իրողություն դարձրած, վերադարձնել, որպեսզի պարտք չմնա և կարողանա միանալ Արարչին: Մյուս կողմից էլ իմաստը գուցե երկակի է՝ ընդհարապես վերաբերում է մարդ-Աստված փոխհարաբերությանը:

Ամեն անգամ քո տվածից երբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչքան է դեռ մնում,-
Զարմանում եմ, թե՛ ո՞վ շռայլ, ի՞նչքան շատ ես տվել ինձ,
Ի՞նչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Մեկ այլ քառյակում հարցադրումը ասես շարունակվում է՝ բանաստեղծը մտորում է, թե ինչու՞ է ինքը մշտապես մենակ: Եվ ահա պատասխանը՝ ինքը մենակ է, ինչպես Աստված է մենակ: Գուցե մենակ է, որպեսզի «տեսնի ու հասկանա ամենքին» և իրեն տրված պոետական շնորհով ճանաչի կեցության ճշմարիտ բնույթը:

Ի՛նչ իմանաս Ստեղծողի գաղտնիքները անմեկին.-
Ընկեր տվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին,
Բանաստեղծին թողեց մենակ, մեն ու մենակ Իրեն պես,
Որ Իրեն պես մտիկ անի ամեն մեկին ու կյանքին:

Ավելորդ է ասել, որ, ինչպես թումանյական արվեստի ժանրային բոլոր դրսևորումներում, քառյակներում ևս առկա են «անդունդներ չափող» խորաթափանց միտքը և աշխարհճանաչման անկեղծ բերկրանքը: Վերջինս, թերևս, գիտակցված հասարակի ճանաչումն է, բարձրի, բարդի, անբացատրելիի պարզեցումն է, որը հատուկ է միայն ընտրյալներին: Այս

հակադրության գոյությունն էլ նրա արվեստին պարզևում է «հեքիաթային, արարիչ ոգի»՝ այն դարձնելով հասկանալի և ցանկալի ամեն տեսակ ընթերցողի համար: Թումանյանը փորձում է գեղագետ-փիլիսոփայի խորաթափանցությամբ անհայտը հայտնաբերել հայտնիի միջոցով, լռովա ձորերի գեղեցկությամբ ու խորությամբ ճանաչել տիեզերական բարձունքները:

Ինչպես, մի առիթով, ասել է Դանիել Երաժիշտը՝ Կոմիտասը գութանը բարձրացրեց երկինք: Զուգորդությամբ կարող ենք ասել՝ Թումանյանը նաիրյան խոսքը տարավ երկինք: Եվ այդ խոսքի իմաստնային ամփոփումը առավել խորն է նկատվում քառյակներում: «Քառյակները բանաստեղծի ողջ ստեղծագործական հավատամքի շարժիչն են, փիլիսոփայան խորհրդածությունների ակունքները...»- գրում է Ժենյա Քալանթարյանը: «Քառյակներում ամփոփվում են թե՛ հայրենի, թե՛ արտասահմանյան գրականության հոգևոր փորձն ու դարերի իմասնությունը, թե ուղղակի մարդանհատի ոգու մաքառման փիլիսոփայությունը»:³¹

Ինչպես բանաստեղծի պոետական մի շարք այլ գործերում, այնպես էլ քառյակներում այնքան ակնհասալի է հնչում Աստծո հետ երկխոսելու, աստվածայինի հետ մերձենալու ցանկությունը, որ կարելի է խոսել թումանյանական պոեզիայի հոգևոր ուղղվածության, յուրօրինակ կրոնական հավատամքի առկայության մասին: Թերևս գրաքննության շրջանում հաճախ փորձ է արվում ոչ անհրաժեշտ չափով կարևորել այդ կողմը և այսօր էլ այն մնում է միշտ վերջ չբացահայտված: Մինչդեռ, կարծում ենք, աշխարհայացքային նմանօրինակ կողմնորոշման մեկնությունը ամենաէականն է Թումանյանի անհատականության ճանաչման համար: Սակայն միաժամանակ չի կարելի չնկատել, որ Թումանյանի հավատը զերծ է դոգմատիկ բովանդակությունից, այն գիտակցված անհրաժեշտի ապրում է: Բանաստեղծի սթափ հայացքը Աստծուն ընդունում է որպես կենդանի Գոյ, որպես «սրբազան ճշմարտություն», հոգու վեհացման սուբստանց և տիեզերական ներդաշնակության պայման:

Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծո շունչը ամենուր.

Ես լսում եմ Նրա անլուռ կանչն ու շունչ ամենուր.

Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին

Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

Բանաստեղծական ներշնչանք, թե՞ աստվածային հայտության բերկրանք, գուցե թե՛ մեկը, թե՛ մյուսը, ո՞վ իմանա: Ընդհանուր հայացքով կարելի է նկատել, որ Թումանյան-մտածողի մեջ միաժամանակ գոյակցում են երկու հակադիր էություններ՝ նա տխուր է և ուրախ, իր իսկ բնորոշմամբ՝

³¹ Տե՛ս Ժենյա Քալանթարյան, Ժամանակի միջով, Ժամանակի հետ, Երևան, ԵՊՀ, 2021, էջ 47-48

«Խնդացող տխուր և սրտաբեկ ուրախ»: «Թումանյանը շատ բարդ մարդ էր: Նրան հասկանալը շատ դյուրին բան չէր: Շատերն են նրան բնորոշել և ընկել են սխալների մեջ...»-գրում է նաև Դ. Դեմիրճյանը:³²

Մի դեպքում ամենքի հետ շփվող «ուրախ թամադա» մշտապես հյուր-ընկալ, իր իսկ խոստովանությամբ՝ կյանքը հրապարակ, ամենքի «ոտքի կոխան» դարձրած դրկից ու զրուցակից, մյուս դեպքում՝ ասկետիզմի հաս-նող մենակեցության ձգտող, գոյի ճակատագրական վիշտով տառապող ողբերգակ-փիլիսոփա:

Եվ ձեր ուրախ խնջույքների ժամանակ
Ձեռքիս բռնած կենաց գինով մի բաժակ
Ես լալիս եմ, թեև դուք չեք նկատում
Իմ արցունքը սրտիս միջին է կաթում/ «Ես վիշտ ունեմ»/³³

Էպիկուրի³⁴ գմ և միաժամանակ պլատոնականություն³⁵: Մա՞րդ, որն երագում է իր ճշմարիտ «հոգևոր տուն», «հոգևոր հայրենիք» վերադարձի մասին, թե՞ ուղղակի սեփական փորձառությամբ բարձրագույն իմաստու-թյուն նվաճելու պահանջ: Պարզելու գոյաբանական, մետաֆիզիկական հարցեր՝ իր իսկ բնորոշմամբ՝ հարցեր՝ «Անհաս բանից, ըսկզբանից, երբ չկան էլ դեռ չըկար» : Իսկ սկիզբը, վերադարձը դեպի իր «գոհար երագներ» Թումանյանը փնտրում է արևելքում, ինչպես նկատում է բանաստեղծի դուստրը իր վերջին շրջանը՝ փիլիսոփայական շրջանը՝ տիեզերական խո-հերի շրջանն էր... դա հենց քառյակների շրջանն էր: Ուշադրության կեն-տրոնում արևելքի փիլիսոփայությունն էր, հրապուրված էր առանձնապես պարսից միջնադարյան բանաստեղծներով:

-Ես առաջ Պուշկինի և Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա ար-ևելքին եմ գալիս, գալիս եմ դեպի մերը..., -վկայում է նաև ինքը՝ բանաս-տեղծը:

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում սպասում են իմ հոգուն.
Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտե՞ղ, դեպի տո՛ւն

Աշխարհը, որքան էլ փոփոխական և կորուստներով լի, միևնույնն է, անփոփոխ է իր բազմազանության միասնությամբ, իր ամբողջականու-թյամբ: Բնության մեջ ոչինչ չի կորչում՝ մի վիճակից անցնում է այլ վիճակի՝ մեր մտածումները, երագանքներն ու զգացմունքները պահպանվում և փո-

³² Տե՛ս Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14., ՀՍՍՀ ԳՍ հրատ., 1987, էջ 265:

³³ Տե՛ս՝ Ոչ մի շաբաթ առանց Թումանյանի, «Զանգակ»-97, ՄՊԸ 2019

խանցվում են բնությանը՝ հողին, ջրին, կամ, ինչպես բախունցյան պատմվածքներում./«Այու սարի լանջին»/ծլարձակում է խոտի, ծաղկի տեսքով: Ուստի մարդկային ամեն քայլ, ամեն արարք զգուշություն է պահանջում:

Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտքդ զգուշ դիր հողին.

Ով իմանա՝ որ սիրունի բիբրն ես կոխում թե հիմի»

Հեյ, ջան, մենք էլ զգուշ անցնենք, ով իմանա, թե հիմի

Էն սիրուհու բիբրն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի

Մերթ տիեզերական հեռուներին ձուլվելու անթաքույց բերկրանք, մերթ նարեկյան որոնումները հիշեցնող աստվածայինին մերձենալու անկարելիության ողբերգական ապրում և անհաս տենչանք: Այս դեպքում ասում են. «Միտքը փնտրում է աստվածայինը, բայց սիրտը չի գտնում»:

Աստեղային երազների աշխարհներում լուսակաթ,

Մեծ խորհրդի խոյանքների հեռուներում անարատ,

Անհիշելի վերհուշների մշուշներում նրբադոս՝

Երբեմն ասես, զգում եմ ես, թե կհասնեմ նրա մոտ:

Բանաստեղծական պանթեիստական հայացքին զուգահեռ Թումանյանը մաքուր քրիստոնյա է: Եվ չպետք է զարմանալ այս հակասականությունից: Այդպիսին էր թումանյանական էությունը՝ բազերանգ ու բազմաշերտ: Այո, բանաստեղծին անհնար է միանշանակ փիլիսոփայական որևէ ուսմունքի մեջ տեղավորել:

Քառյակներից մեկում Թումանյանը պատկերում է նույնիսկ ալտրու-իզմի հասնող, հանդուրժողության այնպիսի ցնցող պատկեր, և զուգահեռաբար, /ուրիշի մեղքը իր վրա կրելով/, այնպիսի խորը վիշտ և ապաշխարհանք, որ նույնիսկ քրիստոնեական ոչ մի գաղափարաբանության, ոչ մի ուսմունքում չես գտնի: Անգամ օրհնությամբ և աղոթքով բանաստեղծը փորձում է մեղավորության զգացում արթնացնել, փրկել թշնամու եղկելի հոգին: Այդպես կարող է մտահոգվել միայն տիեզերական բարձունքից նայող հայացքը, աշխարհը հայող միտքը: Եվ, կարծում ենք, հենց նման մտորումներով է ռուս քնարերգու-բանաստեղծուհի Բելլա Ախմադուլինան թարգմանել Թումանյանի այս քառյակը:

Երազումս մի մաքի,

Մոտս եկավ հարցմունքի,

Աստված պահի քո որդին,

Ո՞նց էր համր իմ ձագի:

Փիլիսոփայական մտորումները ի վերջո բանաստեղծին բերում են մահվան անհաղթահարելիության, մահկանացու լինելու ողբերգականության գիտակցման հաղթահարմանը: Մահը վախեցնող է, քանի որ մտածելի չէ, նրա բնույթը առեղծվածային է, միշդեռ առեղծվածայինը, կասկածելին ամենաստեղծ է, այս դեպքում՝ ամենասարսափելին: Մահը բա-

Ժանում է մարդու համար ամենաթանկ արժեքից՝ կյանքից: Սակայն ամեն անցնող օրվա հետ, ինչպես նկատում էր Բերդյանը, կյանքը մեզ վարժեցնում է բաժանումներին՝ միչև մեծ բաժանում: Ամեն օրվա հետ մենք մոտենում ենք մահվանը: Այս առումով մի շարք քառյակներ բովանդակում են բուդդիզմի փիլիսոփայությունից եկած այն գաղափարը, ըստ որի կյանքը և մահը շրջադարձային գոյաձևեր են: Երկրային ժամանակը և տարածությունը փոխվում է տիեզերականի և նորից շրջապատույտ է ապրում: Եվ Թումանյանի մշտապես հեռուներում թափառող միտքը ջանում է հասկանալ կյանքի և մահվան հարափոփոխ բնույթը: Անվերջ վերադարձի գաղափարի հիմնավորումամբ փորձում է մարդուն ազատել «հանցավոր մահվան» ողբերգականության ծանր վշտից:

Հազար տարով, հազար դարով, առաջ, թե ետ, ինչ կա որ
Ես եղել եմ կամ կլինեմ հուր հավիտյան ինչ կա որ
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի տիեզերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ:

Սակայն, որքան էլ դատապարտելի, այնուհանդերձ Թումանյանը գիտի, որ հենց մահն է կյանքի և աշխարհի նորացման պայմանը, այլ կերպ շրջագծում սկիզբը և վերջը հատվում են նույն կետում:

Հին աշխարհը ամեն օր,
հազար մարդ է մտնում նոր
Հազար տարվա փորձ ու գործ
Սկսվում է ամեն օր:

Իհարկե «սիզիպոսյան աշխատանքը» մարդուն այնքան էլ հաճելի չէ, բայց թեկուզ մի պահ բարձրունքին հայտնվելու բերկրանքը արդեն իմաստավորում է կյանքը: Եվ անհաղթահարելի բարձրունքը նվաճելու /նույնն է թե, երազանքը իրականացնելու/ պահի բերկրանքը տրվում է մարդուն որպես անվերջ վեր ձգտելու կամքի և երազանքին հասնելու անդուլ ջանքերի փոխհատուցում: Եվ այստեղ, թերևս, կարող է հնչել մեծ նաև գերմանացու խոսքը՝ «Կանգ առ ակնթարթ, դու չքնաղ ես»:/Գյոթե/

Թումանյանին հայտնի է, որ մահվան և կյանքի առեղծվածի որոնումը հատուկ է նաև բոլոր մեծերին, և բանաստեղծը անկախ ժամանակից ու տարածությունից, մշտապես խորհրդածում է նրանց հետ /գուցե նաև իր հարուստ գրադարանի գրափեղկերից նայող հատորների տեսքով/:

Բազմաձև են շուրջըս նրանք ամեն օր
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհի.
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:

«Ինչու է մարդը այսքան մեղսավոր, աշխարհը այսքան անկատար»
նարեկյան հարցադրմանը Թումանյանը փորձում է պատասխանել

աշխատանքային յուրօրինակ դեխտական հայացքով՝ Աստված աշխարհը արարել է և թողել է մարդու կամքին, այլևս չի խառնվում նրա գործերին, որպեսզի մարդը աշխարհը և իրեն դարձնի այնպիսին, ինչպիսին ինքն է ուզում: Մակայն մարդու ջանքերը ապարդյուն են, քանի որ ամեն օր անպակաս է չարիքը, աղետն ու բարոյական անկումը: Մարդը չի կարող միայնակ, առանց Աստծո օգնության, բարեփոխել աշխարհը և ինքն իրեն: Եվ Նարեկացու պես Թումանյանի կոնվին է մարդուն վերադարձնել իր աստվածակերպար էությանը: Ինչպես Նարեկացին, Թումանյանը ևս, փորձում է Աստծո հետ խոսել մարդու մասին: Մարդու հետ Աստծո: Ուրիշ խոսքով՝ դառնալ միջնորդ մարդու և Աստծո միջև: Մակայն, որքան էլ միտքը թափառում է անհուններում, միևնույնն է, սիրտը տառապում է ամենքի ցավով, հայոց աշխարհի անհուն վշտով:

Մերթ

Զուր եմ փախչում, ինձ խաբում,

Հազար կապ է ինձ կապում,

Ամենքի հետ ապրում եմ,

Ամենքի չափ տառապում:

Մերթ՝ նորից վերադարձ.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.

Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

«Ամենայն հայոց բանաստեղծը» իրոք, «Ժամանակի մեջ է և Ժամանակից դուրս», ամենքի հետ է և ամենքից հեռու: Թումանյանը ավելի քան ներկա է մեր կյանքում: Եվ իր եզակիությամբ, իր օրինակով հաստատում է անմահության շուրջ փիլիսոփայական այն հետևությունը, ըստ որի՝ մարդը որպես անհատ մահանում է՝ որպես անհատականություն մնում է իր գործերով: Բանի որ «Իրապես գոյություն ունեցողը եզակին է» - այդ գիտելին նաև հին հույները: Իսկ Թումանյանը ուղղակի գրում է՝ «Գործն է անմահ լավ իմացք...», «Մեր էությունը լի է Թումանյանով, նրա ոգով ու շնչով, թումանյանական խոր թախիծով ու պայծառ ծիծաղով»:/Հրաչյա Քոչար/

«Թումանյանը ամեն ինչ ասել է մեր փոխարեն»:/Հ. Մաթևոսյան/ Հավելենք՝ հոգսաշատ կյանքով ապրող հայ մարդու փոխարեն, վիշտը և կարոտը սրտում թափառող պանդուխտի, ավանդույթների, կույր հավատքի նախապաշարմունքների զոհերի, պազմիտ հայ գյուղացու և միաժամանակ տիեզերական գաղտնիքներ չափող մտքի մեծերի փոխարեն: «Թումանյանը մենք ենք, առանց Թումանյան մենք չկանք.» /Հր. Մաթևոսյան/ Թումանյանը մշտապես ներկա է ոչ միայն ամենայն հայոց բանաստեղծ, այլև համաշխարհային ճանաչման արժանի մեծություն:

Թումանյան-անհատականությանը առավել դիպուկ բնորոշում չարենցյան քառատողը՝

Նա մեծ էր ավելի, քան եղավ:— Երկրնքի նման ընդարձակ,

Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր։—
 Եվ ոգու ավերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ —
 Եվ որսում էր երգեր ու խոհեր, և տեսնում էր չքնա դ երազներ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Թումանյանական բազմաժանր ստեղծագործություններից հենց քառյակներն են, իրենց սեղմ խոսքի բովանդակային խորությամբ օգնում ճանաչել Թումանյան-բանաստեղծի աշխարհայացքի բնույթը: Հիշյալ հոդվածում փորձ է արվում անդրադառնալ դրանցում ամփոփված գրական-փիլիսոփայական մեկնություններին: Այսպես. Թումանյանին մտահոգել են մահվան և անմահության առեղծվածի, մարդու կեցության, նրա անկատար էության խնդիրները: Եվ ստեղծագործական բազմակերպ հնարքներով բանաստեղծը փորձում է փոխել խեղված իրականությունը, վերափոխել մարդուն:

Հոդվածում առաջադրվում է այն թեզը, որ Թումանյան-մտածողի մեջ միաժամանակ գոյակցում են երկու հակադիր էություններ՝ մի դեպքում կենսասեր, ամենքի համար բաց, ուրախ գրուցակից և ընկեր, մյուս դեպքում՝ ասկետիզմի հասնող մենակեցության ձգտող գոյի վիշով տառապող ողբերգակ: Մի դեպքում երևույթները պանթեիստական, երբեմն նաև դեիստական հայացքով քննող բանաստեղծ, մյուս դեպքում՝ մաքուր քրիստոնեական հավատքի և անգամ ալտրուիզմի դիքերից հայող փիլիսոփա: Եվ պետք չէ զարմանալ այս հակասականությունից՝ այդպիսին էր Թումանյանի էությունը՝ ամենքին հասկանալի և միաժամանակ բարդ, պարզ և միաժամանակ բազմերանգ ու բազմաշերտ: Հետևությունն այն է, որ Թումանյանին փիլիսոփայական ոչ մի ուսմունքի մեջ չես տեղավորի: Այս է պատճառը, որ չնայած հրապարակում առկա թումանյանական արվեստի բազմազան մեկնությունների, այնուհանդերձ, քառյակներում ամփոփված գաղափարական նորանոր շերտերի ամբողջական բացահայտումը մնում է մեծ ժամանակի խորհրդին:

Փիլիսոփայական դիտումով մարդը որպես անհատ մահանում է՝ որպես անհատականություն մնում: Այդ է հաստատում նաև «Արմատները հողում, հայացքը երկինք» Թումանյան –երևույթը:

Հիմնաբառեր. անմահության խորհուրդ, ստեղծագործական հավատամք, անհատական փորձառություն, ողբերգական ապրում, պանթեիստական հայացք, գեղարվեստական մտածողություն, «համազգային բանաստեղծ»

Օգտագործված գրականություն

1. **Նվարդ Թումանյան**, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969 «Լույս» հր. էջ 219:
2. **Հր. Թամրազյան**, Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Երևան, «Նաիրի» 1995, էջ 133:
3. **Ժենյա Քալանթարյան**, Ժամանակի միջով, ժամանակի հետ, Երևան, ԵՊՀ, 2021, էջ 47-48:
4. **Մկրտիչ Մկրյան**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր, 1981, էջ 118:
5. **Ղ. Դեմիրճյան**, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14., ՀՍՍՀ ԳՍ հրատ, 1987, էջ 265:

Сильва Оганнисян

кандидет филофоских наук, доцент

**ЛИТЕРАТУРНО-ФИЛИСОВСКИЕ РАЗМЫШЛЕНИЯ О
ЧЕТВЕРОСТИШАХ ОВАНЕСА ТУМАНЯНА**

Можно с убеждением сказать, что в разножанровых произведениях Туманяна именно четверостишия, своей лаконичной речью, помогают познавать характер мировоззрения поэта. В данной статье предпринимается попытка обращения к обобщаемым в них литературно-философским интерпретациям. Туманяна волновала тайна смерти и бессмертия, проблемы человеческого бытия, несовершенная природа человека, в котором еще побеждает зло и конечно, причинно-следственные связи исторически-трагической судьбы и нравственного упада нашего народа. При этом разными творческими приемами поэт пытался изменить искаженную действительность, преобразить человека. В статье выдвигается тезис о том, что в Туманян-мыслителе одновременно существуют две противоположные личности: в одном случае - жизнелюбивый, гостеприимный, открытый для всех собеседник и друг, в другом случае- ищущий уединение аскет, страдающий трагик-философ, в одном случае поэт, рассматривающий явления с пантеистической или деистической точки зрения, в другом случае философ, исходящий из основ чистой христианской веры и даже альтруизма. Следствием этого является то, что нельзя поместить Туманяна ни в какое философское учение. Именно поэтому, несмотря на различные трактовки, искусство поэта в публичном пространстве, полное раскрытие идейных пластов, суммированных в четверостишиях, остается делом большого времени. Говоря философским языком человек умирает как индивид, но остается как индивидуальность. Это подтверждает феномен Туманяна "Корни в почве, глаза в небо".

Ключевые слова: тайна бессмертия, творческое верование, индивидуальный опыт, трагическое переживание, пантеистический взгляд, художественное мышление, «народный поэт».

Silva Hovhannisyan

Northern University of Yerevan, Ph.D. of philosophy, associate professor

POETIC-PHILOSOPHICAL CONSIDERATIONS WITHIN THE HOVHANNES TUMANYAN'S QUATRAINS

Convicting that from Tumanyan's multi-genre works definitely the quatrains, with their profound depth of brief speech, help to recognize the nature of outlook of Tumanyan-poet, in the current article it has been trying to touch the philosophical interpretations included in them.

Thus. The death and immortality, the human social existence, her imperfect essence concerned Tumanyan.

And with numerous creative tricks poet is trying to change the distorted reality, to transform human. Within that scope he separates the approach that in the Tumanyan-notionalist simultaneously coexist two controversial essences, on the first hand biophile, opened for everybody, cheerful interlocutor and friend, on the other hand striving to loneliness even up to asceticism as a tragician suffering for grief of existing. On the one hand poet who examines the phenomena from the pantheistic, sometimes even from deistic approach, on the other hand as a philosopher looking from the clear Christian faith and even altruistic position. And there is no need to be surprised of this controversy, that is Tumanyan's nature, clear for everyone and sophisticated, simple as well, motely and multilayered at the same time. The inference is the following: we cannot place Tumanyan in any philosophical doctrine. That is the cause that despite currently existed numerous interpretations of Tumanyan's art, the complete opening of new ideological layers, contained in the quatrains, stays upon the judgment of the time.

From the philosophical view, human, as an individual, dies, but as an individuality - stays. The confirmation is in Tumanyan-phenomenon "Routs in the land, glance to the heaven."

Keywords: takeaway of immortality, creative faith, individual experience, tragic feeling, pantheistic approach, featured way of thinking, "nation-wide poet."

Ներկայացվել է՝ 14.02.2023 թ.

Հնդունվել է՝ 08.03.2023 թ.

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ

Նինա Դալլաքյան

Հյուսիսային համալսարանի Ալավերդու բաժանմունքի դասախոս
nina.dallakyan@mail.ru

Հոդվածը վերաբերում է հայ և համաշխարհային գրականության մեջ Հովհաննես Թումանյանի հսկայական ժառանգության մի շարք բնորոշ դրսևորումների: Նրա թողած հետքը առաջնորդում է մարդկային արժեքների կարևորության գիտակցման արահետներով: Թումանյանի ստեղծագործության արմատները նրա հայրենի Լոռու բնության մեջ են, և այդ բնության նման առատ է հունձքը ու մշտահիմա: Նրա հերոսը մարդն է, ուստի՝ մարդկայինը, արժեքավորը: Նրա փիլիսոփայության առանցքում կյանքի անցողիկության և անմահության ճշմարիտ ճանապարհի գաղափարն է. մարդու հոգին պետք է մաքրվի իր աստվածահաճո կյանքով:

Հ. Թումանյանը մեր գրականության հսկա լեռն է՝ «Արարատը մեր նոր քերթության»³⁴: Միշտ մտածում ենք, թե որքան թերի կլինեք հայ գրականությունը առանց Թումանյանի: «Աչքի պես պարզ ու աչքի պես բարդ» նրա ստեղծագործությունները թափանցում են մարդկային հոգու խորքերը՝ հուզում, ալեկոծում, մխիթարում, ոգևորում, դաստիարակում...

Նա, ծնված ժողովրդի ծոցից, լավ է հասկացել մարդկանց հուզող խնդիրները և վերցնելով նրանից այդ ամենը՝ վերամշակել է և գեղարվեստական գրականության ձևով նորից վերադարձրել ժողովրդին: Եվ մարդիկ իրենց հոգեհարազատ թեմաների մեջ տեսել են իրենց՝ ավելի լավ հասկանալով իրենց խնդիրները: Նրա ստեղծագործությունները մարդուն ուղեկցում են մանկուց մինչև հոգսաշատ ծերություն: Անգամ Լոռու բնությունը ապրում է թումանյանական ոգով:

Ականջ շոյող են նրա մանկական ստեղծագործությունները, որոնց հերոսները ոգի առած ուղեկցում են մեզ:

Լոռու բնությունը Թումանյանի ձեռքով կարծես վերածնվել է: Ահա Լոռու ձորը, որտեղով հոսում է Դև-Բեդը խելագար: Գուցե այն քարափից է Անուշը գետը նետվել: Անդնդախոր ձորեր, բարձրաբերձ լեռներ. ահա այս լեռներն են, դեմ առ դեմ կանգնած, անթարթ հայացքով իրար նայում: Գուցե այն սարում է «չոբան Սաքոն խելագարվել», իսկ քաջքերը՝ թաքնվել կիրճերում: Դսեղ այցելելիս ականա փնտրում ենք այն մենավոր ծառը, որի տակ թաղված է անբախտ Մարոն: Իսկ գյուղամիջում զրուցող ծերունիները հիշեցնում են «Հառաչանք»-ի ծերունուն: Գուցե գյուղից քաղաք իջնող հենց այս կածանով է Համբոն Գիքորին քաղաք տարել...

³⁴ Տե՛ս՝ **Հովհ.Թումանյան**, Երկերի Լիակատար Ժողովածու տաս հատորով, հ.1, Հայաստանի ԳԱԱ հրատարակչություն, 1988, էջ 6:

Եվ բնությունը նորովի է շնչում, ուրիշ է դառնում ու ավելի գեղեցկանում, երբ տեսնում ենք այն, ինչը գուցե չէինք տեսնի, եթե Թումանյանի գրիչը չանմահացներ հրաշք Լոռին: Նրա հեքիաթները լսելով են մեծանում մանուկները, դաստիարակվում մաքրությամբ, ազնվությամբ, քաջությամբ: Սրտի մի այլ մորմոքով ենք կարդում նրա հայրենասիրական թեմայով ստեղծագործությունները, խոհափիլիսոփայական գործերը: Վշտի, ցավի, ողբի, որբի հայրենիք Հայաստանը գուցե մի օր դառնա լույսի, հույսի հայրենիք, և ցնծա բանաստեղծի հոգին: Գուցե մի օր գա նրա երազած ժողովուրդների բարեկամությունը, որովհետև Մեծ լոռեցին, սպիտակ դրոշը ձեռքին, հենց դրա համար էր պայքարում, դրա համար էր համերաշխության և բարեկամության կոչեր անում:

Այրվում էր բանաստեղծի հոգին հայրենիքի սիրուց, և այդ սիրով է վարակվում ընթերցողը: Նրա խոհափիլիսոփայական գործերը օգնում են մարդուն գտնելու անմահության ճանապարհը: Նա սովորեցնում է ապրել աստվածային օրենքներով: Մարդն իր գործերով կարող է հավերժ ապրել. երանելի է այն մարդը, ով բարի գործեր է կատարում, իսկ չարը անիծված է, կործանված: Նրա քառյակները հրաշք են: Նրանցում ամփոփված է ճիշտ կյանքի ուղին՝ ամենալավ խորհուրդը այս կյանքում, այսինքն՝ մարդկային կյանքի սահմանադրությունը .

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,

Նենգ ու դավ եմ տեսել ես,

Տարել, ներել ու սիրել,—

Վատը լավ եմ տեսել ես:³⁵

Թումանյանը մարդուն սովորեցնում է ներել թշնամուն, վատություն անողին նույնիսկ սիրել, անգամ վատության մեջ էլ լավը տեսնելով՝ չչարանալ, ինչպես Աստված է սովորեցնում, «Ների՛ր մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեր պարտապաններին»:³⁶

Երազումըս մի մաքի

Մոտըս եկավ հարցմունքի.

— Աստված պահի քո որդին,

Ո՞նց էր համը իմ ձագի...³⁷

Ինչպիսի մեծահոգություն պետք է ունենա մարդ, որ Աստծուն աղոթի իր զավակին կործանողի համար: Դարձյալ, ինչպես աստվածային օրենքն է ասում, «Մի՛րի՛ր քո թշնամուն, աղոթի՛ր նրա համար»...

Ինչպիսի բարություն, ինչպիսի մեծահոգություն այս քառյակներում: Միայն Մեծ Մարդը կարող է այսպես ավանդել.

³⁵ Տես՝ **Հովհաննես Թումանյան**, Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես, «Երկերի Լիակատար ժողովածու, երկրորդ հատոր», 1994, էջ 21:

³⁶ Տե՛ս Տերունական աղոթք

³⁷ Տես՝ **Հովհաննես Թումանյան**, Երազումըս մի մաքի, «Երկերի Լիակատար ժողովածու, երկրորդ հատոր», 1994, էջ 22:

Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար,
կյանքդ կարճ,

Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.

Ի՛նչ են տարել նըրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ³⁸:

Հեղինակը այս կյանքը համարում է երկու օրվա ճանապարհ, որովհետև այն շատ կարճ է: Իսկ ազահ մարդու միտքը երկար է, մտածում է միայն այս երկրի վրա հարստություն կուտակելու մասին՝ չմտածելով, որ իր հետ ոչինչ չի տանելու իր ունեցվածքից: Քանի որ շատ արագ գալու է այս կյանքի վերջը, պետք է ապրել ուրախ ու խաղաղ կյանքով:

Մարդ պետք է իմանա, որ ինքը լոկ ճամփորդ է, ու այս աշխարհում բացի նյութական արժեքներից կան և հոգևոր արժեքներ, ու մարդը պետք է հաշվի առնի այդ ամենը: Կամ թե՛

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ,

Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վըռազ եղավ, անցկացավ.

Վըռազ անցան երազ, մուրազ, ու չըհասա ոչ մեկին,

Կյանքըս թեթև տանուլ տըված գըրազ եղավ, անցկացավ³⁹:

Այս կյանքում ամեն ինչ անցողիկ է. չկատարված երազանքները, նպատակները երազի նման տանուլ տված, գրազի նման անցողիկ են: Դարձյալ այս կյանքի անցողիկության, խաբուսիկության մասին է:

Մարդ պիտի մտածի իր արած գործերի և թողած գործերի մասին, քանի որ կա մի այլ՝ հոգևոր աշխարհ, որին պիտի արժանանալ.

Ո՞ր աշխարհքում ունեն շատ բան. միտք եմ անում՝

է՛ս, թե էն.

Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝

է՛ս, թե էն.

Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի.

Տանի՛, թողնի՛, — ո՞րն է բարին, ո՞ր սահմանում,

է՛ս, թե էն:⁴⁰

Ամեն ինչ անցողիկ է, սերունդները գալիս են ու անցնում: Կյանքի ճանապարհները ուր են տանում մարդկանց՝ անհայտ է մյուսների համար...

Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր.

Անդարձ ու հին ճամփաներ,

Ովքե՛ր անցան ձեզանով,

Ո՞ւր գընացին, ճամփաներ⁴¹:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 38:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 40:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 64:

Անցնում են բոլորը՝ բանաստեղծները, գեղեցկուհիները: Բոլորը: Պետք է զգույշ ապրել, չվնասել ոչ ոքի, որովհետև մի օր էլ մենք ենք անցնելու, և գուցե որոշ ժամանակ հետո հուշ էլ չմնա:

Մարդն իր կյանքում պիտի գոհացնի Ամենակարողին, Ստեղծողին: Դեպի Անհունը գնալու համար պետք է իմանալ երկրի ու երկնքի կապը, անմահության ճանապարհը:

Թումանյանը հասկացել էր այդ գաղտնիքը և իր ստեղծագործությունների հիմքում դա է դրել: Նա բանաստեղծական իր հրաշալի լեզվով ուսուցանում է մարդկանց ճիշտ ապրելու անհրաժեշտության և հոգու անմահության գաղափարը .

Զուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում⁴²:

* * *

Քանի՜ մահ կա իմ սրբտում,
Թափուր գահ կա իմ սրբտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.—
Մահի ահ կա իմ սրբտում⁴³:

Մահը անխուսափելի է, ու դա ահավոր է՝ անգամ թագավորներն են մահանում ,ու այդ ահը կա բոլորի սրտերում.

«Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:
Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երևե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար»...⁴⁴

Իր տված կյանքի դասերով նա ինքը դասվեց անմահների շարքը: Չգերազանցված մեծություն է Թումանյանը: Նրան դեռ կհիշեն բազմաթիվ սերունդներ, որովհետև նրա ստեղծագործությունները միշտ արդիական են, հավերժ մարդկային: Նա ազգային արժեքներից անցել է համամարդկային արժեքների աստիճանին: Գրում է ոչ միայն հայի մասին, հայի համար, այլև առհասարակ մարդու և մարդկայինի մասին: Թումանյանի ստեղծագործությունը կարդալով՝ մարդը խորհում է իր անցած և անցնելիք ճանապարհի մասին՝ ով է ինքը, ինչպես է ապրել, ուր է գնալու:

Շատերը դաստիարակվել և դաստիարակվելու են Թումանյանի ստեղծագործություններում թաքնված աստվածաշնչյան քարտեզներով...

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 18:

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

⁴⁴ Հովհաննես Թումանյան, Գործն է անմահ, լա՛վ իմացեք, «Երկերի Լիակատար Ժողովածու, չորրորդ հատոր», 1994, էջ 45:

Դա է հասարակ մահկանացուի՝ անմահության հասնելու ճանապարհը...
Ինքն էլ՝ միշտ լավատես խորհրդատու, երբ հրաժեշտ էր տալիս երկրային
կյանքին, իր շուրջը հավաքված հարազատներին հորդորում է.

-Ղո չաղ կացեք...⁴⁵

Եվ գնում է ձուլվելու հավերժությանը...

Ամփոփագիր

Թումանյանի հարուստ գրական ժառանգությունը երևելի է հայ և համաշխարհային գրականության անդաստանում: Ժողովրդական ակունքից սնված, ժողովրդական ակունքի իմաստությամբ ներծծված նրա ստեղծագործությունները սերունդներ են դաստիարակում վեհի, մարդկայինի համամարդկային անանց արժեքներով: Ապրելու կերպը արվեստով ուսուցանող նրա խոհափիլիսոփայական քառյակները ընթերցողին առաջնորդում են դեպի անմահության ճշմարիտ բարձունքները: Առաջնորդում են թումանյանական արահետներով:

Հիմնաքառեր. թումանյանական Լոռի, խոհափիլիսոփայական քառյակներ, կյանքի անցողիկություն, արժեք, աստվածային, անմահություն:

Օգտագործված գրականություն

1. Աստվածաշունչ:
2. Թումանյան Հովհ., Երկերի Լիակատար Ժողովածու տաս հատորով, հ.2, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1989, 647 էջ:
3. Թումանյան Հովհ., Երկերի Լիակատար Ժողովածու տաս հատորով, հ.4, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991, 645 էջ:
4. Թումանյան Նվարդ, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969:
5. Սահակյան Վ., Ներսիսյան Ռ., Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին, Երևան, 2005, 65 էջ:

ПО ТУМАНЯНСКИМ ТРОПАМ

Даллакян Нина

Преподаватель Алавердского отделения Северного университета

Богатое литературное наследие Туманяна проявляется в армянской и мировой литературе. Его произведения, питаемые народным происхождением, проникнутые мудростью народного начала, воспитывают поколения благородными, общечеловеческими ценностями.

⁴⁵ Տե՛ս Թումանյան Նվարդ, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969,

Ключевые слова: туманянский Лори, философские четверки, быстротечность жизни, ценность, божественность, бессмертие.

THROUGH TUMANIAN TRAILS

Dallakyan Nina

Lecturer of Alaverdi Department of Northern University

Tumanyan's rich literary heritage is evident in the Armenian and world literature. His works nourished by the folk origin, imbued with the wisdom of the folk origin, educate generations with the noble, universal values of humanity.

Keywords: Tumanian Lori, philosophical fours, transience of life, value, divine, immortality.

Ներկայացվել է՝ 18.02.2023 թ.

Ընդունվել է՝ 15.03.2023 թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՏՔԻ ԳՈՀԱՐՆԵՐՈՒՄ

Սարգսյան Նարինի

Հյուսիսային համալսարանի մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
hyusisayinhamsaran2000@gmail.com

Կնյազյան Արուսյակ

Հյուսիսային համալսարանի «Բանասիրության և
մանկավարժության» ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

Յուրաքանչյուր ազգի գոյատևման և զարգացման անկյունաքարերից մեկը դպրոցն է, որտեղ կրթվում և զարգանում են մատաղ սերնդի միտքն ու հոգին: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ճանաչի իր երկիրը, նրա վարքն ու բարքը: Իսկ դրա համար հարկավոր է սովորել: Բանն այն է, որ չպետք է պարտադրել աշակերտին սովորել միայն մատուցված նյութը: Ուսուցիչն էլ աշակերտի հետ դառնալու է նյութի քննարկողը: Դպրոցում է, որ աշակերտի, ապագա քաղաքացու մեջ ձևավորվում են իմացական կարևոր հմտություններ, իմաստալից եզրահանգումներ կատարելու կարողություն և սեփական կարծիք ձևավորելու հաստատակամություն: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են ներկայացնում: Հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:¹

Գրելը, կարդալը, բանավոր կապակցված խոսք կառուցելը կրթության հիմնական ունակություններն են, որոնցով մարդը դրսևորվում է ողջ կյանքում: Այս ունակություններին համապատասխան մակարդակով տիրապետելու համար կարևոր դեր են կատարում մայրենիի դասաժամերը, որոնց ընթացքում ուսումնասիրվում են նաև դասագրքերի մեթոդական կառույցի օժանդակ բաղադրիչ հանդիսացող նյութերը, որոնց նպատակային յուրացումը նպաստում է երեխայի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքի՝ իբրև հաղորդակցման միջոցների զարգացմանը, ազդում մտածողության, բնավորության գծերի ձևավորման վրա:

¹ Տե՛ս file: ///C:/Users/User/Desktop/7e6a7aba86a48723694b2f808bc0cb32%20(1).pdf

Այսօր հանրակրթական դպրոցում առաջնային է սովորողների արժեքային կողմնորոշումների, արժեհամակարգի ձևավորումը, որն ապահովում է անձի ընդհանուր զարգացումը, վարքի ձևավորումը:

«Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդի ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»: Այս խոսքերը պատկանում են այն հանճարեղ բանաստեղծին, ով դարձավ մեր ժողովրդի լուսատու լապտերը, հայ գրականության ամենափայլուն աստղը:

Հայ ժողովրդի բառ ու բանով, դարձվածքներով հարուստ է մեծն Թումանյանի գրիչը: Նրա դերակատարումը այսօր էլ հույժ կարևոր է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգությունը բացառիկ կարևոր տեղ է գրավում հայ բազմադարյան գրականության և ողջ հոգևոր մշակույթի պատմության մեջ: Ինչպես իր գեղարվեստական երկերով, այնպես էլ գրական-քննադատական և հրապարակախոսական գործունեությամբ Թումանյանը XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գրականության և ամբողջ հասարակական կյանքի խոշորագույն, կենտրոնաձիգ դեմքերից է, որի շուրջն էին համախմբվում հայրենի մշակույթի բոլոր առողջ և առաջադեմ ուժերը:

Նրա ստեղծագործություններն ունեն ոչ միայն համազգային, այլև համամարդկային բովանդակություն, գեղարվեստական վիթխարի ընդհանրացումներ: Թումանյանի թողած գրական ժառանգությունը դարձավ իր հայրենիքի անցյալի ու ներկայի, նրա հոգևոր ուժերի և գեղարվեստական ավանդույթների լավագույն, ամենախոր մարմնավորումը:

Դարեր շարունակ հայրենասիրական թեմայով շատ երկեր են գրվել, բայց Թումանյանի գործերը իրենց խոր գաղափարական իմաստով և թե բարձր արվեստով մինչև այժմ էլ դեռ մնում են անգերազանցելի: Հ. Թումանյանի բոլոր ստեղծագործությունների գաղափարական հիմքը ամբողջովին տոգորված է հայրենասիրությամբ, մարդասիրությամբ, ժողովուրդների բարեկամության, խաղաղ կյանքի ու ազատ աշխատանքի երազանքով: Հ. Թումանյանի՝ հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործությունների ուսուցման նպատակն է աշակերտների գաղափարական ու գեղագիտական դաստիարակումը, նրանց մեջ հայրենիքի, նրա ժողովրդի, լեզվի ու խոսքի նկատմամբ սեր դաստիարակելը: Ե՛վ երեկվա, և՛ այսօրվա աշակերտը, հայրենասիրական ոգով ներշնչված, կմարմնավորի մեր երկրի բարձր գաղափարայնությունը և մարդասիրությունը ու կդառնա համաժողովրդականի, համամարդկայինի բարձրագույն աստիճանը: Հ. Թումանյանի՝ հայրենիքին նվիրված ստեղծագործությունների ուսուցումը դպրոցում կատարվում է տարբեր փուլերով, յուրաքանչյուր փուլում անցում է կատարվում դասարանից դասարան:²

² Տե՛ս file :///C:/Users/User/Desktop/7e6a7aba86a48723694b2f808bc0cb32%20(1).pdf

Հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցման ժամանակ կարևորվում է կենդանի խոսքը՝ գեղեցիկ ասմունքը, ընթերցումը: Հայրենասիրությունը Թումանյանի բանաստեղծական հանճարի ամենաբարձր արտահայտություններից մեկն է, որը կենտրոնական տեղ է գրավում նրա ստեղծագործական համակարգում: Թումանյանի հայրենասիրական թեման բացատրելու ժամանակ պետք է նշել, որ նա իր բոլոր հայրենասիրական բանաստեղծություններում, հեքիաթներում, քառյակներում բացում է իր հույզերը, պատմում իր հոգու անդիմադրելի ձգտման մասին՝ վերադառնալ հայրենի չքնաղ երկրի գիրկը, ձևավորում են հայրենասիրական արժեքներ:

Թումանյանը իր հրապարակախոսական երկերում քննադատել է տգիտությունը, խավարամտությունը, բարձր գնահատել կրթությունն ու արժանապատիվ ուսուցիչներին: Դիմելով երեխաներին, ասում է. **«Դուք պետք է ճանաչեք ձեզ. իրեն ճանաչելը ամենամեծ հաղթանակն է: Չպետք է մեծամտել. երեխայի ամենամեծ թշնամին մեծամտությունն է ներքին կարողության»:** Թումանյանին կամքի ուժ տվող կարևոր հոգեբանա-մանկավարժական գործոններից մեկը լավատեսությունն էր: Նրա ստեղծագործությունները սովորողներին ուժ, կամք են տալիս, նրա հերոսներն ուղղորդում են, սովորեցնում, զգուշացնում, մատնացույց անում արատներն ու կյանքի վատ կողմերը: Կարող ենք արձանագրել, որ հասարակության կորիզը առողջ, արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական քաղաքացին է: Իսկ այդ բարդագույն խնդրի լուծման ճանապարհին Թումանյանի խոսքն ու գաղափարներն իսկանան օգնություն են ուսուցչին, քանի որ իրենց մեջ ունեն վեհ գաղափարների գովերգում, վատի ու արատավորի դատապարտում:

Բանաստեղծն ինքն էր օժտված մեծագույն մարդկային, բարոյական, հումանիստական, ազգասիրական արժեքներով, և անհնար է այս արժեքները չնկատել իր իսկ ստեղծագործություններում: Թումանյանի գրական անգին ժառանգության մեջ առանցքային տեղ են գրավում դպրոցին, ուսուցչին և մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վերաբերող հարցերը, որոնց մեջ բարձրացված գաղափարներն այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը: Թումանյանն այն եզակիներից էր, ով համարում էր, որ պարզ ու մաքուր գրականությունը, դրա մեջ լավի բարու գովերգումն ունակ է բարձր արժեքներ սերմանել մատաղ սերնդի մեջ: **«Կարծում են հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը, դա ամենադժվար գործն է, երեխայի հոգու հետ գործ ունենալ, պարզ ու հասկանալի պիտի տալ, զգույշ ու նուրբ պիտի մոտենալ, գեղեցիկ ու անպայման ճաշակով պիտի հրատարակել»** - ասել է բանաստեղծը: Թումանյանական խոսքը տարիք չի ճանաչում. միջին դպրոցում ավելի խորքային ուսումնասիրելով մեծն բանաստեղծի գրական ժառանգությունը՝ սովորողներն արդեն ուրիշ աչքերով են նայում բանաստեղծի գաղափարներին, ավելի հասուն ու խորքային են ընկալում ու հասկանում գրողի կոչերը, հորդոր-

ներն ու կյանքի դասերը: Հայրենաճանաչության, հայրենասիրության, մարդասիրության, լավի, բարու, պարկեշտի ու ազնվության օրինակներն անսպառ են թումանյանական պոեզիայում: Նրա մաքրամաքուր գրականությունը մեծապես ներգործում է դեռահասության տարիքի սովորողների՝ աշխարհի նկատմամբ ունեցած պատկերացումների վրա: Ամեն մի ստեղծագործություն ունակ է մի նոր արժեք, մի կարևոր դաս տալ սովորողին, ստիպել վերանայել սեփական վարքը, սկզբունքներն ու համոզմունքները:

Թումանյանի համոզմամբ հարկավոր է գիտակցել աշակերտի մեջ բարձր մարդկային որակներ՝ արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն ձևավորելու կարևորությունը: Այս ճանապարհին, վստահաբար, շատ կօգնի հայը, գրողը, մարդը, քաղաքացին, հայրենասերը, հումանիստը՝ մեծն Թումանյանը, ով իր հայրական պատգամներով, դիպուկ ու ժողովրդական բառ ու բանով, դարձվացքներով հարուստ ստեղծագործություններով այսօր էլ կանգնած է մատաղ սերնդի դաստիարակության գործի ակունքներում: Պետք է գիտակցենք, որ Թումանյանն իսկապես եզակի էր, հանճար...

Ուշ-ուշ են գալիս, բայց ո՛չ ուշացած, ծնվում են նրանք ճիշտ ժամանակին

Եվ ժամանակից առաջ են ընկնում, դրա համար էլ չեն ներում նրանց:

Պ. Սևակ

Որ դասարաններում էլ որ Թումանյանի հայրենասիրական թեմայով ստեղծագործությունները ուսումնասիրելիս լինեն, շեշտը դնելու են «դեպի վեր» խոսքերի վրա, քանի որ այս խոսքերը խորհրդանշում են հայ ժողովրդի պատմության ընթացքը դեպի մարդկային բարձր, վեհ նպատակների իրագործում:³

Հովհ. Թումանյանը մշտապես մտահոգված էր նոր դասագրքեր կազմելու անհրաժեշտությամբ՝ հատկապես տարրական դասարանների համար: Նա հաճախ էր մամուլում հանդես գալիս դասագրքեր կազմելու, իր երկերը դասագրքերում աղավաղելու, նաև այլ կարգի թերությունների հարցերով: Եվ ահա 1907թ. Անդրկովկասյան ուսումնական հոգաբարձության թույլտվությամբ մեկնարկվում է «Լուսաբեր» դասագրքի հրատարակումը՝ Ստ. Լիսիցյան, Հովհ. Թումանյան, Լ. Շանթ և Վրթ. Ախիկյան խմբագրական կազմով:

Թումանյանը համոզված էր, որ դասագրքերի բարեփոխությունները կարևոր և առանցքային դեր ունեն ուսուցչի հետագա գործունեության վրա՝ հատկապես՝ երեխային նոր գիտելիքներ և մնայուն արժեքներ փոխանցելու հարցում: Հատված «Լուսաբեր» դասագրքից՝

³ Տե՛ս file:///C:/Users/User/Desktop/7e6a7aba86a48723694b2f808bc0cb32%20(1).pdf

«Խոսքը նրա վրա է, թե ինչու են դասագրքերը բարեփոխվում... թե մի հայոց լեզվի դասատու ինչեր կարող է ասել հայոց լեզվի դասագրքի և նրա բարեփոխության մասին: Պարոն Շահան-Սիմոնը դեմ է դասագրքի բարեփոխությանը: Ասում է՝ բարեփոխելու դեպքում աշակերտը ստիպված պետք է լինի ձեռքի հինը թողնի, նոր տպագրությունն առնի, իսկ եթե չառնի, ուսուցչին դժվարություն կպատճառի խմբական ընթերցանության ժամանակ: Եվ մի կարճ միջոց է առաջարկում, խորհուրդ է տալիս էն տեսակ դասագիրք հորինել, որ ապագայում էլ ստիպված չլինեն բարեփոխելու:»⁴

Հովհ. Թումանյան

«Դասագրքերի բարեփոխման խնդիրը», 1913

«Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ»:

Հովհ. Թումանյան

«Դպրոց և գրականություն», 1913

«...ի՞նչ կնշանակի դպրոց ու գրականություն: Դպրոց՝ կնշանակի ուսուցիչ, գրականություն՝ կնշանակի գրող: Եվ ուժեղ դպրոց ու գրականություն ունենալ, կնշանակի ուժեղ ուսուցիչ ու գրող ունենալ: Էս է պարզը: Եվ էսպես են հասկացել էն ազգերը, որոնք կարճ ժամանակում մեծ հառաջադիմություն են արել, և սրա մեջն է նրանց արագ, գրեթե հանկարծակի ուժեղանալու գաղտնիքը»:

Հովհ. Թումանյան

«Մեծ տոնը և հայ ուսուցիչն ու գրողը», 1913

«... եթե դպրոցը ուսուցիչն է, ապա պետք է արժանին մատուցել նրան, պետք է լուծել հայ ուսուցչի ապահովության խնդիրը, այլապես ոչ միայն նա կփախչի դպրոցից, այլև կփախցնի իր գավակներին՝ տալով օտար դպրոցներ, որ նրանք գերծ լինեն «Ազգային մշակույթի անդաստանում աշխատողների չարքաշ կյանքից»:

Հովհ. Թումանյան

«Մեծ տոնը և հայ ուսուցիչն ու գրողը», 1913

«Ուսումնարան ասելով ավելի շուտ շենքն են հասկանում, քան թե ուսուցիչ ու աշակերտ: Եվ էդ հասկացողությունն է խոր պատճառը, որ ուսուցիչը մեզանում էնքան հաճախ ու հեշտ ենթարկվում է զրկանքի, հալածանքի ու արհամարհանքի: Ուսումնարանի գաղափարը նրա հետ չի կապված, այլ շենքի»:

Հովհ. Թումանյան

«Ձևն ու հոգին», 1910 թ.

⁴Տե՛ս file:///C:/Users/User/Desktop/%D4%B9%D5%B8%D6%.pdf

«Հերիք էր ինչքան տանջվեց ու տառապեց հայ ուսուցիչը, հերիք էր ինչքան տուժեց սովորող սերունդը, հերիք էր, ինչքան ալեկոծվեց ու կարգ պահանջեց հասարակությունը»:

Հովհ. Թումանյան
«Ընդհանուր ուսուցչական խնդիր», 1910

Մատաղ սերնդի դաստիարակության գործում Հովհ. Թումանյանը մեծ կարևորություն է տալիս խաղին. «Խաղը մարդու օրինական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»: Հենց այդ նպատակով էլ տարրական դասարաններում (հատկապես՝ առաջին) հարկավոր է ավելի շատ կազմակերպել ուսուցողական խաղեր: Ուսուցիչը պետք է իմանա, որ խաղի բովանդակությունը և կանոնները պետք է հասկանալի լինեն երեխաներին, խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի աշակերտների գիտելիքների մակարդակին, խաղերը պետք է լինեն կոնկրետ և նպատակային, իսկ դրանց քանակն ու տևողությունը՝ չափավոր: Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը:

Մանկական գրականության հարուստ գոհարներին զուգահեռ 1915 թ. Հովհ. Թումանյանը կազմում և հրապարակում է մոտ մեկ տասնյակի հասնող **զարգացնող խաղեր**:

Բանաստեղծի նպատակն էր «հայրենագիտական»՝ իր բնորոշումն է, խաղերի միջոցով երեխաներին բացահայտել իրենց հայրենիքը, բնությունը, ժողովրդական առաձներն ու ասացվածքները: Թումանյանը գրում է՝ «Մենք անծանոթ ենք մեր հայրենիքին, նրա բնությանը, նրա կյանքին, նրա անցյալին ու ներկային: Մեր պատմության էս սև ու դժբախտ ժամանակի շրջանում, շատ ու շատ լավ սովորությունների հետ, մենք թողել ենք և մեր ազգային գեղեցիկ ու իմաստալի խաղերը, մոռացել ենք նրանց ահագին նշանակությունն ու ազդեցությունը կյանքի մեջ: Մա ժամանակավոր թմրություն է, որից հետո մենք մտնում ենք վերածնության, վերանորոգության, կազդուրման նոր, կենդանի, աշխույժ, առողջ ու ոգևորիչ շրջանը»:⁵

Խաղերը ստեղծելուց առաջ Թումանյանը «Ազգ» վերնագրով մի տեղեկատվություն էր հրապարակել՝ մանուկների կրթության և դաստիարակության հարցում կարևորելով խաղի դերը: «Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ... ահա էստեղ էլ հարց է առաջ

⁵Տե՛ս file:///C:/Users/User/Desktop/haroyan-grigoryan.pdf

գալիս՝ ի՞նչ սնունդ տալ և ի՞նչ ձևով տալ: Եվ ամեն բան, ինչ որ տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում»:⁶

Հովհ. Թումանյանի համոզմամբ՝ մանկական խաղերը պետք է ուրախացնեն, զվարճացնեն, հաճելի լինեն երեխային և անպայման հարստացնեն նրա միտքը, «բան սովորեցնեն»: Հովհ. Թումանյանի ստեղծած խաղերն ունեն երեխաների ինչպես շարժողական ունակությունները զարգացնելու, այն է՝ ֆիզիկապես զարգացնող, այնպես էլ դիդակտիկ՝ ուսուցողական բնույթ («Առաջին խաղ», «Աստղերի խաղ», «Գույների խաղ», «Հանելուկներ», «Հայկական առածներ», «Հայոց գետերը», «Աստղերի խաղը», «Դդումը», «Տառերի խաղ», «Սրամիտ հովիվը»):⁷

Թումանյանը անհրաժեշտ էր համարում խաղի միջոցով երեխային տեղեկություններ տալ շրջապատող աշխարհի, իրական երևույթների մասին. «Մենք անծանոթ ենք մեր հայրենիքին, նրա բնությանը, նրա կյանքին, նրա անցյալին ու ներկային: Մեր պատմության էս սև ու դժբախտ ժամանակի շրջանում շատ ու շատ սովորությունների հետ, մենք թողել ենք և մեր ազգային գեղեցիկ ու իմաստալի խաղերը, մոռացել ենք նրա ահագին նշանակությունն ու ազդեցությունը կյանքի մեջ: Մա ժամանակավոր թմրություն է, որից հետո մենք մտնում ենք վերածնության, վերանորոգության, կազդուրման, նոր կենդանի աշխարհ առողջ ու հոգևոր շրջանը»:

Կարևորելով հայեցի դաստիարակությունը՝ Հովհ. Թումանյանը հայ մտավորականի, արվեստագետի գերագույն նպատակը համարում էր հայրենիքին ու ժողովրդին նվիրված կիրթ քաղաքացու դաստիարակությունը, քաղաքացի, որի բնորոշ գծերից են նաև մարդասիրությունը, ազնվությունը, համեստությունը: Մեկ այլ տեղում մեծ մարդասերը խաղերի դաստիարակչական նշանակության մասին գրում է. «Կաշխատենք խաղերի միջոցով ծանոթություն տալ թե՛ Հայաստանի, թե՛ Կովկասի ջրերից, լեռներից, լճերից, կենդանական ու բուսական աշխարհից, որ մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը: Սիրեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից ինտիլիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի առողջ ու բովանդակալի»:

Թումանյանի՝ մանուկների համար հորինված խաղերի մեջ կա աստղային երկնքի մասին մի խաղ, որը բնութագրելիս բանաստեղծը գրում է. «Հաճախ նայեցեք երկնքին: Ձեր հոգին կմեծանա ձեր սիրտը կազնվանա: Մարդիկ միշտ ցած նայելով հոգով են ցածրանում»: Այդ խաղը համարվում է Թումանյանի կազմած խաղերից ամենաբարդը և որոշակի տարիքային հասունություն է պահանջում:

Ընդհանրացնելով նկատենք, որ Հովհ. Թումանյանը երեխաների համար հավաքեց և մշակեց ժողովրդական բանահյուսության հոգևոր

⁶Տե՛ս file:///C:/Users/User/Desktop/a8939e9374fbb2d6984cce4e8d5126f1.pdf

⁷ Տե՛ս file:///C:/Users/User/Desktop/a8939e9374fbb2d6984cce4e8d5126f1.pdf

գանձերը՝ ստեղծելով հայրենագիտական խաղեր այդ հարցում դրսևորելով ոչ միայն նրբամիտ գեղագետի հատկություններ, այլ նաև մանկավարժական խորաթափանցություն և հոգեբանի խոր ունակություններ: Թումանյանը համոզված էր, որ երեխաների համար խաղը անհրաժեշտություն է, մանկության պարտադիր ուղեկից, որովհետև խաղի միջոցով միայն կարելի է զարգացնել երեխայի միտքը, ձևավորել բարոյական որակներ, հաղորդել նրան բազմապիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի առարկաների, երևույթների մասին: Մեծ բանաստեղծի հորինած խաղերն այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը, ավելին՝ դրանք լայն տարածում են գտել հայկական դպրոցներում՝ շարունակելով պահպանել իրենց կրթական և դաստիարակչական ազդեցությունն ու նշանակությունը:

Այսպիսով՝ Թումանյանը ի մի բերեց հայոց հետմիջնադարյան պատմությունը՝ չունենալով հավասարը իր նախորդներից և ժամանակակիցներից: Այդպիսին ամեն ազգ միայն մեկն է ունենում: Ռուսների համար՝ Նա Պուշկինն է, ուկրաինացիների համար՝ Շեքեչևսկին, վրացիների համար՝ Ճավճավաձեն, գերմանացիների համար՝ Գյոթեն, անգլիացիների համար՝ Շեքսպիրը:

Մեզ համար միայն ու միայն Թումանյանը: Նա դարձավ այն հոգևոր ավագանը, որի մեջ մկրտվեցին մեր հետագա գրական սերունդները: Նա իր ուսերին է կրում մի ամբողջ մշակույթը: Եվ ինչպես ասվել է.

«Նա է անհաս Արարատը մեր նոր քերթության»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր ազգի գոյատևման և զարգացման անկյունաքարերից մեկը դպրոցն է, որտեղ կրթվում և զարգանում են մատաղ սերնդի միտքն ու հոգին: ԵՎ բնականաբար այս կարևորագույն գաղափարն է դրված ականավոր գրող, հասարակական գոծիչ, ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի ստեղծագործությունների հիմքում: Թումանյանի համոզմամբ հարկավոր է գիտակցել աշակերտի մեջ բարձր մարդկային որակներ՝ արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն ձևավորելու կարևորությունը: Թումանյանը համոզված էր, որ դասագրքերի բարեփոխությունները կարևոր և առանցքային դեր ունեն ուսուցչի հետագա գործունեության վրա՝ հատկապես՝ երեխային նոր գիտելիքներ և մնայուն արժեքներ փոխանցելու հարցում:

Հիմնաբառեր. մանկավարժություն, կրթություն, դպրոց, ուսուցիչ, դասագիրք, աշակերտ, դաստիարակություն, մարդասեր, բանաստեղծ, հայրենասիրություն, բարեփոխում, դիդակտիկ խաղեր, խրատական առակներ:

Օգտագործված էլեկտրոնային ռեսուրսներ

file:///C:/Users/User/Desktop/7e6a7aba86a48723694b2f808bc0cb32%20(1).pdf
 file:///C:/Users/User/Desktop/a8939e9374fbb2d6984cce4e8d5126f1.pdf
 file:///C:/Users/User/Desktop/%D4%B9%D5%B8%D6%.pdf
 file:///C:/Users/User/Desktop/haroyan-grigoryan.pdf
 file:///C:/Users/User/Desktop/a8939e9374fbb2d6984cce4e8d5126f1.pdf
 file:///C:/Users/User/Desktop/a8939e9374fbb2d6984cce4e8d5126f1.pdf

ПЕДАГОГИКА В АЛМАЗНЫХ МЫСЛЯХ ОВАННЕСА ТУМАНЯНА

Одним из краеугольных камней выживания и развития каждой нации является школа, где воспитываются и развиваются ум и душа молодого поколения. И, естественно, эта важнейшая идея (мысль) стала основой произведений выдающегося писателя, общественного деятеля, поэта О.Туманяна. По мнению Туманяна, необходимо осознать важность формирования у школьника высоких человеческих качеств: справедливости, честности, гуманности. Туманян был убежден, что реформы учебников имеют важную и ключевую роль в будущей деятельности учителя, особенно в плане привития ребенку новых знаний и непреходящих ценностей.

Ключевые слова: педагогика, образование, школа, учитель, учебник, ученик, воспитание, гуманист, поэт, патриотизм, реформа, дидактические игры, поучительные притчи.

PEDAGOGY IN HOVHANNES TUMANYAN'S "DIMOND THINKS"

One of each nation development and existance is cornerstone school , where the young generation mind and soul develop. Consequently, this important idea lies in a notorious writer, public figure , the greatest armenian writer Hovhannes Tumanyan's works.

Due to him we should be conscious to create in pupuls human qualities , fair-mindedness, honesty, philanthropizm. Tumanyan was sure, that reformations in text - books are of great importance, crucial in teacher further activity , especially in transferring new knowledge and long- lasting values to pupuls.

Keywords: pedagogy, education, school, teacher, textbook, student, upbringing, philanthrop poet, patriotizm, reform, didactic games, instructive subjects .

Ներկայացվել է՝ 12.02.2023 թ.

Ընդունվել է՝ 28.03.2023 թ.

Նունե Մկրտչյան

Հյուսիսային համալսարանի լեզուների, գրականության
և լրագրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ
nunemkrtchyan.69@mail.ru

Սիրուշ Հովսեփյան

Հյուսիսային համալսարանի IV կուրսի ուսանողուհի

**«ԼՈՒՍԱԲԵՐ» ԴԱՍԱԳԻՐՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ**

Հովհաննես Թումանյանի բանաստեղծական հունձքը լի էր հայրենասիրական, լիրիկական ու խոհական երգերով, սակայն իր ստեղծագործական ընթացքի մեջ առանձնանում էր նրա ամենամեծ շնորհը՝ մանկագրությունը: «Մանկական գրականության ասպարեզ մտնող հեղինակը պետք է հաշվի առնի ընթերցողի տարիքային բոլոր առանձնահատկությունները, հակառակ դեպքում նա կստեղծի մի գիրք, որը հասցե չի ունենա և պետքական չի լինի ոչ երեխային, ոչ էլ մեծին»⁸:

Թումանյանը ուսուցման ու դաստիարակության համար առաջնակարգ նշանակություն էր տալիս մանկական գրականությանը: Գրողի մանկագրության ակունքը մի վարար աղբյուր է, որը շատերի ծարավն է հագեցրել՝ վերստին վերադառնալու և այն ճաշակելու կանխավայելքով. «Դեռ մանկությունից օղի, ջրի, արևի հետ, մայրական խոսքի ու օրորի, շրջապատի ձայների հետ Թումանյանը թափանցում է հայ մարդու հոգին և մարմինը, սնում նրա սիրտն ու միտքը...»⁹

Իր գրական գործունեության ընթացքում տարբեր տարիքի երեխաների համար ստեղծել է շուրջ 150 ստեղծագործություններ, որոնք տասնամյակներ շարունակ տեղ են գտել դասագրքերում: «Շատ չեն գրողներ, որ բռնում են մանկան ձեռքից, երբ նա առաջին քայլերն է անում, և գնում հետը մինչև նրա վերջին քայլերը, մինչև խորին ծերություն՝ նրա համար մշտապես մնալով իմաստուն ու մտերիմ: Այդ քչերից է Հովհ. Թումանյանը»¹⁰:

Նրա մանկագրության կարևոր սկզբունքը անկեղծությունն է՝ շեշտելով բարոյական այս չափանիշով ստեղծագործած գրողի ժողովրդասեր ու բնութենապաշտ էության էպիկենտրոնն ու լուսնացույցը: Բազմաթիվ են Հովհ. Թումանյանի այն գործերը, որոնք խոսում են տարբեր հասակի ընթերցողների հետ. գործվալից ու ջերմագին հարաբերություններով է պայմանավորվում այն անսահման սերը, որ տաճել է բանաստեղծը մանուկների

⁸ Տե՛ս Գորький А. М., О литературе, М. 1995 стр., 649:

⁹ Տե՛ս Կապուտիկյան Ս., «Կարդալով Թումանյանին», «Իմ ժամանակը», Եր., 1979, էջ 78:

¹⁰ Տե՛ս Հախվերդյան Լ. «Թումանյանի աշխարհը», Եր., 1966, էջ 358:

և մեծերի հանդեպ: Նա գտնում է, որ չի կարող գրողներին պատվիրել, որ գրեն այս կամ այն տարիքի երեխաների համար. «Ես ինքս գրող եմ, մանկական գրվածքներ գրելիս երբեք չեմ մտածում, թե քանի տարեկանի համար է նա: Քանի տարեկանն ուզում է թող կարդա, ինչ հասակի համար կլինի, թող նրան տան: Բոլորի հասակներին հարմար կլինի՝ ավելի լավ: Չենք կարող սահմանավորել»¹¹:

Հանճարեղ գրողի մանկագրության ուղին սկսվել է պատանեկան տարիքից և շարունակվել մինչև կյանքի վերջին տարիները. «Թումանյանի առաջին տպագիր գործը «Արև և լուսին» մանկական բանաստեղծությունն է, որը լույս է տեսել 1890թ. «Աղբյուր» մանկական ամսագրում (N 8-9)»:¹²

Տարբեր տարիքի երեխաներին հասցեագրված Թումանյանի ստեղծագործություններից շատերը, վերափոխված կամ նույնությամբ, տպագրվել են ժամանակի դպրոցական դասագրքերում և հատկապես «Լուսաբեր»-ում:

Եվ ահա Հովհ.Թումանյանը, Ստ. Լիսիցյանը և Լ. Շանթը ձեռնամուխ են լինում հայագիր դպրոցի լավագույն դասագրքերից մեկի՝ «Լուսաբեր»-ի ստեղծման բարդ ու աշխատատար գործին: 1907-1920-ական թվականներին հայ մանուկները մայրենի լեզու, գիր ու գրականություն են սովորել «Լուսաբեր» դասագրքով: Հունիսի 12-ին Ստ. Լիսիցյանը Թիֆլիսում գտնվող Թումանյանին նամակով հայտնում է, որ դասագրքի առաջին մասը պատրաստ է, իսկ մնացած մասերի համար կարևոր է գրողի ներկայությունը և խնդրում է Մանգլիս գալ՝ բերելով «Էմինյանի հավաքածուները», «Սրվանձոյանի բոլոր երկերը», «Ազգագրական հանդեսի» որոշ համարները, դպրոցական կենդանաբանական և բուսաբանական ալբոմները, Լ.Լինչի երկու հատոր «Արմենիան», «Առձեռն բառագիրքը» և այլն: Թվարկված գրքերը, հավաքված բացառիկ ու հարուստ նյութերը ցույց են տալիս դասագիրք կազմողների բավական լուրջ վերաբերմունքը: «Լուսաբեր»-ի ստեղծման աշխատանքները պատահական չէին և պայմանավորված էին ժամանակի պահանջով. «Մի լավ դասագիրքն ավելի շատ արդյունքներ կարող է տալ, քան տասը լավ վարժապետներ, որովհետև տասը վարժապետները կարող են ուսուցանել միայն տասը ուսումնարանի մեջ, իսկ մի լավ դասագիրքը կարող է անցնել հարյուրավոր վարժապետների և հազարավոր աշակերտների ձեռքը»:¹³

1907թվականին «Լուսաբեր» դասագրքի հրապարակությունը աննախադեպ էր, որով էլ Թումանյանի գրիչը մանկական գրականության ասպա-

¹¹ Տե՛ս Թումանյանը քննադատ, Եր. 1939, էջ 182:

¹² Տե՛ս Մելքումյան Մ.Ս., Հովհ. Թումանյանը կրթության և դաստիարակության մասին, Եր 1969, էջ 94:

¹³ Տե՛ս Աբովյան Խ., ԵԼԺ, հ.7, էջ 195:

րեզում դարձավ ավելի բեղմնավոր, և նա իր ողջ ազատ ժամանակը նվիրեց «Լուսաբեր»-ին:

1908 թ. «Լուսաբեր Ա» լույս էր տեսել, «Լուսաբեր Բ» ուղարկվել էր տպարան: Դասագիրքը դեռևս դպրոց չէր մտել, երբ տպագրության լուրը խանդավառություն առաջացրեց գավառներում: Մանուկներին լուսավորող շատ երախտավորներ բազմաթիվ նամակներով դիմում էին Թումանյանին. նախ իրենց շնորհակալական խոսքն էին հղում, ապա՝ դասագրքեր խնդրում: Մելիք-Հայկազյան Հեղինեն գրում է. «Ես ընթերցանությամբ եմ զբաղվում երկու դպրոցներում և «Լուսաբերը» ինձ բավականին օգնում է: Պիտի ասեմ, որ «Լուսաբերը» ինձ դուր եկավ, հետաքրքիր հոգվածներ ու նյութեր կան»:¹⁴

1907 թ. լույս տեսած «Լուսաբեր Ա» տարին ուներ «Այբբենարան և առաջին ընթերցարան» ենթավերնագիրը, որն ազդարարում էր՝ դասագիրքը նախատեսված էր առաջին դասարանցիների համար՝ գրաճանաչություն սովորեցնելու նպատակով: Վերնագիրը, բովանդակությունը և նկարազարդումները լրացնում էին միմյանց, նկարազարդման հեղինակը Վրթանես Ախիկյանն էր: Թումանյանն աշխատում էր, որ ամեն մի դասի, մանկական ոտանավորի ու փոքրիկ պատմության նկարազարդումը ունենար դաստիարակչական ուղղվածություն, որ երեխաների մեջ սերմաներ բարություն, հարգանք՝ մեծի նկատմամբ, սեր՝ հայրենիքի ու հարազատների հանդեպ, հոգատարություն՝ կենդանիների նկատմամբ: Գրքի շապիկի վրա պատկերված էր արև, լուսաբաց և կանչող աքաղաղ, որը խորհրդանշում էր կյանքի, նոր օրվա առավոտը: «Ընթերցարան» բաժինը սկսվում էր Թումանյանի «Լուսաբացին» բանաստեղծությամբ: Ընդամենը երեք քառատողի մեջ գրողը վարպետորեն նկարագրում էր գյուղի լուսածագի հրաշալի պատկերը: Երեխայի համար պարզվում էր, որ աքաղաղը կանչում է դեռ լույսը չբացված, և նրա կանչը մոտալուտ արևագալն է: Ապա մանուկը տեսնում է կյանքի զարթոնքը, աշխատանքային օրվա սկիզբը. «Հովհ. Թումանյանի բանաստեղծությանը ծանոթ երեխան այլևս չի մոռանա իր առաջին ընկալումը»:¹⁵

«Լուսաբեր Ա»-ն սկզբում սովորեցնում էր տառերը, յուրաքանչյուր տառին համապատասխանեցնելով թեմատիկ նկարը: Տառուսուցումից հետո դասավանդվում էր այբուբենը, որը համընկնում է ներկայիս այբուբենին՝ բացառությամբ «և»-ի, որը բացակայում էր «Լուսաբեր»-ում: Կային նաև ձայնավոր և բաղաձայն հնչյունների ձեռագիր տառերը, 0-ից 9-ը թվանշանները: Երբ համեմատում ենք ներկայիս այբբենարանները և «Լուսաբեր» դասագիրքը, նկատելի է դառնում, որ Թումանյանի բազմաթիվ ստեղ-

¹⁴ Տե՛ս ԳԱԹ, ԹՖ, № 1711:

¹⁵ Տե՛ս Գյուլնազարյան Խ.Մ., Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր 1961, էջ 96- 98:

ծագործություններն այսօր էլ մեր դպրոցական դասագրքերի զարդն են: Դրա մասին է վկայում Վ.Ա. Սարգսյանի Այբբենարանում գետեղված «Արան ու վերջակետը», «Գրիչը» բանաստեղծությունը, «Ծիտը» հեքիաթը:

«Լուսաբեր Ա» դասագրքում «Կարդալու վարժություններ» բաժնում առանձին շարքերով ներկայացված են դժվարընթեռնելի բառերը, որոնց հաջորդում է «Ընթերցարանը»: Դասագրքում ներկայացված են թե՛ դասերին վերաբերող, թե՛ դասերից դուրս ամենատարբեր հարցեր, հանելուկներ, առածներ, շուտասելուկներ: Դասագրքում տեղ են գտել Թումանյանի ավելի քան քսան գործեր («Ամպն ու սարը», «Արագիլը», «Խնոցին», «Ծույլ աղջիկը», «Կանաչ ախպերը», «Կույր աշուղը», «Փխոն», «Ուլիկը» և այլն)՝ դրանցում շեշտելով այն յուրատիպ հատկանիշները, որոնք միմիայն թումանյանական են: Դասագրքում ընդգրկված քառասուն դասերից մեծ մասը գյուղի աշխատանքների, կենդանիների, բնության մասին են: Հենց դրանցով է պայմանավորում բնութենապաշտ բանաստեղծի գլխավոր ձգտումը՝ երեխային փոխանցել ներթափույց հրճվանք, բնության միջոցով մեծացնել երեխայի աշխարհաճանաչությունը:

1908 թ.-ին արդեն հրատարակվել էր «Լուսաբեր Բ» տարին, որը նախատեսված էր երկրորդ դասարանի աշակերտների համար: Այն դարձյալ բացվում էր Թումանյանի «Լուսաբացին» բանաստեղծությամբ՝ ներկայացնելով լույսն իբրև կրթության ու լուսավորության խորհրդանիշ: Այստեղ նույնպես տեղ են գտել դժվար բառերի բացատրություններ, հանելուկներ և այլ ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ: Ի տարբերություն նախորդի՝ «Լուսաբեր Բ» գրքի վերջում կային նաև հանելուկների պատասխանները: Դասագրքում ներառված են քերականական բազմաբնույթ վարժություններ, որոնցով ուսուցանվում են ուղղագրությունը, հոմանիշ և հականիշ բառերի կիրառությունը: Այստեղ նույնպես երեխաները հաճախ են շրջում թումանյանական ստեղծագործական պարտեզում՝ վայելելով Վահան Թեքեյանի ձևակերպմամբ՝ «արեւէն հասունցած պտուղբառերը»:

1909 թ.-ին տպագրվում է «Լուսաբերի» Գ տարին՝ նախատեսված երրորդ դասարանցիների համար: Այն նորից բացվում է Թումանյանի «Ամենից լավ տունը» բանաստեղծությամբ: «Լուսաբեր Գ» տարվա 80 դասերին հաջորդող հարցերն ու առաջադրանքներն ավելի տրամաբանական են, բացակայում են հանելուկները, առածները, շուտասելուկները: Գեղարվեստական բնագրերը և Գյոթեից, Չեխովից, Անդերսենից, Ավենարիուսից կատարված թարգմանությունները ավելի մեծ ծավալ են զբաղեցնում: Բնագրերի լեզուն պարզ էր, բովանդակությունը՝ հետաքրքիր, ճաշակով նկարագրողված էր, պատճառաբանված՝ ամեն մի նկարը, որը գրքի առավել դժվար բաժինները դարձնում էր մատչելի:

1913թ.-ին լույս է տեսնում «Լուսաբեր Դ»:

1910-ական թվականներին շարունակվում են «Լուսաբեր» Ե գրքի հրատարակումը իրականացնելու աշխատանքները:

Ժողովրդական բանահյուսության գանձարանը անսպառ աղբյուր է եղել բանաստեղծի ոգեշնչման համար: 1907-1911թթ. «Լուսաբեր» դասագրքի համար Թումանյանը գրում է «Աղվեսը», «Կաքավի գովքը», «Արտուտի երգը», «Դժար տարի», «Խնոցի», «Չարի վերջը», «Ույժը», «Կաքավի ողբը», «Մանուկն ու ջուրը», «Քաջ կիկիվը», «Ուրագ ու սողոց», «Գարնան առավոտ», «Փոքրիկ երկրագործ», «Էսպես չի մնա» և այլն, որոնք աչքի են ընկնում բովանդակային հագեցվածությամբ, ասելիքի նշանառությամբ և խորքով. «Այս երկերի մոտիվներն ու թեմատիկ ընդգրկումը վկայում են, թե որքան խնամքով է բանաստեղծը ընտրություն կատարել ժողովրդական բանահյուսության գանձարանից՝ հաշվի առնելով, որ դրանք հասցեագրվում են մանուկ ընթերցողին»:¹⁶

Հովհ. Թումանյանը «Լուսաբերը» ստեղծելիս կարևոր և առաջնային նշանակություն է տվել հայոց լեզվի մաքրության հարցին: Բազմաթիվ են նրա՝ լեզվագիտական հայացքներն արծարծող հոդվածներն ու ելույթները, որոնք պարզել են գրողի աշխարհամտածողության, աշխարհընկալման չափն ու սահմանը: Կարևորելով մանկագիր Թումանյանի գրելաճի պարզության, մատչելիության, սեղմության նշանակությունը՝ միաժամանակ մասնավորեցնում ենք պոետի մանկական (հատկապես՝ երգիծական) ստեղծագործություններում երեխաների խաղային վարքագծի դրսևորման առանձնահատկությունները: Գրողը գտնում է, որ խաղը և սովորելը մարդու կյանքում փոխկապակցված են: Ինչպես նկատել է հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, երեխային դպրոց մտնելուն պես սկսում են սովորեցնել «խիստ»՝ մի կողմ դնելով խաղը, մոռանալով, որ այն երեխայի «բնական օրգանական պահանջն է» ու «նրա էությունը»:

1915թ. Թումանյանը ստեղծեց «Աստղերի խաղը: «Առաջին խաղ», «Դըղում», «Գույների խաղ», «Թանկագին քարեր», «Հայկական առածների լոտո», «Հանելուկներ», «Հայոց գետերը: Հայրենագիտական խաղ», «Սրամիտ հովիվը» «Տառերի խաղ», և այլ խաղեր, որոնք ոչ միայն տեղադրվեցին «Լուսաբեր»-ում և այլ դասագրքերում, այլև գիտամանկավարժական համոզությամբ բացահայտեցին խաղերի կրթադաստիարակչական մեծ նշանակությունը:

Այսպիսով, «Լուսաբեր»-ի յուրաքանչյուր տարին զարմացնում է փաստերի և տվյալների հմուտ համադրությամբ: Այս դասագրքերի ստեղծումը մեկ անգամ ևս փաստում է Թումանյանի անձնուրաց նվիրումը ժողովրդական ժառանգությանը, մանկագրության հրաշք աշխարհին՝ այն բացահայտելու, համադրելու, վերլուծելու անխոնջ պատրաստակամու-

¹⁶ Տե՛ս **Հովհաննիսյան Ս.**, «Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը 1900-1912թթ.», Եր., 2012, էջ 412:

թյամբ: Կարծում ենք՝ այդ ճանապարհով շատերն են կամենում անցնել՝ մանկագրության բարձունքին մատչելու, բանաստեղծի աշխարհին հասնելու վերագնա և խորագնա ընթացքներով:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հովհ. Թումանյանի բանաստեղծական գանձարանը լի էր հայրենասիրական, լիրիկական ու խոհական երգերով, սակայն իր ստեղծագործական ընթացքի մեջ առանձնանում էր նրա ամենամեծ շնորհը՝ մանկագրությունը: 1907թվականին «Լուսաբեր» դասագրքի հրապարակումը աննախադեպ էր, որով էլ Թումանյանի գրիչը մանկական գրականության ասպարեզում դարձավ ավելի բեղմնավոր: «Լուսաբեր»-ի յուրաքանչյուր տարին զարմացնում է փաստերի և տվյալների հմուտ համադրությամբ: Այս դասագրքերի ստեղծումը մեկ անգամ ևս փաստում է Թումանյանի անձնուրաց նվիրումը ժողովրդական ժառանգությանը, մանկագրության հրաշք աշխարհին:

Հիմնաբառեր. Հովաններ Թումանյան, հայրենասիրություն, ժողովրդական ժառանգություն, մանկագրություն, «Լուսաբեր» դասագիրք, կրթություն

Օգտագործված գրականություն

1. Горький А. М., О литературе, М. 1995 стр., 649:
2. Կապուտիկյան Ս., «Կարդալով Թումանյանին», «Իմ ժամանակը», Եր., 1979, էջ 78:
3. Հախվերդյան Լ. «Թումանյանի աշխարհը», Եր., 1966, էջ 358:
4. Թումանյանը քննադատ, Եր. 1939, էջ 182:
5. Մելքումյան Մ.Ս., Հովհ. Թումանյանը կրթության և դաստիարակության մասին, Եր 1969, էջ 94:
6. Աբովյան Խ., ԵԼԺ, հ.7, էջ 195:
7. Գյուլնազարյան Խ.Ս., Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր 1961, էջ 96- 98:
8. Հովհաննիսյան Ս., «Հովհաններ Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը 1900-1912թթ.», Եր., 2012, էջ 412:

Нунэ Мкртчян

Северный университет, к.ф.н., доцент

Сируш Овсепян

студентка 4 курса Северного университета

УЧЕБНИК "ЛУСАБЕР" ПО ИНТЕРПРИТАЦИИ ОВАННЕСА ТУМАНЯНА

Поэтическая сокровищница Ованеса Туманяна полна патриотических, лирических и задумчивых песен, но в творческом процессе выделился его величайший дар: детская поэзия. В 1907 году издание учебника «Лусабер» было беспрецедентным, что сделало перо Туманяна более плодотворным в области детской литературы. Каждый год «Лусабер» удивляет умелым сочетанием фактов и данных. Создание этих учебников еще раз свидетельствует о беззаветной преданности Туманяна народному наследию, прекрасному миру детской литературы.

Ключевые слова: Ованес Туманян, патриотизм, народное наследие, детская литература, учебник «Лусабер», образование.

Nune Mkrtchyan

Northern University , Ph.D., Associate Professor

Sirush Hovsepyan

4th year student of Northern University

"LUSABER" TEXT BOOK WITH HOVHANNES TUMANYAN'S INTERPRETATION

Hovhannes Tumanyan's poetic treasury is full of patriotic, lyrical and thoughtful songs, but in his creative process, his greatest gift stood out: children's literature. In 1907, the publication of the textbook "Lusaber" was unprecedented, which made Tumanyan's pen more fruitful in the field of children's literature. Each year of "Lusaber" surprises with a skillful combination of facts and data. The creation of these textbooks once again documents Tumanyan's selfless dedication to the folk heritage, the wonderful world of children's literature.

Keywords: Hovhannes Tumanyan, patriotism, folk heritage, children's literature, "Lusaber" textbook, education

Ներկայացվել է՝ 18.02.2023 թ.

Հնդրուկվել է՝ 24.03.2023 թ.

Նունե Մկրտչյան

Հյուսիսային համալսարանի լեզուների, գրականության
և լրագրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ
nunemkrtchyan.69@mail.ru

Իսկուհի Պողոսյան

Հյուսիսային համալսարանի Բակալավրիատի I կուրսի ուսանողուհի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հովհաննես Թումանյան... անուն, որ հավասարի իրավունքով կարելի է դնել միայն Մաշտոցի՝ որպես հայ գրերն արարող և դրանով հայ ազգին անմահություն պարգևող, Նարեկացու՝ որպես Արարչի հետ զրույցի բռնված և իր հանճարի համամարդկային գույնով աշխարհը շլացնող, անունների կողքին: Թումանյանը Հայաստանի սահմանները չի ընդարձակել, հակառակը, կրել է իր մեջ հայրենագրկության անփարատ վիշտը:

Թումանյանը գրական գործիչ լինելուց զատ, ունեցել է բազում հաջողություններ հասարակական կյանքում: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ. Զրբաշյանը գրում էր, որ թումանյանագիտության ամենաքիչ ուսումնասիրված բնագավառը, դա գրողի հասարակական գործունեությունն էր: Հայ ժողովրդի միջից հառնած Թումանյանը մշտապես գտնվել է ժողովրդի համար ճակատագրական իրադարձություններում, որպես ակնառու դեմք: Ինչպես նկատվում է Մ.Աբեղյանի կողմից. «Թումանյանի միտքն ու զգացմունքը զբաղվում են ավելի ժողովրդական աշխարհով. Ժողովրդական կյանքի տխուր վիճակը, սոցիալությունը, սնոտիապաշտական հավատալիքները և սրանցից առաջացած կորստաբեր վնասները, քաջամարտիկ ոգու անկում,- ահա այն խնդիրները, որոնք գրավել են բանաստեղծի ուշքն ու միտքը, և որոնք գեղեցիկ արտահայտություն են գտել նրա գրվածքների մեջ...»¹⁷

Թումանյանի կյանքի մի զգալի հատվածն անցնում է ազգային վշտերի և տանջանքների առաջադրած խոհերի մեջ, որն էլ բանաստեղծին դարձրել է ժամանակի համար կարևոր հասարակական-քաղաքական գործիչ: Կամա, թե ականա, նա մասնակցում էր երկրի հասարակական-քաղաքական կյանքին, և հատկապես պատերազմի ու հեղափոխության բեկանելի օրերին: Մեծ է Թումանյանի դերը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստները արձանագրելու գործում: 1918թ.-ի նոյեմբերի 21-ին Առաջին Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները հաշվելու և Փարիզի հաշտության խորհրդաժողովին ներկայացնելու նպատակով ստեղծվում է

¹⁷ Տե՛ս Աբեղյան Մանուկ, Երկեր, 7 հատոր, Երևան, 1975, էջ 362:

«Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով», որը գլխավորում է Հայ Հայրենակիցների Միությունների նախագահ Հ. Թումանյանը: Առաջին Համաշխարհային պատերազմում հայերի կորուստը որոշող բյուրոյի խնդիրն էր շարադրել հայկական հարցի պատմությունը իր զարգացման բոլոր աստիճաններում:

Թումանյանն այնտեղ էր, որտեղ իր ժողովուրդն էր: Դ. Դեմիրճյանը ասում է. «Գրողը պիտի իր ժողովրդի հետ կրի նրա նեղություններն ու վայելի նրա խնդությունները – այս էր Թումանյանի միտքը: Մա նրա լուզունգն էր... Նա իր ժամանակի ամենահասարակական գրողն էր... նրա ժամանակի հասարակությունն էլ նրան դիմում էր ամեն խնդրում... նրա հետ սերտ կապ ունեին և դիմում էին նրա օգնությանը...»¹⁸

Ի՞նչ խոսքերով կարելի է նկարագրել այն զգացումները, որոնք բզկտում էին Թումանյանի հոգին, երբ նա խորհում էր իր դժբախտ և հերոսական ազգի մասին, որն աշխարհին զարմացրել է իր անկոտրուն ոգով, խիզախությամբ, անվեհերությամբ, երբ դեռ երեկ Օսմանյան կայսրության ազգերից առավել կենսունակ ու առաջավորն էր, որն այսօր սոսկ անցյալի հուշ դառնալու վտանգի առջև էր կանգնած: «Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը, նրա պատմությունը, էն սոսկալի դրաման, որ կոչվում է հայոց պատմություն, որն էնտեղից է բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածումները... և էս առաջ եմ գալիս ոչ թե «տիրող հանգամանքներից», այլ մի արյունոտ հողից, մի անօրիորդական զարհուրելի պատմությունից, մի հոշոտված ժողովրդից, ուր ինձ բանաստեղծ է արել ճակատագիրը...»¹⁹

Տեղահանության իսկական նպատակը թալանն ու ոչնչացումն էր: Իրականում դա բնաջնջման մի նոր եղանակ էր. Այս ամենը մտովի պատկերացնելն իսկ սահմոկեցուցիչ է. Իսկ ի՞նչ էր զգում Մեծն Լոռեցին. «Այդ իրականության մեջ տառապող հայրենիքը, որին բանաստեղծը կապված էր հոգու ամենանուրբ և ամենասուրբ թելերով «գիշեր ու ցերեկ, հազար ցավերով, հազար ձևերով» («Նախերգանք») կանչում էր նրան»:²⁰

Թումանյանը վերլուծում էր փաստերը և բնաջնջվող հայ ժողովրդի համար ելք էր փնտրում: Հասարակական կյանքով խորապես ապրող այդ մարդը, շարունակ դեպքերի հորձանքների մեջ էր: Գրողը գտնում էր, որ փոքրաթիվ ժողովուրդը չի կարող բռնակալության դեմ դուրս գալ ու հաղթել, և որ առանց դրսի օգնության բոլոր ձեռնարկումները մահվան են դատապարտված: Իսկ այդ օգնությունը նա տեսնում էր Ռուսաստանի կողմից: Ավելին, վերլուծելով իրականությունը՝ Թումանյանը կարծես դաս է տալիս

¹⁸ Տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՍՍՀ, ԳԱԱ հրատ., Երևան, 1969, էջ 41:

¹⁹ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, Եր., 1994, հ 6, էջ 178:

²⁰ Տե՛ս **Ինձիկյան Ա.**, Հ. Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմություն, Երևան, 1969, էջ 363-394:

ապագա դիվանագետներին, հուշում և զգուշացնում: Աշխարհի լուռ ու անտարբեր հայացքի ներքո ոչնչացվում է մի ողջ ժողովուրդ իր իսկ պատմական հայրենիքում. «տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության դրժբախտ զոհերից մեկը, և անպայման ամենադժբախտը»:²¹

Թումանյանը զարմանալի ճշգրտությամբ էր կանխատեսում Մեծ Եղեռնը, իր ժողովրդի դառը ճակատագիրը: Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր մարդկության պատմության մեջ: Ամենայն հայոց բանաստեղծը չէր կարող չանդրադառնալ Ախալքալաքում մոլեռանդ բարբարոս սպանության պատկերներին, անմարդկային տառապանքների նկարագրություններին:

Որպես Բյուրոյի հիմնադիրներից մեկը՝ Թումանյանը քաջատեղյակ էր զարգացող իրադարձություններին և գիտեր, որ ապագայի հանդեպ հուսապարար ակնկալությունը սրտերում՝ արևմտահայ բնակչությունը կամենում էր իր բախտը կապել Հայաստանի Հանրապետության հետ, ամենից առաջ այն պատճառով, որ հոգեպես չընկված ազգի համար ազատությունը գերադասելի է ստրկությունից: Կյանքը գունաթափվել ու իմաստազրկվել էր: Անկումների ուղին տեսանելի էր առավել, քան երբևէ:

Գերմանացի գիտնական Ա. Էյնշտեյնը ցավով շեշտում է, որ հայ ժողովրդի ոչնչացումը մնում է և կմնա որպես ամենամեծ ողբերգություն, որը համայն մարդկության, այդ թվում և Գերմանիայի ամոթն է, քանի որ վերջինս, լինելով Օսմանյան Թուրքիայի առաջնաշնորհյալ դաշնակիցը, ոչինչ չի արել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կոտորածն արգելելու համար:

Տարիներ շարունակ մահվան ճանապարհով գնացող, բայց կյանքի հույսով շնչող հայ ժողովուրդը և հայ մտավորականները համոզված էին, որ Եվրոպական ազգերի ներկայացուցիչները հայի դատին կմոտենան արդարությունն ու ազատությունը վերականգնելու նպատակով: Լեոն հիշում էր, որ Հ. Թումանյանի տանը կազմակերպելվել էր մի նախաձեռնություն՝ «հայերին առատ ժպիտներ բաժանող» փոխհյուպատոս Դյուրունի պատվին. «Ամեն խոստումներ էր անում մաքուր հագնված, եվրոպացու կնիքը ճակատին կրող մարդը, ինչպե՞ս չհավատար նրան մեզ պես մի ջարդված ու մանրված ժողովրդի մարդը», մանավանդ, երբ ասում էր. «սարի պես պաշտպանում է հայերին և հայոց հարցը»:²² Որտե՞ղ էր ավարտը: Մի թե վերջ չէր ունենալու դժբախտությունների այդ շղթան:

Սակայն նաև զարմանալի լավատեսություն ուներ Մեծն բանաստեղծը: Վարպետը հուզմունքով ներկայացնում է՝ «Առհասարակ լավատեսությունը գերիշխում էր Օհաննեսի հոգում. Ընկճվածությունը մի վայրկյան էր նրա մոտ: Հավատով էր մեր ճակատագրի հանդեպ և պայծառ հեռա-

²¹ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 169-171:

²² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 99:

նկարներ էր տեսնում հայ ժողովրդի առաջ: Այս հավատը վարակեց և ինձ...»: ²³

Նույնիսկ այն ժամանակ, երբ եղեռնը արդեն իրողություն էր, նա գրում էր. «Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք հուսահատի ու վհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկյանին, փորձությունը, որքան էլ մեծ լինի, պպետք է տանենք արի- ությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»: ²⁴

Թումանյանը երբեք չի կորցնում ապագայի հանդեպ հույսը, չի հու- սահատվում, հիասթափությունն ու հոգեկոտմունքը չեն դառնում նրա ուղեկիցները: Նա պատերազմի օրերին լինում է ռազմաճակատում, քաջա- լերում անձնագոհ պայքարող մարտիկներին, լինում է Վանում, Էջմիա- ծնում և հայաբնակ շատ այլ վայրերում: Թումանյանը՝ իրեն ծնող ժողովրդի բանաստեղծը, արտահայտիչն ու թարգմանն է: «...Եթե չլինեին Էջմիա- ծնում անցակցրած մղձավանջային ամիսները, 1914-1915թթ. Արևմտյան Հայաստան կատարած ճամփորդությունները, չէին ծնվի Թումանյանի «Հո- գեհանգիստն» ու «Հայրենիքիս հետ», իսկ եթե նա չլսեր դժոխային տեսա- րանների ականատեսների, հատկապես Մարտիրոս վարժապետի՝ կոտո- րածների զարհուրանքների նկարագրությունները, չէր գրի «Դժոխքի հան- դեպը...»»: ²⁵

Հ. Թումանյանի անսահման հավատը հայ ժողովրդի «լավագույն ապագայի» հանդեպ իր արտահայտությունն է գտել նաև գրողի մի շարք ստեղծագործություններում: Մեծն լոռեցին հավատում էր հայ ժողովրդի վաղվա օրվան և նշում, որ անհնար է միշտ բարուն, լույսին, սուրբ բար- ձունքներին ծառայած մի ժողովուրդ վերանա աշխարհի երեսից: Գրողի վեհ հոգում ոչ թե չարություն, այլ տիեզերական թախիծ ու ահռելի վիշտ կար: Նա պահանջում էր բոլոր ուժերը ծառայեցնել միայն հաղթանակի համար, կազմել միություն՝ մեծ ապագա ստեղծելու համար: Հայր պատ- րաստ էր դիմագրավել արհավիրքներ բերած ու ոճիրներ գործած ոնոգորմ թշնամիներին:

²³Նույն տեղում, էջ 10:

²⁴Տե՛ս Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Ե., 1995, էջ 50:

²⁵Հովհաննիսյան Սուսաննա, Հ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ), Երևան, 2012, էջ 7:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հովհ. Թումանյանի կյանքի մի զգալի հատվածն անցնում է ազգային վշտերի և տանջանքների առաջադրած խոհերի մեջ, որն էլ բանաստեղծին դարձրել է ժամանակի համար կարևոր հասարակական-քաղաքական գործիչ: Մեծ է Թումանյանի դերը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստները արձանագրելու գործում: Որպես Բյուրոյի հիմնադիրներից մեկը՝ Թումանյանը քաջատեղյակ էր զարգացող իրադարձություններին և գիտեր, որ ապագայի հանդեպ հուսապարար ակնկալությունը սրտերում՝ արևմտահայ բնակչությունը կամենում էր իր բախտը կապել Հայաստանի Հանրապետության հետ, ամենից առաջ այն պատճառով, որ հոգեպես չընկճված ազգի համար ազատությունը գերադասելի է ստրկությունից: Թումանյանը երբեք չի կորցնում ապագայի հանդեպ հույսը, չի հուսահատվում, հիասթափությունը չի դառնում նրա ուղեկիցը: Մեծն լռեցին հավատում էր հայ ժողովրդի վաղվա օրվան և նշում, որ անհնար է միշտ բարուն, լույսին, սուրբ բարձունքներին ծառայած մի ժողովուրդ վերանա աշխարհի երեսից:

Հիմնաքառեր. Հովհաննես Թումանյան, հայրենասիրություն, ազգային վիշտ, լավագույն ապագա, թումանյանագիտություն

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մանուկ, Երկեր, 7 հատոր, Երևան, 1975, էջ 362:
2. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՄՍՀ, ԳԱԱ հրատ., Երևան, 1969, էջ 41:
3. Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, Եր., 1994, հ 6, էջ 178:
4. Ինձիկյան Ա., Հ. Թումանյան, Կյանքի և ստեղծագործության պատմություն, Երևան, 1969, էջ 363-394:
5. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 169-171:
6. Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Ե., 1995, էջ 50:
7. Հովհաննիսյան Սուսաննա, Հ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ), Երևան, 2012, էջ 7:

Нунэ Мкртчян

Северный университет, к.ф.н., доцент

Искуи Погосян

Студентка первого курса Северного университета

ՕՎԱՆԵՏ ԿՈՄԱՆՅԱՆ ԵՎ ԿԻՅՈՒՆ ՆԱՐՈԴԱ

Значительная часть жизни Туманяна проходит в раздумьях, порожденных народными горестями и муками, что сделало поэта важной общественно-политической фигурой своего времени. Велика

роль Туманяна в констатации человеческих и материальных потерь, понесенных армянским народом в результате геноцида. Будучи одним из основателей бюро, Туманян был хорошо осведомлен о развитии событий и знал, что с надеждой на будущее в сердце западноармянское население желает связать свою судьбу с Республикой Армения прежде всего потому, что для духовно целостной нации свобода предпочтительнее рабства. Туманян никогда не теряет надежды на будущее, не отчаивается, разочарование не становится его спутником. Поэт верил в будущее армянского народа и отмечал, что невозможно, чтобы народ, который всегда служил добру, свету и святым высотам, не мог исчезнуть с лица земли.

Ключевые слова: Ованес Туманян, патриотизм, национальная скорбь, лучшее будущее, тумановедение

Nune Mkrtchyan

Northern University, Ph.D., Associate Professor

Iskuhi Poghosyan

First-year undergraduate student of Northern University

HOVHANNES TUMANYAN IN THE LIFE OF THE PEOPLE

A significant part of Tumanyan's life is spent in thoughts, generated by people's sorrows and torments, which made the poet an important socio-political figure of his time. Tumanyan's role is great in ascertaining the human and material losses suffered by the Armenian people as a result of the genocide. Being one of the founders of the bureau, Tumanyan was well aware of the developments and knew that with hope for the future in their hearts, the Western Armenian population wants to link their fate with the Republic of Armenia, primarily because for a spiritually integral nation, freedom is preferable to slavery. Tumanyan never loses hope for the future, does not despair, disappointment does not become his companion. The poet believed in the future of the Armenian people and noted that it is impossible that the people, who have always served goodness, light and holy heights, could not disappear from the face of the earth.

Keywords: Hovhannes Tumanyan, patriotism, national sorrow, best future, Tumanian studies.

Ներկայացվել է՝ 05.02.2023 թ.

Հնդունվել է՝ 01.03.2023 թ.

Նունե Մկրտչյան

Հյուսիսային համալսարանի լեզուների, գրականության
և լրագրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ
nunemkrtchyan.69@mail.ru

Անահիտ Ալեքսանյան

Հյուսիսային համալսարանի IV կուրսի
ուսանողուհի

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ**

Դպրոցը միշտ էլ փորձել է կողմնորոշվել դեպի արդյունավետ ուսուցումն ու աշակերտը: Սա բավականին բարդ գործընթաց է, որը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի բացահայտվեն յուրաքանչյուր աշակերտի անհատական տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, որ նրա համար սովորելը դառնա պատասխանատվության գիտակցում, ինքնուրույն լինելը՝ վարքագծի բնականոն դրսևորում: Պատահական չէ, որ Հովհ.Թումանյանը՝ ժողովրդի ստեղծագործական ավանդույթների վրա հիմնվող բանաստեղծը, դպրոցը համարում է սոցիալական համակարգ, որը փոփոխվում է ժամանակի ընթացքում, ուստի անընդհատ վերանայման կարիք ունի: Բնականաբար, գրողին չէր կարող բավարարել հին ծխական դպրոցի, հոգևոր ճեմարանի ցածր կրթական մակարդակը: «Ինքնակենսագրության» մեջ Թումանյանը շատ վառ ու պատկերավոր է նկարագրում գյուղում բացված Սահակ վարժապետի դպրոցը, որը «Տեր-Թողիկյան» տիպի էր, որտեղ գործադրվող «մանկավարժական մեթոդներն» էին ծեծը, վիրավորանքները՝ գիտելիքների չնչին պաշարի դիմաց: Տեր Սահակը երեխաներին կառավարում էր «գավազանավ երկայթյալ»:

Թումանյանական մեկնաբանությամբ դպրոցն այնպիսի կրթություն պետք է ապահովի, որ նոր սերունդը «հոգեպես և մարմնապես մի աստիճանով» բարձր լինի նախորդից. «Եւ, ով գիտե, գուցե մոտիկ է այն օրը, երբ հայ մարդը, որ երեկ-մյուս օրը եկեղեցու շուրջ էր պտտվում, այնուհետեւ անցավ ուսումնարանին, գալու է հասնի եվ գրականությանն ու գեղարվեստին»:¹

Թումանյանը, նկարագրելով նահապետական օրենքներով ապրող ներքին ու հաճախ ողբերգական հակասություններով լի գյուղացիների կյանքը, բացահայտում է, որ սերնդի բարոյական և մտավոր զարգացումը յուրաքանչյուր ժողովրդի ամենամեծ ներդրումն է ապագայի համար: Արդյունավետ դպրոց ունենալու համար հարկ է մի կողմ դնել հին դպրոցի

¹Տե՛ս **Գրիգորյան Ա.Վ.**, Հայոց լեզվի և գրականության հարցեր, Եր., 1981, էջ 12:

որոշ սկզբունքներ և գործածել նորերը: Գրողի կարծիքով դպրոցի արդյունավետությունը մի շարք հատկանիշներից ու անջատ օժանդակ տարրերից չի բաղադրվում, այն ենթադրում է մի ամբողջական արդյունավետ համակարգ, որն իր մեջ ներառում է մարդկանց, կառույցներ, փոխհարաբերություններ, գաղափարախոսական նպատակներ, իմացական նյութ, շարժառիթներ, ցանկություն: Թումանյանը ցանկանում է տեսնել դպրոցի պայմանների այնպիսի փոփոխություն, որն ակնառու կդարձնի աշակերտների ստացած գիտելիքները, հմտություններն ու արժեքային համակարգը, հնարավորություն կտա շրջանավարտներին դիմանալ բարձրագույն հաստատություններ ընդունվելու մրցակցությանը: Դպրոցի արդյունավետության թումանյանական հայեցակարգը ենթադրում է նաև դպրոցի գործունեության ամբողջ ոլորտի իմացություն, փոփոխվող հանգամանքներին արձագանքելու կարողություն, ուսուցումնական գործընթացի մասնակիցների բավարարվածություն, պարտավորություններ. «Որևէ երեխայի առջև դպրոցի դռները փակելու ցանկացած առաջարկ նա որակավորում է «խավարամիտ», «միջնադարյան», «անհեթեթ»: Դրանով նա միաժամանակ առաջադրում է աշխարհիկ պետական դպրոցների զարգացման պահանջը»:²

«Պետք է խրախուսել» հոդվածում Թումանյանը ներկայացնում է, որ Թիֆլիսում գոյություն ունի Վ. Ա. Վերմիշյանի «Ձեռնարվեստի դպրոցը», և շատ մարդիկ չգիտեն այդ դպրոցի մասին, որովհետև «բացված է համեստ մի անհատի, մի տիկնոջ ձեռքով»: Վերմիշյանը ընդունակ չէ իր աշխատանքը ցուցադրելու, մնում է, որ ուրիշները նկատեն: Գրողը ցավով նկատում է. «Բայց մի թե մենք ընդունակ ենք նկատելու մի գործ, որ կատարվում է առանց աղմուկի, ինչքան ուզում է գեղեցիկ լինի այդ գործը»:

Դժբախտաբար ընդունակ չենք այդ պատճառով էլ «գեղեցիկ գործերը տառապում են մեր կյանքում և այդ տեսակ գործերի ձեռնարկողների բաժինը մնում է հիասթափությունն ու հուսահատությունը ոգևորությունից հետո»:³

Աշակերտներին ոչ միայն պետք է տալ որոշակի գիտելիքներ, զարգացնել հմտություններ, սովորեցնել աշխատել, կոփվել ֆիզիկապես և բարոյապես, այլև նրանց մեջ ներարկել սեր դեպի արվեստը, գրականությունը, որն օգնում է ուսուցչին՝ դասի ընթացքում լուծելու կրթության ու դաստիարակության միասնակության հարցերը:

Հովհ. Թումանյանը մանկավարժի նպատակն է համարում զարգացնել «ուժեղ, խելոք, առաքինի» քաղաքացիներ, ազգի համար:

Թումանյանը առաջնությունը տալիս է մայրենի լեզվի ուսուցմանը, բարոյական և գեղագիտական դաստիարակությանը, դեմ է մարմնական պատիժներին, կողմնակից՝ երկսեռ ուսուցմանը: Կարևորելով ուսուցչի

² Տե՛ս **Հովհաննիսյան Սուսաննա**, Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ.), Երևան, 2012, էջ 478:

³ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, Եր., 1994, հ6, էջ 307:

դերը՝ Հովհ. Թումանյանը նշում է, որ ուսուցչի խնդիրն է ճիշտ կազմակերպել աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, որը բացառիկ նշանակություն ունի նրանց հոգևոր դաստիարակության գործում: Այդ գործընթացը հնարավոր է ուսուցչի գիտելիքների, մեթոդների, աշակերտի հոգեբանությունը հասկանալու, ուսումնական նյութը ազատ տիրապետելու նրա կարողությամբ:

Ուսուցիչը աշակերտների մեջ զարգացնում է գեղեցիկի զգացումն այնպես, որ հենց իրենք ցանկանան ու ձգտեն ստեղծել այն կյանքում, քանի որ գեղեցիկի զգացումը ճիշտ խոսքի ու լավ արարքի նախապայմաններից մեկն է: Սակայն, Ինչպես նշում է Հովհ. Թումանյանը. «ուսուցիչը ունեցել է գրեթե ամենավատթար վիճակը մեր մեջ: Նա միշտ եղել է հալածված ու թափառական մի տեղից մյուսը, մի դպրոցից մյուսը, մի հոգաբարձության քահանայությունից մյուսը, սիրտը կոտրած, լքված, բեկված ու արհամարհված»:⁴

Թումանյանի հրապարակախոսության մեջ քննադատության առարկա են դառնում նաև կրթական հաստատությունների տգետ հոգաբարձուների արհամարհական վերաբերմունքը դեպի ուսուցիչը: Նրա կարծիքով հոգաբարձուների խորհուրդը պետք է խրախուսի ուսուցչական կազմին, աջակցի պահանջվող փոփոխություններին:

Թումանյանի հոգվածներից կատարված մեջբերումները թույլ են տալիս եզրակացնել, որ զրոգը ուսուցչական բացառիկ ընդունակություններ է համարում մանկավարժական վարպետությունը, դասավանդման կատարելությունը, անսահման սերը երեխաների նկատմամբ, միաժամանակ, ճիշտ բնորոշելով հայ ուսուցչի կարգավիճակը՝ անկեղծ ցավակցությունն է հայտնում ուսուցչական կազմին, որն «ինչ տեսակ էլ լիներ, արժանի էր, որ իր հետ մարդավարի վարվեին ու բացատրություն տային ճանապարհի դնելիս»:⁵

Թումանյանը ուսուցման ու դաստիարակության համար առաջնակարգ նշանակություն էր տալիս մանկական գրականությանը: Գրողի մանկագրության ակունքը մի վարար աղբյուր է, որը շատերի ծարավն է հագեցրել՝ վերստին վերադառնալու և այն ճաշակելու կանխավայելքով. «Դեռ մանկությունից օդի, ջրի, արևի հետ, մայրական խոսքի ու օրորի, շրջապատի ձայների հետ Թումանյանը թափանցում է հայ մարդու հոգին և մարմինը, սնում նրա սիրտն ու միտքը...» ⁶

Թումանյանը հատու խոսքով է վերաբերվում ուսուցիչների գրագիտությանը և զայրանում է, որ նրանց մեծ մասը թերիմացությամբ են մտնում

⁴ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, Եր., 1994, հ6, էջ 220:

⁵ Տե՛ս **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, Եր., 1994, հ6, էջ 207:

⁶ Տե՛ս **Կապուտիկյան Ս.**, «Կարդալով Թումանյանին», «Իմ ժամանակը», Եր., 1979, էջ 78:

դպրոց, ինչի արդյունքում աշակերտների գրագիտության պակաս է նկատվում:

Միշտ լավատես Թումանյանը գրում է. «Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնագոյներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե եղ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը:

...Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»:⁷

Կրթությունն իրապես բարդ գործըթաց է: Այն միայն սովորել_գիտենալ_գործել_լինել չի նշանակում, այլ նաև սովորել_ապրել և կառուցել վաղվա հասարակությունը: Ուսումն ու ուսուցումը, լինելով ամենաանհրաժեշտ խթանը, այսօր առավել նոր որակ ու բովանդակություն են ստացել, և այսօր էլ չափազանց արդիական են թումանյանական ընկալումները. «Պետք է ստեղծել մի ընտրովի բարձր մարմին, մի ապաստան հայ ուսուցչի համար, ուր նա կարողանա դիմել հալածված ժամանակ»,⁸ որպեսզի հավերժ լինի ուսուցչի լուսավոր գործը:

Կրթությունն ուղղակի կրթվելու ընթացքի անվանումն է: «Կրթվել» բառի մեջ մտնում են տարբեր բաներ, ինչպիսիք են սովորական դպրոցական կրթությունը, որտեղ ուսուցչի դիտարկումներով և գիտելիքների փոխանցելով մարդը ստանում է տեղեկություն, ինքնակրթությունը, որի ժամանակ մարդիկ գրելու, կարդալու, տեսնելու, լսելու միջոցով տեղեկություն են ստանում, ինչպես նաև առօրյա կյանքում անհրաժեշտ գիտելիքների ստացում՝ սեփական փորձի կամ մարդկային բնագործի միջոցով: Կարելի է ասել, որ կրթությունն ամեն ինչ է, ինչ մարդը կլանում է:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Դպրոցը միշտ էլ փորձել է կողմնորոշվել դեպի արդյունավետ ուսուցումն ու աշակերտը: Ըստ Թումանյանի՝ սա բավականին բարդ գործընթաց է, որը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի բացահայտվեն յուրաքանչյուր աշակերտի անհատական տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները. նրա համար սովորելը դառնա պատասխանատվության գիտակցում, ինքնուրույն լինելը՝ վարքագծի բնականոն դրսևորում: Գրողը ուսուցչական բացառիկ ընդունակություններ է համարում մանկավարժական վարպետությունը, դասավանդման կատարելիությունը, անսահման սերը երեխաների նկատմամբ, միաժամանակ, ճիշտ

⁷ Նույն տեղում:

⁸ **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, Եր., 1994, հ6, էջ 226:

բնորոշելով հայ ուսուցչի կարգավիճակը: Թումանյանը հատուկ խոսքով է վերաբերվում ուսուցիչների գրագիտությանը և զայրանում է, որ նրանց մեծ մասը թերիմացությամբ են մտնում դպրոց, ինչի արդյունքում աշակերտների գրագիտության պակաս է նկատվում:

Հիմնաբառեր. գրագիտություն, ուսուցում, Հովհաննես Թումանյան, արդյունավետ կրթություն, մանկավարժական վարպետություն

Օգտագործված գրականություն

1. Գրիգորյան Ա.Վ., Հայոց լեզվի և գրականության հարցեր, Եր., 1981, էջ 12:
2. Հովհաննիսյան Սուսաննա, Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900-1912թթ.), Երևան, 2012, էջ 478:
3. Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, Եր., 1994, հ6, էջ 307:
4. Կապուտիկյան Ս., «Կարդալով Թումանյանին», «Իմ ժամանակը», Եր., 1979, էջ 78:
5. Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, Եր., 1994, հ6, էջ 226:

Нунэ Мкртчян

Северный университет, к.ф.н., доцент

Анаит Алексанян

Студентка четвертого курса Северного университета

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ОБУЧЕНИЯ И ОБРАЗОВАНИЯ ПО ОВАНЕСУ ТУМАНЯНУ

Школа всегда старалась быть ориентированной на эффективное обучение и ученика. По мнению Туманяна, это достаточно сложный процесс, который должен быть организован таким образом, чтобы выявить индивидуальные возрастные и психолого-педагогические особенности каждого ученика. Для него обучение становится осознанием ответственности, самостоятельность - нормальным проявлением поведения. Исключительными педагогическими способностями писатель считает педагогическое мастерство, педагогическое совершенство, безграничную любовь к детям, в то же время правильно определяя статус армянского педагога. Туманян особенно обеспокоен грамотностью учителей и возмущен тем, что большинство из них поступает в школу с недостаточными знаниями, в результате чего формируется неграмотность учеников.

Ключевые слова: грамотность, преподавание, Ованес Туманян, эффективное образование, педагогическое мастерство

Nune Mkrtchyan

Northern University, PhD

Anait Aleksanyan

Student of the fourth course of the Northern University

**THE ROLE AND SIGNIFICANCE OF TEACHING AND
EDUCATION ACCORDING TO HOVHANNES TUMANYAN**

The school has always tried to be oriented towards effective teaching and the pupils. According to Tumanyan, this is a rather complicated process, which should be organized in such a way, as to reveal the individual age and psychopedagogical features of each student. For him, learning will become an awareness of responsibility, being independent - a normal manifestation of behavior. The writer considers pedagogic mastery, teaching perfection, boundless love for children to be exceptional teaching abilities, at the same time correctly defining the status of an Armenian teacher. Tumanyan is particularly concerned about the literacy of teachers and is angry that most of them enter school with insufficient knowledge, as a result of which pupils lack of literacy.

Keywords: literacy, teaching, Hovhannes Tumanyan, effective education, pedagogical mastery.

*Ներկայացվել է՝ 15.01.2023 թ.**Ընդունվել է՝ 04.02.2023 թ.*

**«ՉԱՐԻ ՎԵՐՋՆ» ԲԱԼԼԱԴԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Ավագյան Սուսաննա

Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչության պետ
susannaavagyan94@mail.ru

Լուսինե Գևորգյան

ՀՊՄՀ-ի 3-րդ կուրսի ուսանող

Լիաննա Գրիգորյան

ՀՊՄՀ-ի 3-րդ կուրսի ուսանող

1908 թվականից սկսած մինչ օրս «Չարի վերջը» ստեղծագործությունը շարունակում է պահպանել իր արդիականությունը և բարոյադաստիարակչական բնույթից ելնելով իր ուրույն տեղն է զբաղեցնում նախադպրոցական կրթության ուսումնական ծրագրերում: Հոգվածի շրջանակներում անդրադարձել ենք բալլադի հերոսներին, նրանց հոգեվիճակին և այն հաղորդագրությանը, որը նրանց կերպարի մեջ թաքցրել է Թումանյանը, սակայն փորձել ենք չշրջանցել նաև այն հանգամանքը որ ընթերցողների, այդ թվում դեռևս գրաճանաչության փուլին չհասած շահառուների՝ ունկնդիրների դիտանկյունից տեսանելի են այնպիսի հանգամանքներ, որոնք հեղինակի կողմից ուշադրության չեն արժանացել. մասնավորապես մոր կերպարի ընտրությունը, որը խեղաթյուրում է հայ կնոջը բնորոշ, բազմիցս թմբկահարվող գծերը. Հոգեբան Ջորջ Միդը ասում է, որ երեխայի նկատմամբ մայրական հոգատարությունը և կապվածությունը ունեն շատ խորը արմատներ և դրանց ճնշելը դժվար է, այսինքն՝ մայրական բնագործ բնածին է:⁹ Իսկ բնագործի մասին դարվինյան սահմանումը՝ «բնածին, կարծրատիպային և հատուկ վարք, որը հարուցվում է որոշակի տիպի գրգռիչների կողմից և այն շարունակվում է մինչև դրա սպառումը, նույնիսկ դրան պատճառած խթանման բացակայության պայմաններում», թույլ է տալիս նույն բնագործ տարածել նաև կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների վրա:

Նիկոլայաս Թինբերգեննի առաջ քաշած «վարքի հիերարխիկ մոդել»-ի համաձայն՝ բնագործ իրենից ներկայացնում է վարքագծային գործողությունների ավարտուն հիերարխիկ համակարգ, որը որոշակի գրգռիչներին պատասխանում է խիստ համակարգված գործողությունների համալիրով: Այսպես՝ հիերարխիկ շարքում բարձր ակտիվության, օրինակ՝ բազմացման համար պատասխանատու «էներգիան» առաջ է բերում այնպիսի մի շարք

⁹ Տե՛ս, **George H. Mead** (1907): «The Social Settlement: Its basis and function».

«ենթակա» ակտիվությունների դրսևորում, ինչպիսիք են բնի կառուցումը, ամուսնական, իսկ հետագայում՝ ծնողական վարքը՝ հոգատարություն, նվիրվածություն, ինքնագոհություն: Ուստի ծնողական վարքի նկարագրը՝ վաճ մոդելը ենթադրում է բնագոյային մյուս դրսևորումները նույնպես պայքար, ագրեսիա, իսկ հեղինակի ընտրած կերպարում նույնիսկ որոշակիորեն խախտվում են բնագոյի դրսևորման ստանդարտ ընկալումները:

Քննադատներն անդրադարձել են նախ թոչնի ընտրությանը, «եթե ազգային արժեքների ներկայացմամբ էր հանդես գալիս ապա ինչո՞ւ է նա որպես կերպար ընտրել այդ թոչնին, որն իր բնի հոտից միշտ զգվում է (հիշո՞ւմ եք Միլոշ Ֆորմանի եւ Ջեք Նիքոլսոնի «Թոփչ կկվի բնի վրայով» ֆիլմը) իր բնից եւ ձվերն ածում ուրիշ երգեցիկ թոչունների բներում, որպեսզի նրա՛նք թուխս նստեն իր ապագա ձագուկների վրա»¹⁰, սակայն հոգեբանամանկավաժական տեսանկյունից տարիքային ցածր շեմի ներկայացուցիչները դեռևս չունեն թոչնի վերաբերյալ գիտելիքներ և նրանց դիրքորոշումը սահմանափակվում է ստեղծագործության մյուս կերպարների համեմատությամբ, որպես կենդանական աշխարհի փոքրամարմին և անպաշտպան ներկայացուցիչ:

Ստեղծագործությունը տարբեր տարիքային խմբերում տարբեր ազդեցության գործակից է ապահովում, օրինակ գրաքննադատները և վերլուծաբանները ներկայացրել են այլ տեսանկյուններից, որոնց ընկալումը մանկահասակների կողմից անհեռանկարային է: Մասնավորապես հրապարակախոս և լրագրող Հակոբ Ավետիքյանը, կերպարները քաղաքական տեսանկյունից. «Աղվեսը հին-նոր Թուրքը» չէ՞, իմաստուն Ագռավը՝ կրթություն ստացած մեր ողջախոհ մտավորականությունը չէ՞, իսկ Շունը՝ Ռուսաստանը, որի հետ այնքան մեծ հույսեր էին կապում մեր այն ժամանակվա մարդիկ, ինչպես հիմա: Իսկ ո՞վ է Կլուն, այդ հիմար թոչունը, որն իր երեք ձագուկներից երկուսին աղվեսի բերանը զցելուց հետո մնաց մենակ իր մինուճարի հույսին: Նա մերօրյա այն Մայրիկը չէ՞, որ իր ձագին թուրքին գոհ տալուց հետո փառք էր տալիս Աստծուն, որ ձագերին գոհաբերող-միջնորդը դեռ կենդանի է ու մուրճը ձեռքին դեռ հոխորտում է եւ ակնկալում երախտագիտություն, որ մնացածին խնայել է, չի զցել թուրքի բերանը»¹¹...

Ստեղծագործության վերլուծությունը նմանօրինակ ազգայնական դիրքորոշմամբ է անդրադարձել նաև Վարդան Դերիկյանը: Թումանյանի «-Չարի վերջ»-ից դեպի «Անբուն կկու»-ն կտրուկ շրջադարձը մեծապես անհասկանալի և չպատճառաբանված կմնա, եթե մենք նկատի չունենանք Ս. Մուրադյանի հիշյալ մեկնաբանությունը: Չենք կարող բացատրել ոչ միայն

¹⁰ Տե՛ս, **Հակոբ Ավետիքյան**, «Ազգ» շաբաթաթերթ. Azg.am «Ախ դու կկու, հիմա՛ր կկու» 11/07/2021

¹¹ Տե՛ս, **Հակոբ Ավետիքյան**, «Ազգ» շաբաթաթերթ. Azg.am «Ախ դու կկու, հիմա՛ր կկու» 11/07/2021

Թումանյանի «Չարի վերջի» հետ կապված աշխարհայացքային փոփոխությունը, այլևս սյուժեի, թող ներվի ասել, թեմատիկ և կառուցվածքային ձևախեղումը՝ աղվեսին գայլով փոխարինելով: Որքան էլ որ անտրամաբանական կարող է հնչել, սակայն պետք է ասել, որ Թումանյանը, վերափոխելով ավանդական պատմությունը, ավելի հարազատորեն է ներկայացրել «Գայլի և աղվեսի» պատմությունը. գայլի՝ որպես դաժան բռնապետի և աղվեսի՝ որպես ժողովրդի շահերի պաշտպան ներկայացող նոր և ավելի վատ բռնակալի ծնունդը, ով տարբեր փոխակերպումներով Քաջ Նազարի նման հանդես է գալիս պատմական միանգամայն տարբեր իրավիճակներում: Թոչնտի ձագերին խժոռո աղվեսին Թումանյանը գայլ է դարձրել և չի հանձնել շան դատաստանին, որպեսզի ստեղծի գայլ-աղվես, ըստ այդմ և՛ հին ցար ու նոր բռնակալ հակադրությունը:¹²

Ծանոթագրություններում առկա են մի քանի ցավալիորեն աչք ծակող տեսակետներ նույնպես, օրինակ ըստ Բ.Գ.Պ., պրոֆ. Ս. Մուրադյանի «Թումանյանի կերպավորած կենդանիները հիշեցնում են ժամանակի քաղաքական դեմքերին. աղվեսը՝ Լենինին, գայլը՝ Նիկոլայ ցարին և այլն»: Այսպիսի տեսակետները բնականաբար չէին կարող վրիպած լինել և բուռն քննարկումների հիմք չհանդիսանալ:

Բերված պարբերությունը նկատի ունենալով՝ Ա. Եղիազարյանը գրում է. «Ինչ հիմքեր կան այսպիսի անառարկելի հայտարարություն անելու համար, որտեղ էն այն փաստերը, որոնք գայլի մեջ ցուցադրում են Նիկոլայ ցարին, իսկ աղվեսի մեջ այդքան հստակ մատնացույց են անում Լենինին: Չկան այդպիսի փաստեր»:

Կան բազմաթիվ դրական մոտեցումներ նույնպես, Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Բաբայանը մեկնաբանել է. «Ես շատ երկար ժամանակ չէի սիրում այդ հեքիաթը, մտածում էի՝ այս ի՞նչ հեքիաթ է, կկուն իր ձագերին տալիս է աղվեսին: Հետո հասկացա, որ այդ հեքիաթը հանճարեղ հեքիաթ է, այն մեր վախերի մասին է: Մենք պատրաստ ենք զոհաբերել մեր երեխաներին, որովհետև մեզ վախեցնում են: Սա շատ խոր իմաստ ունի»:

Եվ Թումանյանը շատ ճիշտ ձև է ընտրել՝ սկսել հեքիաթներից, երեխաներից, որովհետև ինչ գաղափարներով կմեծանա երեխան, հետագայում այդպիսի քաղաքացի նա կդառնա: Դրա համար կարծում ենք, որ մենք կարիք ունենք ամեն օր շփվել Թումանյանի հետ, բայց շփվել ոչ թե մակերեսային, այլ խորը:¹³

Փոքր-ինչ այլաբանորեն են անդրադարձել արտասահմանյան գրականությունում: Մասնավորապես, Ամերիկացի իրավաբան Սփեսսարդ Լինդսի Հոլլանդը (Spessard Lindsey Holland et al) այս տողերում տեսնում է ծա-

¹² Տե՛ս, Գրական թերթ, grakantert.am, Դիտողությունների սպասումով, Վարդան Դևրիկյան, 29/04/2022:

¹³ Տե՛ս, **Ռուբեն Բաբայան**, «Չարի վերջը», Medialab.am, 19/02/2020:

ռում գտնվող բնի նկատմամբ ատրոֆացված սեփականատիրական մոտեցում:

Մոր կերպարի վերլուծության մեջ սեփականատիրական զգացում է արձանագրում նաև Գերմանացի հոգեբան Ռոլֆ վան Դիքը, (Rolf van Dick) սակայն այն դրսևորվում է ձագերի հանդեպ:¹⁴

*Էս մինն, ահա՛,
Տա՛ր քեզ ծառա,
Միայն թե էսպես
Մի ջնջիր մեզ՝
Բնույ, տեղույ,
Ամբողջ ցեղույ:*

Այսպիսով կկվի ընտրությունը հավասարագորեցվում է սեփականությունների միջև, և որոշակիորեն արդարացվում գենի պահպանման նկատառումով արված ընտրությունը:

*Ու թող դադար՝
Վերջինը գեթ
Մընա ինձ հետ...*

Եվ գրականությունը լի է այսօրինակ բազմաթիվ վերլուծություններով, քննադատություններով: Մինչդեռ նախադարձական տարիքի երեխաների ընկալման մեջ հեղինակի առաջնային գաղափարախոսությունը «չարին» պատժելու վերաբերյալ արդարացվել է, և բալլադը այնպիսին է իր բնույթով, որ մանկավարժներին շատ օգնում է երեխաների դաստիարակության և մտածողության մեջ հստակ ազդեցություն ունենալու հարցում: Երբ մանկավարժը ընթերցում է բալլադը երեխաների համար, նրանք իրենց մեջ հետևություններ են անում, հարցեր գտնում և մտնում քննարկման մանկավարժի հետ: Բալլադը հստակ արտացոլում է երեխա-ծնող, բարի չար, արդարություն անհավասարություն և շատ այլ սոցիալ-հոգեբանական խնդիրներ, փորձում տալ գլխավոր խնդրին տրամաբանական լուծում: Սակայն երկրորդական հարցերը, որոնք հուզական մեծ ազդեցություն են թողնում երեխաների և նրանց գիտակցության վրա, դեռևս հստակ ուսումնասիրությունների չեն ենթակվել, հետևաբար շարունակում են մատուցվել սերունդներին առանց բացասական վարկածների կանխարգելման: Ինչպես փաստում է հետազոտությունը նախադարձական տարիքի ունկնդիրների մոտ ծագած հարցերը բավական հեռու են վերլուծաբանների կողմից ներկայացված մեկնաբանություններից: Եվ նրանց կերպարները այլ տեսանկյունից են հուզում:

Թումանյանագետները կարող են բացատրել, թե հանճարեղ պոետը ի՞նչ հանգամանքներում, այսպես կոչված աշխարհաքաղաքական ի՞նչ պայմաններում, ազգային-քաղաքական տրամադրությունների ո՞ր հան-

¹⁴ Տե՛ս, Van Dick, R., Ciampa, V., & Liang, S. (2018). Shared identity in organizational stress and change. Current Opinion in Psychology, 23, 20-25:

գրվանում, և ինչու է գրել իր անմահ այս բալլադը, որը «կրում է 1908 թվականը՝ իր աշխարհաքաղաքական վայրիվերումներով», սակայն այդ հանգամանքը չի արդարացնում ստեղծագործության թաքնված բացասական ազդեցության և ոչ արդյունավետ հետևանքները անտեսելը, որոնք հավանաբար հեղինակի կողմից կարևորության չեն արժանացել:

«Չարի վերջը» իր մեջ ներառում է մանկավարժական հիմնական չորս հասկացությունները: Թերևս բալլադում երեխաներին մատչելի ձևով ներկայացվում են չարի, խեղճի, բարու, անմեղի, խորամանկի և խելացիի տեսակները, որոնք անձի ձևավորման կարևոր հատկանիշներ են: Անձի ձևավորման հատկանիշների արտացոլմանը զուգընթաց, կրթությունը երեխայի մեջ ուսուցման շնորհիվ մտցնում է դաստիարակության որոշակի նորմեր: Հիմնականում այս ամենը երեխայի մեջ ձևավորվում է մտավոր, բարոյական, գեղագիտական դաստիարակության միջոցով, որը նաև աշխարհայացքի ձևավորման հնարավորություն է տալիս: Սակայն երեխաների վրա ցանկալի ազդեցությունից բացի ունենում ենք նաև այլ հետևանքներ, որոնց հանդեպ ոչ մասնագիտական մոտեցումները և անտարբերությունը կարող են հանգեցնել բացասական հետևանքների, մինչև անգամ պատճառ հանդիսանալ մանկական տրավմաների ձևավորման համար:

Կկվի կերպարի ասոցացումը մոր հետ ունենում է հարցադրումների տրամաբանական զարգացումը, որոնց դեպքերում երեխաները կարող են բարձրաձայնել և ակամայից հարցերը մնում են չբարձրաձայնված և ունենում են թագիտակացական վարկածներ. «մայրիկը կարող է մեզ նման իրավիճակում հանձնել չար մարդկանց» անվստահություն է ձևավորվում մոր կերպարի նկատմամբ: «Ում կընտրի մայրիկը» ինչու ինձ, կամ ինչու ընտանիքի մյուս երեխաներին: Առաջինի դեպքում կարող է առաջանալ մրցակցություն, որը կարող է հանգեցնել չարդարացված թշնամանքի և արդյունքում հոգեբանական դրսևորումներում սկսի ագրեսիվ և այլ բացասական վարքագծի պատճառ հանդիսանալ:

Հոգեբանական վերլուծության շրջանակներում անդրադարձել ենք «Չարի վերջը» բալլադի, ինչպես առաջնային, այնպես էլ ոչ պակաս կարևոր և շեշտադրված երկրորդական խնդիրներին, փորձելով վերլուծել դրանց երեխաների վրա թողած ազդեցությունը: Բալլադը ազդեցություն է ունենում երեխաների հոգեբանության վրա, քանի որ նախադպրոցական տարիքում նրանք խոցելի են հոգեբանական՝ հուզական և մտածողության առումով:

Բալլադի հոգեբանամանկավարժական ազդեցությունը նախադպրոցական երեխաների մոտ բավականին ակնառու է: Երեխաները շատ լուրջ են վերաբերվում բալլադում հերոսների գործողություններին, անհանգրստացած են նրանց ճակատագրով, պատրաստ են մտնել քննարկման մեջ և առաջարկել տարբերակներ: Հոգեբանորեն նրանց մոտ շատ մեծ հուզական դաշտ է բացվել, որի մեջ հակասությունները ևս շատ են, բարդ է լինել օբ-

յեկտիվ և դատել առանց զգացմունքների, հատկապես նախադարձական տարիքում: Բալլադի շնորհիվ մանկավարժական տեսանկյունից դաստիարակչական շատ գեղեցիկ նորմեր են ձևավորվում նրանց մոտ, ինչպես նաև վարքի հետ կապված հստակ սահմաններ, ուրիշի իրավունքները չխախտելու, սեփական քայլերի մեջ արդարամիտ լինելու և այլն: Աղվեսի ազահության վերաբերյալ բացասական մոտեցում է ձևավորվում, ինչպես նաև կկվի միամտությունը և խեղճ պահվածքն է բարկացնում նրանց: Ագռավի և շան կերպարները օգնում են նրանց մոտ վերականգնել արդարության հանդեպ հավատը և չարի հանդեպ անտարբերություն չցուցաբերելը, հնարավորի չափով օգնության կարիք ունեցողին աջակցել, փորձել լինել խելացի բարության մեջ:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը» ստեղծագործությունը բավական գրավիչ է ու շատ է վերլուծվել՝ և՛ դրական, և՛ բացասական տեսանկյունից: Հոդվածում ուսումնասիրել ենք այս բալլադի հոգեբանամանկավարժական ազդեցությունը նախադարձական տարիքի երեխաների մտածողության վրա: Հարկ է նշել, որ «Չարի վերջը» անտարբեր չի թողել ոչ միայն հայ, այլև արտասահմանյան բազմաթիվ հեղինակների, մասնավորապես՝ Հակոբ Ավետիքյանին, Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Լեմբին, արդի լեհ քաղաքագետ Բրոնիսլավ Կոմորովսկուն, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին (2013-2021 թթ.) և այլոց:

Հիմնաբաներ. մտածողություն, վերլուծություն, հետազոտություն, դաստիարակություն հոգեբանություն, մայրական բնագո, վարք, նախադարձական

Օգտագործված գրականություն

1. **George H. Mead** (1907): «The Social Settlement: Its basis and function».
2. **Հակոբ Ավետիքյան**, «Ազգ» շաբաթաթերթ. Azg.am «Ախ դու կկու, հիմա՛ր կկու» 11/07/2021
3. Գրական թերթ, grakantert.am, Դիտողությունների սպասումով, Վարդան Դերիկյան, 29/04/2022:
4. **Ռուբեն Բաբայան**, «Չարի վերջը», Medialab.am, 19/02/2020:
5. **Van Dick, R., Ciampa, V., & Liang, S.** (2018). Shared identity in organizational stress and change. Current Opinion in Psychology, 23, 20-25:

ПСИХООБРАЗОВАТЕЛЬНОЕ ВОЗДЕЙСТВИЕ БАЛЛАДЫ "КОНЕЦ ЗЛА" НА МЫШЛЕНИЕ ДОШКОЛЬНИКОВ

Авагян Сусанна
Лусине Геворгян
Лианна Григорян

Данное произведение Туманяна довольно широко распространено и удостоилось многочисленных анализов как с положительной, так и с отрицательной точки зрения, что в свою очередь делает его еще более привлекательным. В статье рассматривается психолого-педагогическое влияние баллады О. Туманяна “конец злу” на мышление детей дошкольного возраста. Выявлены точки зрения, которые, пожалуй, не учитывались в учебно-практических целях, однако, как вторичный фактор воздействия, могут не уступать своей рефлексией и негативно влиять с психологической точки зрения. Произведение вызвало интерес не только армянских, но и многих зарубежных авторов: Акоп Аветикян, профессор Калифорнийского университета Майкл Лемб, современного польского политолог Бронислав Коморовский, председателя Палаты адвокатов РА Ара Зограбяна (2013-2021г.) и других.

Ключевые слова: мышление, анализ, исследование, психология воспитания, материнский инстинкт, поведение, дошкольное образование

THE PSYCHO-EDUCATIONAL EFFECT OF THE BALLAD "THE END OF EVIL" ON THE THINKING OF PRE-SCHOOL CHILDREN

Avagyan Susanna
Lusine Gevorgyan
Lianna Grigoryan

This work of Tumanyan is quite popular and has received multifaceted analysis and positive and protective elements, which make it even more enchanting. In the article we studied the psycho-pedagogical influence of H. Tumanyan's "The End of the Wicked" ballad on the thinking of preschool children. We have brought up perspectives that were probably not considered in the work's teaching objectives, but are not relevant as secondary influence factors and may have a negative impact from a psychological viewpoint. The work aroused interest not only among Armenians, but also among many foreign authors: Hakob Avetikyan, Michael Lamb, professor of the University of California Institute, Polish political scientist Broinislav Komorowski of Ardi, Ara Zohrabyan, president of the RA Chamber of Advocates (2013-2021), and others.

Keywords: thinking, analysis, research, teaching psychology, maternal instinct, behavior, preschool.

Ներկայացվել է՝ 21.01.2023 թ.
Ընդունվել է՝ 28.02.2023 թ.

Թունյան Անի

Երևանի Հյուսիսային համալսարանի, «Բանասիրության և մանկավարժության» ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողուհի
ani.tunyan.2001@mail.ru

Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Վարդուհի Դավթյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԻՉԸ

Հովհաննես Թումանյանի պոեզիայի համամարդկային հնչեղության վկայությունն են բազմալեզու այն թարգմանությունները, որոնք վերաբերել են վրաց, ռուս, պարսիկ գրականության կարկառուն ներկայացուցիչների դասական գործերին:¹

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հովհ. Թումանյանի թարգմանական գրչի առանձնահատկությունները, համեմատական և վերլուծական մեթոդների միջոցով ցույց տալ բնագրի և թարգմանված երկի միջև եղած շահեկան տարբերությունները, զգացմունքի և մտքի ներդաշնակությունը:

Հովհ. Թումանյանը շատ էր կարևորում թարգմանական գրականության զարգացումը մեզանում: Նա վստահ էր, որ դրա համար նախ՝ հարկավոր է կատարել ճաշակով ընտրություն, ապա՝ ունենալ լավ լեզու: Նա ուներ և՛ գրական բարձր ճաշակ, և՛ չերկրորդված լեզու, այնպես որ, երբ կարդում էնք մեծ բանաստեղծի կատարած թարգմանությունները, տպավորություն է ստեղծվում, թե դրանք ոչ թե թարգմանություններ են, այլ բնօրինակներ:

Վերլուծելով Հովհ. Թումանյանի «Տասը հեքիաթ» ժողովածուն, որում տեղ են գտել Ամենայն հայոց բանաստեղծի այն չորս հեքիաթները, որոնք թարգմանվել են վրաց բանաստեղծ Խասեբ Գրիշաշվիլիի կողմից, փաստում ենք այն, որ Հովհ. Թումանյանը կարևոր նշանակություն է տվել և մասնավոր վերաբերմունք ցուցաբերել վրացական գրականության նկատմամբ: Նմանապես ռուս գրականության, մասնավորապես՝ Միխայիլ Լերմոնտովի և Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությունների հանդեպ նա չի դադարել արտահայտել իր հիացմունքը, քննադատական հոդվածներում միշտ առանձնացրելով այդ երկու հանճարներին: Այսպես՝ «Կովկասի մեծ որդեգիրները» հոդվածում Հովհ. Թումանյանը գրում է. «Արդյոք հարավի ու լեռնաստանի ժառանգական արյո՞ւնն է, որ խոսեց նրանց մեջ, թե՛ ջինջ ու հստակ մեծություններին ձգտող բանաստեղծի ոգին, ո՞վ գիտի, թերևս և՛ մինը, և՛ մյուսը, բայց նրանք Կովկասը սիրեցին, Կովկասը՝ նրանց, ու մեծ Կովկասին մեծ որդեգիրներ եղան հավիտյանս հավիտենից»²: Նրանց ստեղծագործությունների մեջ Հովհ. Թումանյանը գտավ պատկերի և

¹ Տե՛ս <http://toumanian.am/arm/museum/scientific-part/tumanyani-poezian>

² Տե՛ս Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 319:

տրամադրության՝ իր ստեղծագործական աշխարհին հարազատ դրսևորումներ:

Ընթերցելով Մ. Լերմոնտովի «Желание» ստեղծագործությունը և Հովհ. Թումանյանի թարգմանությունը՝ «Իդեա» վերնագրով՝ նկատում ենք երկու ստեղծագործությունների միջև ակնբախ որոշ նմանություններ և տարբերություններ: Առանց թարգմանությունը հիշելու՝ ընթերցելով բնօրինակը՝ դժվար է զգալ պատկերավոր խոսքի զգայական ազդեցությունը: Թարգմանության մեջ Հովհ. Թումանյանն ընտրել է դիպուկ բառեր՝ ավելի պատկերավոր դարձնելով ստեղծագործությունը: Հենց առաջին տողից էլ երևում է, որ Հովհ. Թումանյանի նկարագրության մեջ գործածված են «նուրբ» բառեր՝ ստեղծագործությանը տալով հուզական շեշտեր: Չնայած նրան, որ ագռավը և հավը պատկանում են թռչունների դասին, Հովհ. Թումանյանը նախընտրել է տափաստանային ագռավին փոխարինել վայրենի հավի գեղարվեստական պատկերով: Արևմուտք սլացող թռչունները, նրա նկարագրամաբ, սլանում էին Տարոն, ինչը, մեր ընկալմամբ, Հովհ. Թումանյանի թարգմանությանը հաղորդել է հայրենասիրական շունչ:

Հովհ. Թումանյանի գրական ժառանգության մեջ կարևոր և հաստատուն տեղ ունի թարգմանությունը: Շուրջ երեսուն տարի նա զբաղվել է արձակ և չափածո երկերի թարգմանություններով, որոնց անդրադարձել են գրեթե բոլոր հայտնի թումանյանագետները՝ Ա. Տերտերյանից մինչև Մ. Զանփոլադյան, Հ. Թամրազյանից մինչև Էդ. Զրբաշյան:

Հետաքրքիր է Հովհ. Թումանյանի կատարած ընտրողական մոտեցումը թարգմանելիք գործերի նկատմամբ: Թումանյան-թարգմանիչը կարծեք չի սիրում կենտրոնանալ որևէ հեղինակի գրական ժառանգության վրա՝ կամ թարգմանել որևէ հեղինակի բոլոր ստեղծագործությունները: Այսպես՝ Ա. Ս. Պուշկինից նա թարգմանել է յոթ բանաստեղծություն, իսկ Մ. Լերմոնտովից՝ երեք բանաստեղծություն և մեկ պոեմ:

Ա. Ս. Պուշկինի «Ազատություն» ներբողից թարգմանել է ընդամենը մեկ քառատող.

*Ատում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:*

Ըստ իս, Հովհ. Թումանյանը Ա. Ս. Պուշկինի «Ազատություն» ներբողից թարգմանել է հենց այս հատվածը, քանի որ նա, ապրելով հայկականությանն ու ազգային արժեքներին սպառնացող օր օրի վատթարացող ժամանակահատվածում, լցվում է ատելությամբ՝ ընդդեմ բռնության և ստրկության շղթաների: Հայտնի է, որ Հովհ. Թումանյանը շատ անգամ է հալածվել իշխանությունների կողմից, ինչն էլ պատճառ է դարձել ստեղծագործության նկատմամբ ցուցաբերած մասնավոր հետաքրքրության:

Մեզ է հասել թումանյանական թարգմանությունների ճոխ ընտրանի: Նա, բացի մայրենի լեզվից, լիարժեք տիրապետել է նաև ռուսերենին: Երբեմն դիմել է այլ օտար լեզուների տիրապետող ընկերների օգնությանը՝ օգտվելով նրանց կատարած տողացիներից:

Հովհ. Թումանյանի կողմից թարգմանված Ա. Ս. Պուշկինի «Ձմեռվա իրիկունը» բանաստեղծությանը անդրադարձել են շատերը և ոչ մեկ անգամ: Այն կատարյալ է թումանյանական թարգմանության մեջ: Հենրիկ Հովհաննիսյանը, գործն անվանելով հայ թարգմանական արվեստի գագաթը, նկատում է, որ Հովհ. Թումանյանի առաջին թարգմանության՝ «Եթե իրավ է, որ գիշերները, Երբ որ հանգչում են մարդիկ ներքևում, Երկնքից իջնում լուսնի շողերը...», և «Ձմեռվա իրիկունի» միջև ոչ միայն որակական մեծ տարբերություն կա, այլև երկու տասնամյակ, որի ընթացքում Հովհ. Թումանյանը գտել է այն չափը, որը ոչ միայն հատուկ է հայ ոտանավորին, այլև հարագատ է և՛ ռուսականին, և՛ եվրոպականին:³

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է գերթ գագան:

Ցանկացած թարգմանություն, որը կատարվել է Հովհ. Թումանյանի կողմից, ունեցել է այլ պատկերային համակարգ, ընթերցողին տվել և տալիս է այլ ապրումներ, սակայն տրամագծորեն ոչ տարբեր բնագրային տարբերակից: Ամեն բառի մեջ մեծ բանաստեղծը ցույց է տվել իր խոհերը: Նրա բնորոշմամբ՝ այդ «գոհարը ռուս գրականության մեջ» նրան հեշտ չի տրվել:

Կարդալով Լև Տալստոյի «Պառավ ձին» ստեղծագործության թումանյանական թարգմանությունը՝ զգում ենք բացառիկ գրչի ինքնատիպություն, բառերի դիպուկություն: Կարդալով և ուսումնասիրելով Պուշկինի «Заклинание» ստեղծագործությունը և համեմատելով Հովհ. Թումանյանի թարգմանության հետ՝ նկատում ենք, որ Հովհ. Թումանյանը դիպուկ բառերով է նկարագրում յուրաքանչյուր պատկեր:

Եթե իրավ է, որ գիշերները,
Երբ որ հանգչում են մարդիկ ներքևում,
Երկնքից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վերա դողողում.
Եթե իրավ է, որ այն ժամերին
Դատարկվում են լուռ գերեզմանները,
Օ՛, ես կըկանչեմ իմ սիրելիին,
Կըկանչեմ նրա վսեմ ըստվերը:
— Արի՛, հայտնվի՛ր, սիրելի պատկեր,

³ Տե՛ս Զբաղյան Էդ., Պուշկինը և հայ բանաստեղծները, Ե., 1999

Ինչպես էիր անջատման ժամին,
Սառն ու դալկադեմ, ինչպես ձմռան օր,
Խանգարած, խեղած տանջանքով վերջին:

— Ախ, արի՛, ինչպես աստղիկ հեռավոր,
Ինչպես թույլ հրնչյուն թեթև զեփյուռի,
Կամ թեկուզ ինչպես տեսիլ ահավոր,
Ինձ համար մին է, արի՛, միայն արի՛ ...

Հովհ. Թումանյանին գրավել է նաև եվրոպական գրականությունը:
Գերմանացի հանճարեղ գրող Վ. Գյոթեից թարգմանել է երկու բա-
նաստեղծություն՝ «Վարդը» ու «Լերանց Լանջերը»:

Հովհ. Թումանյանի չքնաղ թարգմանությամբ հայ ընթերցողին ներ-
կայացվող «Վարդը» բանաստեղծությունը բոլորիս է հայտնի: Հաջորդաբար
ներկայացնենք գերմաներեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը.

Heidenroslein
Մարգագետնի փոքրիկ վարդը
Sah ein Knab' ein Röslein stehn,

Մի փոքրիկ տղա տեսավ մի փոքրիկ վարդ,
Röslein auf der Heiden,
Փոքրիկ վարդը մարգագետնում,
Was so jung und morgenschön,

Այնքան թարմ ու արփիագեղ էր,
Leif er schnelles nah zu
Արագ մոտ վազեց տեսնելու այն,
Sah's mit vielen Freuden.
Մեծ ուրախությամբ նայեց դրան:
Röslein, Röslein, Röslein rot,

Փոքրիկ վարդ, փոքրիկ վարդ, փոքրիկ կարմիր վարդ
Röslein auf der Heiden.
Փոքրիկ վարդ մարգագետնում:
Knabe sprach: Ich stech dich,

Փոքրիկ տղան ասաց. «Ես քեզ կքաղեմ,
Röslein auf der Heiden,
Փոքրիկ վարդը մարգագետնում»:
Röslein sprach: Ich steche dich,

Փոքրիկ վարդն ասաց. «Ես քեզ կծակեմ,
Dass du ewig denkst an mich,

Որ դու իմ մասին հավիտյան մտածես,

Und ich will's nicht leiden.

Եվ ես դրա համար չեմ ցավի»:

Röslein, Röslein, Röslein rot,

Փոքրիկ վարդ, փոքրիկ վարդ, փոքրիկ կարմիրվարդ

Röslein auf der Heiden.

Փոքրիկ վարդ մարգագետնում:

Und der wilde Knabe brach's

Եվ վայրենի փոքրիկ տղան քաղեց

Röslein auf der Heiden:

Փոքրիկ վարդը մարգագետնում:

Röslein wehrte sich und stach,

Փոքրիկ վարդը դիմադրեց և ծակեց,

Half ihr doch kein Weh und Ach,

Բայց նրան ոչ մի ախ ու վախ չօգնեց,

Musste es eben leiden.

Եվ նա տառապեց:

Röslein, Röslein, Röskein rot,

Փոքրիկ վարդ, փոքրիկ վարդ, փոքրիկ կարմիրվարդ

Röslein auf der Heiden.

Փոքրիկ վարդ մարգագետնում:⁴

Ընթերցելով գերմաներեն բնօրինակը՝ նկատում ենք, որ երեք տների վերջին երկու տողերը ամփոփոխ կրկնվում են, իսկ Հովի. Թումանյանը դրանց տվել է նոր և իրեն հատուկ շունչ՝ փոփոխելով մեկական բառ:

Հովի. Թումանյանը Վ. Գյոթեի ստեղծագործություններից թարգմանության համար ընտրել է նաև «Լերանց լանջերը».

Լերանց լանջերը

Նիրհում են մրթում,

Խաղաղ մարգերը մըշուշ է պատում.

Ճամփեն հանդարտվել,

Չի շարժվում քամի,

⁴ Տե՛ս Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, ԼԻՆԳՎԱ. 2015 թ., Երևան

http://language.sci.am/sites/default/files/book/towmanyane_targmanich.pdf

Ուր որ է դու էլ
Կըքընես հիմի: (1917 թ.)

Հովհ. Թումանյանի ավագ որդին՝ Մուշեղը, քրոջը՝ Աշխենին գրած մի նամակով ուղարկում է երկու բանաստեղծություն՝ ցանկանալով, որ նա որոշի՝ լավն են, թե՞ ոչ⁵: Դրանցից մեկը Կորսակի «В кусте ароматной сирени» բանաստեղծության թարգմանությունն էր: Մուշեղը նկատում է. «Էս ոտանավորը օրիգինալից լավն է»:⁶

Ամբողջ գիշերը խոսեց անդադար
Սոխակն հասմիկի թրփում բուրավետ,
Ու հենց արշալույս բացվեց ոսկեվառ,
Թըռավ առաջին շողի հետ:

Ողբում են հակված ճյուղերը թափուր
Անցած գնացած ժամերն աննրման,
Մով ծաղիկներից թափվում են լուռ-լուռ
Գոհար ցողերը՝ արցունքն անջատման:

Այսպիսով, Հովհաննես Թումանյանի անթերի թարգմանված ստեղծագործությունները փաստում են, որ թարգմանություն անելը միշտ էլ եղել է բաստեղծի աշխատանքի անբաժան և կարևոր մասնիկը: Թարգմանությունը նրա համար չի եղել «պարապ ժամանակվա զբաղմունք»: Մեծ գրողը իր թարգմանություններում դրել է իր տաղանդի ամբողջ ուժը: Ցանկացած ստեղծագործություն՝ լինի հեքիաթ, բալլադ կամ բանաստեղծություն, կրում է թումանյանական շնչի ազդեցությունն ու նրա ժողովրդայնության կնիքը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում ներկայացված են դիտարկումներ Հովհաննես Թումանյանի թարգմանչական արվեստի առանձնահատկությունների վերաբերյալ: Մասնավորապես ռուս և եվրոպական գրականության ներկայացուցիչների ընտրելի ստեղծագործությունների թումանյանական թարգմանությունները կատարված են արվեստի ուժով: Նկատելի է հաճախ թարգմանության առավելությունը բնագրի նկատմամբ: Մա վկայությունն է մի կողմից՝ գրողի՝ լեզուների գերազանց իմացության, մյուս կողմից՝ պատկերի ճշգրիտ և դիպուկ ընկալման:

⁵ Տե՛ս Թումանյանի ընտանիքի նամակներին, Կազմել և ծանոթագրել է Իրմա Սաֆրազբեկյանը, Ե., 2009:

⁶ Տե՛ս <http://language.sci.am/sites/default/files/book/>

Հիմնաբաներ. Հովհաննես Թումանյան, Ա. Ս. Պուշկին, Մ. Լերմոնտով, Վ. Գյոթե, թարգմանություն:

Օգտագործված գրականություն

1. **Դերիկյան Վ.,** Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթները, Ե. 2010:
2. Թումանյանի ընտանիքի նամակներին, Կազմել և ծանոթագրել է Իրմա Սաֆրազբեկյանը, Ե., 2009:
3. **Հախվերդյան Լ.,** Թումանյանի աշխարհը, Ե., 1966:
4. **Ջանիդադյան Մ.,** Պուշկինի բալլադները Թումանյանի թարգմանությամբ, հ. 1, 1974:
5. **Ջրբաշյան Էդ.,** Պուշկինը և հայ բանաստեղծները, Ե., 1999:
6. **Թումանյան Հովհ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Ե., 1990:
7. Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, ԼԻՆԳՎԱ. 2015 թ., Երևան
http://language.sci.am/sites/default/files/book/towmanyane_targmanich.pdf

ПЕРО ПЕРЕВОДА ОВАНЕСА ТУМАНЯНА

Тунян Ани

В статье представлены наблюдения над особенностями переводческого искусства Ованеса Туманяна. В частности, туманские переводы избранных произведений представителей русской и европейской литературы выполнены с силой искусства. Часто заметно превосходство перевода над оригиналом. Это свидетельствует о прекрасном знании писателем языков, с одной стороны, и точном и точном восприятии образа, с другой.

Ключевые слова: Ованес Туманян, А. С. Пушкин, М. Лермонтов, В. Гёте, перевод.

THE TRANSLATION PEN OF HOVHANNES TUMANYAN

Tunyan Ani

The article presents observations on the features of translation art of Hovhannes Tumanyan. In particular, Tumanyan's translations of selected works of Russian and European literature were made with the power of art. The superiority of the translation over the original is often noticeable. This is the evidence, on the one hand, of the writer's excellent knowledge of languages, and on the other hand, of the precise and accurate perception of images.

Keywords : Hovhannes Toumanyanyan, A. S. Pushkin, M. Lermontov, V. Gytte, translation.

Ներկայացվել է՝ 15.01.2023 թ.

Ընդունվել է՝ 11.02.2023 թ.

Երախտագիտության խոսք

Յուրաքանչյուր կենսագրություն իմաստավորվում է անցած ճանապարհին թողած հետքով: Կյանքի ամեն մի օր դառնում է կենսամատյանի էջ ու ապրած տարիների բովանդակություն: Այսպես է բնութագրվում Բորիս Մանթաշի Մակիչյանի անցած կյանքի ուղին, մեծատառով Մարդ, ով այս տարի կդառնար 85 տարեկան:

Բորիս Մանթաշի Մակիչյանի ակունքները տանում են դեպի Ալավերդի, դեպի հայրենի Օձուն, ուր 1938 թ.-ին ուսուցչի ընտանիքում ծնվեց միակ զավակը: Դժվար մանկություն էր սպասվում նրան: Երեք տարեկան էր, երբ հայրը մեկնեց պատերազմ ու զոհվեց Կերչ քաղաքում: Մայրը՝ Մարուս Մակիչյանը, որն այդ տարիներին աշխատում էր գյուղի դպրոցում՝ որպես գրադարանավարուհի, մեծացրեց որդուն՝ նրա հետ կապելով իր բոլոր երազներն ու հույսերը:

Ապրում էին մի փոքրիկ սենյակում, ուր երկու մահճակալ կար ու համեստ կահ-կարասի: Բերքահավաքի ժամանակ այգու խնձորը հավաքում ու լցնում էին հատակին՝ մահճակալների միջև: Խնձորները խանգարում էին տղային տեսնել մորը, դրա համար էլ ինքն իրեն խոսք էր տվել, որ երբ մեծանա, մի հսկա տուն պիտի կառուցի: Եվ կառուցեց...

Կառուցեց ոչ թե սովորական, այլ մի պատկառելի կրթօջախ՝ «Հյուսիսային համալսարան» անվանմամբ: Եվ այդ տանը մինչ այսօր կրթություն են ստանում հազարավոր երիտասարդներ՝ չկռահելով անգամ, թե տանտերը ինչ դժվարություններով է հարթել իր կյանքի ճանապարհը:

1955 թվականին գերազանց գնահատականներով ավարտելով միջնակարգը՝ Բորիս Մակիչյանը ընդունվում է Գյումրիի Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: Մակայն ստիպված է լինում թողնել ուսումը՝ սոցիալական ծանր պայմանների պատճառով: Վերադառնում է Օձուն, աշխատում կոլտնտեսությունում, ապա դպրոցում՝ առաջնորդվելով միշտ հաղթող ճանաչվելու և լավագույնը լինելու սկզբունքով:

1958 թվականի օգոստոսին Բորիս Մակիչյանն ընդունվում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի հեռակա բաժինը և նույն թվականին գորակոչվում խորհրդային բանակ, որտեղ արժանանում է Գերազանցության կրծքանշանի և բազմաթիվ պատվոգրերի, ինչպես նաև պարտադիր ծառայության համար սահմանված զինվորական ամենաբարձր կոչմանը՝ պարտադիր ծառայության ավագ: Ծառայությունն ավարտելով՝ 1961 թ.-ին վերադառնում է ինստիտուտ, և 1965 թվականին գերազանց գնահատականներով ավարտելով՝ մեկնում է ուսուցչական աշխատանքի Ալավերդի քաղաքի Սուրեն Սպանդարյանի անվան դպրոց, իսկ մեկ տարի անց, ընդունելով մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Կամո Ուդումյանի աշխատանքի հրավերը, վերադառնում է Երևան: Հետագայում նրանց աշխատանքային համագործակցությունը վերաճվում է մեծ բարեկամության, իսկ Բորիս Մակիչյանի համար սկսվում է աշխատանքային գործունեության նոր ու հետաքրքիր փուլ:

Աշխատելով Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի արհկոմի նախագահի պաշտոնում՝ Մակիյանը մեծ աշխատանք է տանում դասախոսների աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Այդ տարիներին նրա նախաձեռնությամբ ու ջանքերով կառուցվում են մի քանի կոոպերատիվ բնակելի շենքեր: Հետագա տարիները ևս բեղմնավոր էին Բորիս Մակիյանի համար: Ստանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա բարձրագույն հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտի կոչում: 1994-ի սեպտեմբերին Մակիյանը մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գևորգ Բաղդասարյանի կողմից ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի պաշտոնում աշխատելու հրավեր է ստանում, սակայն 1996 թվականին թողնում է աշխատանքը և հիմնադրում Հյուսիսային համալսարանը, որը Բորիս Մակիյանի բեղմնավոր կյանքի ամենահասուն պտուղն է:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ Բորիս Մակիյանը ակտիվ քաղաքացի էր, հասարակական գործիչ, մարդ, ով անտարբեր չէր կյանքի ոչ մի բնագավառի հանդեպ: Մայրաքաղաքի հոգսաշատ առօրյան ու ծանրաբեռնված աշխատանքը ոչ մի օր չհեռացրին նրան իր ակունքներից: Ինքը Լոռիում չէր, բայց Լոռին իր հետ էր ամենուր: 2008 թ.-ի մի խումբ լոռեցիների նախաձեռնությամբ հիմնադրվեց «Լոռվա ձոր» հայրենակցական միությունը, որի հիմնադիր նախագահը Բորիս Մակիյանն էր: Ուշագրավ է, որ Թումանյանին առնչվող յուրաքանչյուր միջոցառում Բորիս Մակիյանը համարում էր իր կենսագրության անբաժանելի մասը: Եվ պատահական չէ, որ 2009 թ. Փետրվարի 19-ին Հյուսիսային համալսարանում բացված «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնն այսօր արդեն դարձել է Բորիս Մակիյանի հիշատակի սենյակ:

Հյուսիսային համալսարանի հիմնադիր ռեկտոր Բորիս Մակիյանը ավերի մեջ պահեց ու փայփայեց իր տքնաջան աշխատանքի պտուղը, աճեցրեց ու դարձրեց պահանջված որակյալ բուհ՝ իրեն բնորոշ լավատեսությամբ: Երբեք չդադարեց ուղիներ փնտրել Հայաստանի կրթական համակարգը կատարելագործելու, բյուրեղացնելու, Հայաստանը տարածաշրջանային ժամանակակից գիտակրթական կենտրոն դարձնելու համար:

Բորիս Մակիյանն իր գործի նվիրյալն էր, ում բազմաթիվ ծրագրեր կյանքի են կոչվել՝ ի նպաստ Հայաստանի գիտակրթական ոլորտի կատարելագործման:

Այսպես են ծնվում մանկության երազները, հասունանում ու թև առնում՝ դառնալով իրական պատում՝ իրենց կյանք ու մարմին տվողի մասին: Իսկ իրականություն դարձած այդ երազանքների պտուղները երախտագիտությամբ վայլում է մեր օրերի երիտասարդ սերունդը՝ բարձրորակ կրթություն ստանալով Հյուսիսային համալսարանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սոցիոլոգիա

<i>Վալերի Միրզոյան</i>	Հովհաննես Թումանյանի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումները.....	8
----------------------------	---	---

<i>Արմեն Ճուղուրյան Սաթեն Ալավերդյան</i>	Ազգային արթնամտության թումանյանական բանաձևումները.....	35
--	---	----

<i>Անահիտ Մուկուչյան</i>	Ազգամիջյան բախումներն ու Հովհաննես Թումանյանը.....	45
------------------------------	---	----

<i>Աստղիկ Աբրահամյան Լուիզա Մկրտչյան</i>	Էկրանի Թումանյանը.....	53
--	------------------------	----

Բանասիրություն

<i>Անի Եղիազարյան</i>	Թումանյանը «հոգու հայրենիքի» որոնումի ճանապարհին.....	62
---------------------------	--	----

<i>Միլվա Հովհաննիսյան</i>	Գրական-փիլիսոփայական դիտումներ Հովհաննես Թումանյանի քառյակների շուրջ.....	72
-------------------------------	--	----

<i>Նինա Դալլաքյան</i>	Թումանյանական արահետներով.....	88
---------------------------	--------------------------------	----

Մանկավարժություն

<i>Նաիրուհի Սարգսյան Արուսյակ Կնյազյան</i>	Մանկավարժությունը Հովհաննես Թումանյանի մտքի գոհարներում.....	94
--	---	----

*Նունե
Մկրտչյան
Միրուշ
Հովսեփյան* «Լուսաբեր» դասագիրքը Հովհաննես Թումանյանի
մեկնաբանությամբ.....

*Նունե
Մկրտչյան
Բսկուհի
Պողոսյան* Հովհաննես Թումանյանը ժողովրդի կյանքում..... 110

Կրթություն

*Նունե
Մկրտչյան
Անահիտ
Ալեքսանյան* Ուսուցման և կրթության դերն ու նշանակությունն
ըստ Հովհաննես Թումանյանի..... 116

*Սուսաննա
Ավագյան
Լուսինե
Գևորգյան
Լիաննա
Գրիգորյան* «Զարի վերջը» բալլադի հոգեբանամանկավար-
ժական ազդեցությունը նախադարձական երեխա-
ների մտածողության վրա..... 122

Երիտասարդ հետազոտողի ամբիոն

*Անի
Թունյան* Հովհաննես Թումանյանի թարգմանական գրիչը.... 129

*Երախտագիտության խոսք.....*136

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսսփայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
 - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
 - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
2023 1 (11)

ЮСИСАПАЙЛ
НАУЧНЫЙ ЖУРНАЛ
2023 1 (11)

HYUSISAPAYL
SCIENTIFIC JOURNAL
2023 1 (11)

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորում՝ Ի. Մարուխյան

*Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
Հյուսիսային համալսարանի [www//northern.am](http://www.northern.am) պաշտոնական
կայքում:*

Չափսը՝ 60x84 ¹/₁₆
Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.
Տպաքանակ՝ 120
Տպագրված է Մեկնարկ ՍՊԸ-ում
Երևան-25, Արմավյան 41